ՀՈՎՀԱՆՆԵՍ
ՇԻՐԱԶ

ՀԱՏԸՆՏԻՐ

ԵՐԵՎԱՆ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

Հովհաննեսյան Գրիգոր

ԱՏԼԱՏԻՐ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

ԵՐԵՎԱՆ 1949

Կազմը, տիտղոսը և շմուց տիտղոսը
Նկարիչ Կ. ՏԻՐԱՏՈՒՐՅԱՆԻ

О. ШИРАЗ
ИЗБРАННОЕ
(На армянском языке)
Армгиз, Ереван, 1949

Հ. ՇԵՐԱՔ

Գործ՝ ժողովրդական նկ. Մ. ՍԱՐՅԱՆԻ

Կազմը, տիտուլը և շմուց տիտուլը
Նկարիչ Կ. ՏԻՐԱՏՈՒՐՅԱՆԻ

О. ШИРАЗ
ИЗБРАННОЕ
(На армянском языке)
Армгиз, Ереван, 1949

ԷՔՍՊՐՈՄՏ

Վ. Ի. Լենինին

Դու անմահ ես աշխարհով մեկ եվ արեվի պես ջահել,
Քեզ միշտ որպես պատվո պահակ հավերժությունն է
կանգնել...

1940 թ.

ԷՔՍՊՐՈՄՏ

Ի. Վ. Ստալինին

Քեզ արեվը պիտի լինի հաղթանակի շաղանակ,
Քանզի կուրծքդ մի երկինք է ֆո մեծ սրտով իմաստության...

1944 թ.

ԿԱՅՏԵՍԱՓԱՆ

Իմ պրի Տիգրան թոռ պիրտս Ճեղքեաց
Դիրքերդ լեռան գիրի Հարիրդս...

***

Ամենայն անգամ
Երբ Հայրենիքի մասին են խոսում,
Իմ միտն է գալիս առուն մեր դռան,
Որ մանկությանս հեքիաթն է ասում.
Իմ միտն է գալիս բարդիս մենավոր,
Եվ արագիլը՝ վրան դարնան ձյուն,
Եվ բլրի շուրթին գերեզմանն իմ հոր՝
Որպես քարացած անեծք աստծուն...
Եվ մեր խրճիթը բարդու տակ մենակ,
Ուր անուշ ծուխով օջախն էր վառվում,
Եվ օրորոցս՝ այն սուրբ ծխի տակ,
Որ այնպես քաղցր մայրս էր օրորում.
Եվ Արագածն է աչքիս մեջ գալիս,
Հեզ ու նազելի, մորս պես խանում,
Եվ այն աղավնիք, որ մանուկ բախտիս
Աստղն էին՝ երկինք ելած՝ որոնում...
Մեկ էլ մեր դռնից իր սկիզբն առած
Այն արահետն է միշտ, միտս գալիս,
Որ մի օր մանուկ ձեռքիցս բռնած՝
Ինձ տարավ դեպի կյանքն երազներիս,—
Տարավ դեպի վեր՝ բարձունքը խոսքի,
Դեպի խորհուրդը ազգերի համայն,
Դեպի Կրեմլի աստղերը ոսկի,
Որ ահա բախտիս աստղերը դարձան։

1945 թ.

ԿՇԵՌՔ

Մտքի օրոցքից երբ աշխարհ մտա՝
Աշխարհում՝ աշխարհ՝ մոր սերը գտա...

Հոնքերս՝ լծակն է իմ նժարի,
Աչքերս նրա զույգ թասերն արի,
Եվ կշռեցի մորս սերը սուրբ,
Որ ինչքան մեծ էր՝ այնքան խորն ու նուրբ.
Հիմալայն իբրև կշռաքար դրի՝
Վեր թռավ լեռը հետն իր նժարի.
Ծովերը դրի՝ վեր ելան կրկին,
Վար քաշեց մորս սերը սրբազին.
Աստղաբույլերը դրի կշռաքար,
Նորից մայրիկիս սերը քաշեց վար...

Քո սերն, իմ սիրած, քո սերն էլ դրի՝
Վեր ու վար արին նժար նժարի...

Բայց երբ անսահման իմ հայրենիքից
Մի բուռ հող դրի՝
Եկա՜վ համբուրե՜ց նժար նժարի...

1947 թ.

***

Հին աշխարհը չեմ տեսել
Ու ոչ մի բան չեմ հիշում
Ու չեմ նրան երազել
Իմ վշտերի մշուշում։

Բայց երբ նայում եմ խաղաղ
Մորս դեմքի դալուկին,
Ինձ թվում է, թե մի պաղ
Վիշտ է եղել աշխարհն հին։

Հին աշխարհը չեմ տեսել
Ու ոչ մի բան չեմ հիշում,
Բայց թողել է նա մի թել
Մորս աչքի մշուշում։

1935 թ.

***

Մենք խաղաղ էինք մեր լեռների պես.
Դուք հողմերի պես խուժեցի՛ք վայրագ։

Մենք ձեր դեմ ելանք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես ոռնացի՛ք վայրագ։

Բայց մենք հավե՞րժ ենք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես կկորչի՛ք վայրագ...

1941 թ

***

Օտար ափերի անգղները բիրտ
Ձարի տենչանքով կռնչում են դեռ.
Արծիվ դառնալու օրերն են, ի՛մ սիրտ,—
Թա՛փ տուր թևերդ, սլացի՛ր երթեր։

Եվ երբ չքանան ամպ ու փոթորիկ,
Արտույտի՞ երգը թող կախարդե քեզ.
Արտույտի երգո՞վ սլացիր երկինք,
Դու կարապի երգ չպիտի՞ երգես...

1942 թ.

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԶԱՅՆԸ

Ես բանաստեղծ եմ, հավերժի որդի,
Երկինքը մայրս է, երկիրը հայրս,
Ես գիտեմ լուսե լեզուն աստղերի,
Եվ արտույտների դայլայլ է ձայնս,—
Բայց ես, որ գրկել, շոյել ուզեցի
Որպես մանկանս՝ աշխարհը դալար,
Ես, որ սրտիս ա՜ջ ծովից խո՜ր լացի
Ուրիշի մի՛ շիթ արցունքի համար,
Ես, որ մրջյունը չարի ոտնատակ,
Ես, որ սիրո հետ մահվան դեմ ելա՝
Անմահությունը տենչալով կյանքի,
Ես՝ հողագնդի կտուրից ահա
Կանչում եմ ճիչով մայր ծիծեռնակի,
Որի ձագերին ցինն է մոտենում,
Կանչում եմ, գոչում՝ սո՛ւր մերկացրեք.
Եկել է մարդու ոսոխն ամեհի,—
Դուք նրա մահով կյանք խնկարկեցեք,—
Ես կհամբուրեմ շրթունքը մահի՝
Բայց նրան ներել՝ չեմ կարող երբեք։
Ո՜հ, նա ուզում էր տիեզերքն անհուն
Խեղդել խավարով այնքան ամեհի,
Որ արևն անգամ խարխափեր մթնում,
Եվ ես մի լուսե խորշ չգտնեի...
Բայց սիրտս զանգ է դառել տագնապի

Ու խիղճս նրա լեզվակը ոսկի՝
Եվ ես կանչում եմ, գոչում եմ՝ ելե՛ք,
Հե՜յ, ոտքի ելեք, ելե՛ք ամեհի
Հյուսի՜ս, արևե՜լք
Սլարշավ ելեք,—
Ես կհամբուրեմ ոտքերն իսկ մահի՝
Բայց չարին ներել՝ չե՛մ կարող երբեք,—

Ես, որ տխրեցի մահով մի ծաղկի,
Ես, որ մրջյունը չարի ոտնատակ,—
Ես մռնչում եմ՝ նա մեռնի՝ պիտի
Եվ հավե՜րժ մնա մահվան ոտքի տակ...

1911 թ.

***

Ա՜խ, եթե ընկնեմ օտար մի սրից
Ու սև ագռավը կռնչա վրաս,
Ամպե՛ր, վա՛ր իջեք մեր սուրբ սարերից
Ու լացե՛ք մորս արցունքը վրաս։

Ու եթե կարոտ իմ հայրենիքից
Օտար մի երկրում ընկնեմ անմուրազ,
Հողմե՛ր, հայրենի մեր սուրբ դաշտերից
Մի բուռ հո՞ղ բերեք, շաղ տվեք վրաս...

1942 թ.

ՏԱՐԵՐՔ

Օ՜, երկինք՝ պսակ հավիտենության,
Օ՜ աստղեր՝ զանգեր երկնի գմբեթի,
Արեգակ՝ օվկիան դու մայր զորության,
Դու լուսե ստինքն այս ամեզերքի.
Ծովեր՝ տարերքը միշտ ըմբոստության,
Լեռներ՝ եղջյուրներ դուք հողագնդի,
Եվ դուք անտառներ՝ վահաններ դարնան,
Եվ դուք ջրվեժներ՝ բաշեր բնության,
Մի՞թե չարի դեմ դեռ նիրհեք պիտի,—
Նա կուզե ձեզ էլ ոտնատակ անել,
Ադգերը խեղդել մի գերեզմանում,
Ձայրույթս մենակ չեմ կարող տանել,
Իմ մեջ վրեժի ծովն է ծառանում,—
Կույր աչքով կանցնեմ վիհերը մահվան,
Կույր հոգով ի՞նչպես լույսը վայելեմ,—
Նա կուզե փակել իմ հոգու ճամփան,
Նա կուզե ոգուս աչքերը հանել,
Թևերքս պոկել, թռիչքս բեկել,
Որ ես՝ բաց աչքով՝ լույսը՝ խարխափեմ,
Որ էլ չխորհեմ իսոհս մարդկային...
Օ՜հ, ներիր, երկինք, և թող սուրամ վե՞ր՝
Եվ կոչնահարե՞մ քո աստղերն համայն՝
Երբև ռազմի զանգե՞ր անհամար,
Թող զիլ զողանջեն և թող արթնանա՞ն

Թե մա՛րդ, թե տարե՛րք՝ ահե՛ղ ոստնեն վեր։
Ամբոխվե՛ն, խուժե՛ն չարի հանդիման...
Որ քնարերգե սիրտս կարևեր,—
Է՛յ հե՛յ մոլեգնիր, խռովք բնության,
Դո՛ւք, երկրի խորքում նիրհող լավաներ,
Ժայթքեցե՛ք, ժամն է ձեր ահագնության,
Դուք զորքերիս հետ խուժեք անտառներ,
Դո՛ւք բռունցք լեռներ, զարկեցեք նրան,
Օվկիաննե՛ր, բացեք անդունդնե՛ր ձեր,
Վիշապների պես կուլ տվեք նրան,—
Նզովքս նրան թող պատանք լինի
Եվ մոռացումը հավե՛րժ դեպեզման...

1912 թ.

***

Կռվի դաշտի մեջ ընկա վիրավոր,
Ռուս մի աղջիկ խոնարհվեց վրաս,
Եվ ապաքինվեց ասես վերքս խոր՝
Երբ բացեց կապույտ աչքերը վրաս՝
Թվաց թե բացվեց հեռվում՝ հեռավո՛ր
Իմ Հայաստանի երկի՛նքը վրաս...

1944 թ.

***

Իմ սուրբ հայրենի՜ք, դու սրտիս մեջ ես,
Դու սրտիս մեջ ես, ոչ լեզվիս վրա,
Իմ սրտի միջից՝ թե սիրտս ճեղքես՝
Դրոշիդ բոցը պիտի հուրհրաւ

Չեմ ուզում գոռալ իմ սիրո մասին,
Սակայն իմացիր, հայրենիք իմ մեծ,
Քեզ հարյուր տեղով խոցեց թշնամին,
Բայց հազար տեղով իմ սիրտը խոցվեց...

Ես ամբողջովին քոնն եմ, հայրենիք,
Եվ մոմի նման՝ ճամփեքիդ վրա՝
Քո փառքի համար թե մի՛ օր վառվեմ՝
Մոխրաբի՜ծ անդամ ինձնից չի՛ մնա...

1944 թ.

***

Գիշեր է կես, արթուն եմ ես, թափառում եմ նորից դրսում,
Նորից Կարմիր մեր Բանակի ոտնաձայնն է աշխարհ լսում,
Արշավում է հազարաթև և աստղերը թվում են թե
Արշավասույր նժույգների ոտքի կայծերն են արծաթե՝
Որ թռչում են մինչև երկինք և աստղացած հավերժանում,
Որ դարերին պատմեն, թե մենք ո՞նց ենք ահեղ բերդերն առնում,—

Ոնց ենք ահեղ Բեռլինն առել՝ աշխարհով մեկ հաղթանակած,
Եվ լուսինն է դարձել համայն տիեզերքի աչքը ապշած...

1945 թ.

ՄԵԾ ՍՏԱԼԻՆԻՆ

Դու սրտիս մեջ ու պատկերդ կախած ունեմ իմ սնարին,
Որպես հոլոս պատկերը սուրբ, որպես ոգի իմ քնարին,
Եվ շամբերից մեր կուսական կտրած սրինգն իմ եղեգնյա՝
Քեզ եմ երգում Զանգու դառած լեռների մեջ մեր բյուրակնյա։

Քեզ արևը պիտի լինի հաղթանակի շքանշան,
Քանզի կուրծքդ մի երկինք է քո մեծ սրտով իմաստության։

Բանակներդ արշավեցին Բեռլին տանող ճամփաներով,
Արյունահեղ կռվից ելան սարերի պես, բաց ճակատով,
Դու կոփեցիր նրանց ոգին, դու կոփեցիր սուրը նրանց,—
Քիչ են երկրի փառքերը քեզ, ով զորավար անգերազանց.

Քեզ արևը պիտի լինի հաղթանակի շքանշան,
Քանզի կուրծքդ մի երկինք է քո մեծ սրտով իմաստության։

Աշխարհն ահա մի աչք դարձած քեզ է նայում բյուրակնահույս,
Դու մեր գալիքն առավոտող հորիզոնն ես հազարալույս,
Խորտակված են մահախուճապ դալրբասները Բեռլինի գոռ,—
Զորքդ հաղթել, ներս է մտել, ինչպես գարունն ամենազոր.

Քեզ արևը պիտի լինի հաղթանակի շքանշան,
Քանզի կուրծքդ մի երկինք է քո մեծ սրտով իմաստության։

Ինձ հանեցիր քարի տակից, որպես աղբյուր ու ես ահա
Զանգու դառած քեզ եմ երգում աշխարհի մեջ այս բյուրակնյա,—
Դու հայրենիք տվիր հային, որ դրա՞խտ է աչքիս թվում,
Դու չե՞ս թողնի մեր Արարատ լեռն էլ պանդուխտ մնա հեռվում,—

Քեզ արևը պիտի լինի հաղթանակի շքանշան,
Դու աշխարհը ծիածանող մեր երկինքն ես իմաստության...

1944 թ.

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ

Դուք ո՞ր երկրից կգաք, հովեր,
Այսքան քնքուշ ու մեղմ այսքան,
Ո՞ր լեռներից կգաք հովեր,
Համբույրի պես քրոջական,
Այնքան մե՞ղմ եք, հեռվի հովեր,
Կարծես շունչն եք քնած մանկան։

Մեր լեռներից, հեռվի հովեր,
Համբո՞ւյր տարեք ձեր լեռներին,
Վարդերի բո՞ւյր տարեք, հովե՞ր,
Մեր դաշտերից, ձեր դաշտերին,—
Բայց թե մի օր, հեռվի հովեր,
Հողմե՛ր բերեք մեր լեռներին,—

Մեր ամպերը՝ մեր սարերից՝
Շա՛նթ կբերեն ձեր լեռներին,
Շա՛նթ կբերեն մեր լեռներից,
Մա՛հ կսփռեն ձեր դաշտերին,
Ձեր դաշտերին, ձեր լեռներին,
Ձեր աշխարհին, ձեր արևին...

1946 թ.

***

Կուզեմ ծաղկի պես բանել ձեր ափին,
Որ միշտ ձեզ նայեմ, հայրենի ջրեր,
Բայց աշնան ձեռքը կպոկի ծաղկին,
Էլ չեմ տեսնի ձեզ, հայրենի ջրեր,
Կուզեմ ձեր ափի սև ժայռը լինեմ,
Բայց նա չի զգում, հայրենի ջրեր,
Հո՞ղ պիտի դառնամ, որ հավի՞ժ անցնեք
Իմ սրտի միջով, հայրենի ջրեր...

1945 թ.

***

1.

Երևանի բերդի տակով՝
Աբովյանի երգի նման՝
Ժայռերի մեջ մոնչալով
Դու անցնում ես, իմ Հրազդան։

Ալիքներիդ ձեռքի վրա
Բարձր պահած ու զայրալից
Կարծես սիրտն ես տանում նրա՝
Գտած քո հին ժեռ ափերից։

Տար, ծովերի սիրտը ձգիր
Կրակ վերքը Աբովյանի՝
Կցամաքեն ծովերն անգամ
Հին ցավերով Հայաստանի...

2.

Վաղուց Մասիս սարը ժայթքել
Ու հանգել է վաղուց ահա,
Աբովյանի սիրտը ժայթքել
Ու չի հանգել ու չունի մահ։

1941 թ.

***

Ես եղեգն էի երեկ ձեր ափին,
Հավիտյա՛ն ջահել Հայրենի ջրեր,
Հիմա սրինգ եմ քաղաքի շրթին,
Հավիտյա՛ն ջահել Հայրենի ջրեր.—
Թերեք ձեր կարկաչն իմ ծարավ շուրթին,
Հավիտյա՛ն ջահել Հայրենի ջրեր...

1945 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՇՈԳԸ

Ես սիրում եմ ամառն ու շոգն արևավոր,
Շոգը, որ նման է գորովագութ մի մոր,
Որի ոսկե գրկում
Կանաչ կյանքն է աճում...

Ես սիրում եմ շոգը. ահա նրա պայծառ
Ճառճանչներով հյուսված անծիր օրորոցում
Մատաղ ու դեռ նիրհող այգեստաններն անծայր
Իրենց աստղաբողբոջ աչիկներն են բացում՝
Մկանի պես լցվում մեղրահյութով, գինով,
Դառնում ոսկեստինք հուռթի կուրծքը հողի՝
Ամփառում են շռայլ ծնունդը խաղողի...

Ես սիրում եմ շոգը, հակինթացած խաղող,
Դու խելահեղ շոգի հմայքն ես ամբարում,
Եվ ինձ՝ ողկույզներիդ անթիվ դավաթներով
Արևներից քամած գինիներն ես բերում,—
Օ՜, մեղրաշուրթ խաղող, դուստր արեգական,
Դու խենթացած շոգի ծնունդն ես իմաստուն,
Քանզի շոգիացած մեղր է շոգը ամռան,
Որ սառչում է աշնանն ու ողկույզի փոխվում...

Իմ շոգ ջահելություն, դու չես անցնի անհետ,
Ինչպես այս հրահև շոգը սիրաշրշյուն,

Ինչպես շոգերն ամռան, որ գգվանքով միշտ խենթ
Խոստանում են երկրիս ոսկետեսիլ աշուն...
Շոգն արևի կիրքն է, շոգն է, որ իր գինով
Իմաստավորում է խենթությունները ամռան,—
Ու թող շոգերն հորդեն, որ մարդկային խոհով
Բեղմնավորված՝ այս մայր դաշտերն արդասանան...

Ես սիրում եմ ամառն ու շոգն այս գիներբեր,
Որ քո կիրքն է, արև՜, մեծ կրքերի դու մայր,
Ես սիրում եմ շոգը, որ խենթ հորդում է դեռ,
Ու բերքերն է ծնում՝ հորդո՜ւմ դաշտ ու այգի,
Ու ողջ մեղրածովը, որ գալիս է կարծես՝
Քաղցրացնի բոլոր համբույրները կյանքի...

1936 թ.

***

Քամին ասաց մանուշակին
— Եկ ծով տանեմ քեզ այստեղից։
— Ես կմեռնեմ, ծաղիկն ասաց,
Թե ինձ պոկես իմ մայր հողից։

Չհավատաց քամին կարծես,
Ու չարացավ, պոկեց ծաղկին—
Բայց նույն պահին՝ իր ձեռքի մեջ
Մեռած տեսավ մանուշակին...

1942 թ.

***

Թող ձայնս աշխարհն, աստղերն իմանան՝
Որ թե պատահեր աղետն այն դժնի՝
Թե գետերն առնեն հետադարձ հոսանք,
Թե արեգակը երկնքից ընկնի,
Թե բախվեն ծովերն ու դառնան ցամաք,
Թե մոխրանալով աստղերը թափվեն,
Թե սնապատը զարհուրած՝ խոսի,
Թե խոր-վիրապի երախը սուզվեն
Հավերժ դահերը խրախտ Մասիսի,
Թե ողջ մահաբեր գիսավորները
Ջարկվեն հինավուրց այս հողագնդին,
Թե տիեզերքի սիրտն էլ դադարի,—
Դարձյալ մահ չի դա իմ հայրենիքին,—
Նա մայր թռչունն է փյունիկյան մոխրի,—
Հավերժությունն է նրան երազել՝
Նա հավերժության բարբառն է հյուսել...

1942 թ.

ԺՈՂՈՎՐԴԻՆ

Անց են կենում դարերն անթարթ,
Պոկում, տանում սարերն անթարթ,
Բայց դու ոչ քո մեջքն ես ճկում,
Ոչ մազերդ են սպիտակում,
Ոչ ակոսում ճակատդ սեգ,
Ոչ մթնում են աչքերդ արեգ,
Ոչ վարանում ձեռքդ բանուկ,
Ոչ ահ գիտես,
Ոչ մահ գիտես,
Եվ ժամանակն՝ հավերժ մանուկ՝
Իր խաղընկերն ընտրել է քեզ...
Դուք օվկիանններ մշտաալիք,
Վիշտն ու խինդը ձեզ խաղալիք։

1948 թ.

ՄԱՅՐԿԻՍ

Տայրն ժոշտուրդն իմ Հովհրեռտայր,
Սիրելս՝ ոդեի գոկ կ'ծուշվի գարձյալ...

***

Հովերն հարավի համբույրն են բերում,
Գարունն է գալիս, գոնները բացեք,
Հովե՛ր, հայրենի մեր սուրբ դաշտերում
Ես բացակա եմ, մորս գուրգուրեք։

Մա՞յրն է արժան ձեր համբույրներին,
Հովեր, վարդերի բույրն առեք, թռեք,—
Դուք էլ, աղբյուրներ, հյուսվեք դաշտերին՝
Մորս ոտքի տակ գարուններ փռեք։

Եվ դուք ծաղիկներ՝ շուրթերս դառած՝
Մայրս անցնելիս՝ ոտքերն համբուրեք։

1942 թ.

***

Երբ ես էլ մի չինչ պատանի դարձա,
Մայրս ինձ ասաց՝ արհեստի գնա,
Արհե՛ստ սովորիր, մի՛ լինիր նազուկ,
Արհեստն է մարդուն ոսկի բիլազուկ։

Ա՜խ, ի՜նչ իմանար մայրս այն օրին,
Եվ ի՜նչ գիտենար իմ միտքը մանուկ,
Որ դեռ չծնված՝ իմ սրտի թևին
Մայրս կապել էր ոսկի բիլազուկ...

1940 թ.

ՀՈՒՅՍ

Մի գերեզման տեսա ծաղկած մի դաշտում,
Ուր կռիվ էր եղել կյանքի ու մահվան,
Ընկել էր նա, բայց խորտակել թշնամուն,—
Տապանագիրն հոր պես օրհնում էր նրան։

Ու ես լցված՝ ծովից ելած ամպի պես
Լուռ հեռացա հառաչելով մոր նման,
Բայց անունդ, ո՛վ քաջ, երբեք չե՞մ տա ես,
Որ չկոտրեմ թեկուզ մի սիրտ մայրական,—

Թող հույս դառած՝ միշտ սպասի մայրդ քեզ,
Հույսի մի ծիլն արժե գալուստ մի գարնան...

1914 թ.

***

... Եվ տարիք անցան, բայց իր կտրիճին
Մտքից չհանեց մայրը մի վայրկյան,
Եվ հանգչող աչքը որդու ճամփեքին՝
Մի բուռ հող դարձավ սիրտը մայրական։

Բայց ամեն գարուն՝ մոր գերեզմանին
Երկու կապուտակ ծաղիկ են բացվում,
— Նրանք աչքերն են մոր կարոտագին,
Որ միշտ իր որդու ճամփեն են պահում...

1945 թ.

***

Մայրս ծերության ձորերն է իջնում,
Ա՜խ, էլ չի երթա սարը՝ բանջարի,
Բայց ահա եկել՝ նրան է կանչում
Գարունը նրա սիրած սարերի։

Երթամ սարերը իմ բույն Շիրակի,
Ալագյազ իջնեմ կռունկից առաջ,
Երթամ սարերը՝ ձյուն-ձնծաղիկի՝
Ձորերը բերեմ գարունը կանաչ։—

Երթամ սարերը, սարերի գրկից
Մի գարուն բերեմ դիրկը մայրիկիս,
Գարունն էլ անցնի, մայրիկիս գրկում
Գարո՞ւն կբերի ճիշը բալիկիս...

1940 թ.

ՄԱՅՐՆ ԸՆԴԵՆՄ ՄԱՀԻ...

Չինգիզ խանը չար և փառատոչոր,
Որին դարերը նզովում են դեռ,
Հեծած սևաթույր նժույգը իր հոր,
Առաջին անգամ երբ կռվի կելներ,
Կանչեց մորն, ասաց. «Օրհնի՛ր իմ ճամփան
Բա՞վ է խաղողի արյունը խմեմ,
Բավ է սրերս պատյանում մնան
Եվ հորս փառքը ժանգով սրողեն։—
Օրհնի՛ր հորս սուրն ու փառքիս ճամփան...»
Բայց մայրը խստույն ճակատը կնճռեց,
Որդու նժույգի ոտքերը ընկավ,
Եվ ապա որդու ոտքերը գրկեց,
Սրբեց արցունքը և այսպես ասավ...
— Հայրդ գինուց շատ արյուն է խմել,
Ես մայր եմ, ինչպե՞ս օրհնեմ քո ճամփան,
Մեր երդի վրա անեծք է ընկել,
Էլ մեղքս ինչպե՞ս օրհնի քո ճամփան։
Իջի՛ր քո ձիուց, դաշտե՞ր դնա,
Հո ոտք չի՞ դրել հողդ թշնամին.
Թող ջահել կյանքդ հարսներին մնա,
Թող որդուս մնան արևն ու գինին...».
Լալիս էր մայրը, մազերը պոկում,
Ոտքերը գրկում որդու նժույգի,
Եվ ապա որդու ոտքն էր համբուրում՝

Միայն թե որդին նժույգից իջնի...
Բայց որդին քաշեց սուրը պատյանից,
Ճոճեց իր ճամփեն կտրող մոր վրա,
Մի ձեռքով բռնեց ճերմակ մազերից
Եվ իսկույն կտրեց մոր մազերը նա,
Գցեց ոտքի տակ իր սև նժույգի...
Եվ կարծես սիրտը իր կրծքից պոկած՝
Աշխարհի ընդդեմ ելավ արշավի,—
Առաջին զոհը մոր մազերն արած...

1941 թ.

***

(Բալլադ)

Ասում են, իբրև, խարույկի վրա
Ջահել ըմբոստի մի սիրտ են այրել,
Դժվար թե սրան սիրտս հավատա։

Ասում են, իբրև մոխիրը նրա
Խարույկից հանել ու մորն են տարել,
Դժվար թե սրան սիրտս հավատա։

Մայրը լացել է այն մոխրի վրա,
Ու երբ արցունքն է ընկել այն մոխրին,
Կենդանացել է զավակը նրա.—

Օ՜, սրա՛ն մահն էլ պիտի հավատա...

1940 թ.

***

Մայրս ոչ մի ծիլ-ծաղիկ չի քաղում,
Մայրս մի ուրի՞շ սրտի արեգակ,
Եվ անց ու դարձին՝ մեծ սիրտն է դողում՝
Թե հանկարծ մի ծիլ չընկնի՞ ոտքի տակ...

— Մայր իմ, մի ծիլ տուր քո բարի սրտից՝
Աշխարհի դառը ծառը պատվաստեմ,
Թող մեռնի՛ չարը, որ բարի՛ն ծաղկի,
Մո՛ր պես քաղցրանա մարդը մարդու դեմ..

1947 թ.

***

Ամեն անգամ, երբ արևն է թիկնում սարի թավիշ բարձին,
Գյուղի ծայրին ես կսպասեմ նախիրների վերադարձին,
Որ միշտ հարբած դրախտային արոտների կանաչ գինով,
Մուժից ելնող անտառի պես հայտնվում են բառաչյունով։
Վերջալույսի ոսկեփոշին եղջյուրներին հանց ապարոշ՝
Ահա եկավ կաթնավարով ու գյուղ մտավ նախիրը գորշ։
Աղբյուրներից վերադարձող հեքիաթի սեգ հարսների պես,
Ճերմակ ու մեծ ստինքներով եկան կովերն հպարտ ու վեհ,
Ու տուն բերին կաթի փոխած ծաղկաբույրը մեր դաշտերի,
Ու լիրն առած լուսնի նման լիքն է կուրծքը ամեն կովի...
Եվ հսկելով երինջներին՝ կատակելով պողով ոսկյա՝
Ցուլն է գալիս ու ետևից նախրապան է գալիս հսկա։
Եվ կախվում է գյուղի վրա լուսինն հսկա ստինքի պես,
Որ գիշերվա անհուն տաշտն է կաթնալուսով լցնում կարծես...
Բայց... անհամբեր բառաչելով ու քանդելով հողը ճամփի,
Նախրից առաջ՝ մայր գոմե՞շն է միշտ հայտնվում նման ամպի,
Որ գալիս է գոռգոռալով, կարծես մահվան կապն է կտրել,
Կարծես փախել է հրդեհից. ո՛չ, նա ձագի՞ն է կարոտել...

1946 թ.

Սեր

Հասէ՛ մի թուշէ սէրս սրբարբեկ՝
Խնամէ որ սէրը Հաշքուոմ է մահէս...

***

Կարոտներս լամ ու թեթևանամ,
Ինչպես ամպերը անձրևից հետո։

Համբույրի կարոտ վարդերս բանամ,
Ինչպես գարունը անձրևից հետո։

Բացված վարդերով հեռու գիրկդ գամ,
Ինչպես արևը անձրևից հետո։

1940 թ.

***

Աչքերիդ համար՝ որ ցմահ տեսնեն,
Ես բոց աչքերով կռիվ գնացի,
Ձեռքերիդ համար, որ կյանքը գրկեն,
Ես զինված ձեռքով կռիվ գնացի...

Ինչ փույթ թե հիմա ես աչքեր չունեմ,
Երբ քո աչքերը պայծառ են նորից,
Երբ նայում ես ինձ, երբ ժպտում ես ինձ,
Երբ գրկում ես ինձ, փայփայում ես ինձ...

Ու երբ քո գարուն գրկում դյութական
Կբացվեն վաղը աչքերն իմ մանկան...

1915 թ.

ԱՂԱՎՆԻՆԵՐ

Ես հիշում եմ թե ինչպես կապույտի մեջ վաղորդյան
Ձեզ բաց էի միշտ թողնում, աղավնիներ մանկության,
Ճախրում էիք և ուրիշ աղավնիներ միշտ գերում,
Գերում էիք հիացքով ու ճախրանքով ինձ բերում.
Հիմա որտե՞ղ եք արդյոք, ո՞վ է արդյոք ձեզ դերել,
Երբ մանկության կտուրից ցած է հասակս ինձ բերել,
Աղավնիներ իմ սիրո, աղավնիներ իմ դարնան,
Հայտնվեցեք վերստին, սակայն իջեք այս անգամ
Այն կտուրին, ինձ անհայտ, որտեղ իմ բախտն է ծաղկում՝
Ա՜խ, չգիտեմ թե արդյոք ո՞րն է իմ աստղն աստղերում՝
Աղջիկների մեջ այսքան՝ ո՞րն է իմ բախտը ոսկի,
Ո՞րն է նման՝ սրբությա՞մբ՝ դեռ չքաղված մի հասկի,
Հայտնվեցեք իմ սիրո աղավնիներ՝ այս անգամ
Իջեք նրա կտուրին, որ հարս բերեմ ես նրան,—
Նրա՞ն, որին ցերեկն իսկ՝ որպես երազ եմ տեսնում,
Նրան, ով սյուն կդառնա տանիքի տակ իմ բախտի՝
Մանկության պես իմ անմեղ, ծերության պես իմաստուն...

1945 թ.

***

Արդեն ի՛մն ես, ի՛մն ես դու, ու սիրտս հաշտ է զարկում,
Իմ երազա՜ծ, իմ գտա՜ծ, իմ անստվե՜ր, անսովո՜ր,
Դու չկայիր ճամփեքիս, աստղի՞կ էիր երկնքում,
Որ երկրային իմ կրծքին ծաղիկ դարձար լուսավոր...

Որտե՞ղ էիր, որ այնքան թափառեցի սրտե-սիրտ,
Որտե՞ղ էիր, իմ բարի՛, իմ երազի՛ հանգրվան,
Սիրտս քեզնով քնքշացավ, դարձավ խորհուրդ ու ժպիտ,
Երբ սրբեցիր արցունքս քո հայացքով կուսական։

Գերվել էի թե հաճախ աղջիկներով ես այնքան՝
Ա՜խ, հավատա՛, նրանց մեջ սիրտս քե՛զ է որոնել,
Բայց չի գտել հրեղեն իմ երազի աղջկան,
Որ աչքերիդ, որ լեզվիդ, հոգուդ մեջ էր դարանել...

Էլ մահ չկա իմ սիրույն ու գլուխս քո գրկում՝
Անմահությանն եմ տիրել ու դու իշխիր տիրաբար,
Իշխիր քո մի համբույրով և՛ հովիտներն իմ ոգու,
Ե՛վ բարձունքներն իմ սրտի և՛ երազներն իմ անմար...

1947 թ.

***

Դու շրթունքներ ունես վարդի
Եվ աչիկներ գեղեցիկ,
Ատամնաշար ադամանդի
Եվ աչիկներ գեղեցիկ։
Այտեր ունես վարդ ու կաթի
Եվ աչիկներ գեղեցիկ,
Լույս պարանոց կույս կարապի
Եվ աչիկներ գեղեցիկ։
Մազեր ունես՝ գիշեր սաթի,
Եվ աչիկներ գեղեցիկ,
Գարնան հասակ, նազող բարդի,
Եվ աչիկներ գեղեցիկ։
Ավա՜ղ և՛ քար մի սիրտ ունես
Եվ... աչիկներ գեղեցիկ։

1940 թ.

***

Սրիտս՝ ալևոր կաղնու մեջ դրի,
Կռացած կաղնին նորից բողբո՜ջեց,
Բարձրացա՜վ, կանգնեց ընդդեմ հողմերի,
Եվ ջահելացած՝ նորի՜ց շառաչեց...

Եվ մատաղ սիրտս՝ ճախրանքի ծարավ
Ջառամյալ արծվի կրծքի տակ դրի.
Մեռնող արծիվը թև առավ-թռա՜վ
Որսի ետևից ջահել օրերի...

1943 թ.

***

Թե մահից հետո հող պիտի դառնամ
Թող դառնամ սիրո ճամփեքին մոտիկ,
Որ սիրո համար նորից աշխարհ գամ՝
Հողից դառնալով պայծառ մի ծաղիկ։
Եվ ինձ կքաղի պատանի մի նոր,
Կդնի կրծքին սիրած աղջկա,—
Եվ համբույրի մեջ նրանց բախտավոր՝
Կզգամ, որ սիրո համար մահ չկա՞՞՞...

1943 թ.

***

Խոշոր ու բիլ աչքերով
Աղջիկ էր նա մի փոքրիկ,
Դասընկերս մանկական.
Ա՜խ, նա էլ էր կարմրում՝
Երբ նստում էր ինձ մոտիկ,
Երբ ժպտայի ես նրան...

Բայց ուրիշին թե ժպտար՝
Սիրտս արագ կզարկեր՝
Կփախչեի դաշտերը,
Որտեղ նորից իմն էին
Դառած կապույտ ծաղիկներ
Նրա կապույտ աչքերը։

Հիմա տարիք են անցել,
Միտքս ու հոգիս թռել են,
Մինչև անհաս աստղերը,
Բայց... այստեղ էլ ինձ հետ են
Դառած կապույտ աստղիկներ,
Նրա կապույտ աչքերը։

1917 թ.

***

Աղավնիները ամեն առավոտ
Կալերի վրա ճախրում են անփույթ,
Կապույտ հեռուն է նրանց կախարդում՝
Թռչնում, տանում դաշտերը կապույտ։

Սիրտս նման էր կանաչ կալերին,
Բայց սրտիս կալից պաղ մի առավոտ
Իր թևին տալով թռավ աղավնիս՝
Մի փետուր թողած սրտիս կալի մոտ։

1935 թ

***

Այս մարմարե սարերն ի վար,
Այս մարմարե քարերն ի վար,
Դուն ո՞ւր կիջնես կարկաչելով,
Դուն ո՞ւր կերթաս յար կանչելով
Ո՞ւմ պարտեզը կերթաս, ի՛մ ջուր,
Իմ պզտիկ քուր,
Պատասխան տուր։

— Ես այս մարմար սարերն ի վար,
Այս մարմարե քարերն ի վար՝
Սեդ սարերի ախպերն եմ ես,
Կերթամ՝ իջնեմ յարիդ պարտեզ
Որ բերանով իր մանանա՝
Ինքը խմե՝ ջուրս հովանա...

1945 թ.

***

Ա՜խ, Համիրա՛մ շամբշոտաշուրթ,
Դու չիմացար, որ անհագուրդ
Սուրը սիրտ չի դերել կարող,
Սուրը սեր չի բերել կարող,
Թեկուզ արար աշխարհ դերի՝
Սուրը երբեք սեր չի բերի...

1913 թ.

***

Դեռ այնքան ջինջ են քո աչիկները,
Այնքան ջինջ ու խոր, այնքան կապույտ,
Ա՜խ, նրանց մե՛ջ են գարնանս օրերը...
Ու նորից սիրտս է դառնում արտույտ
Ու քեզ է թռչում՝ թողած եթերը,—
Աչերդ ճիշտ են, երկինքն է սուտ...

1941 թ.

***

Մի՞թե քեզնից հուշ մնաց միայն անունդ ընդունայն,—
Բայց անունիդ մեջ ամբողջ հասակն ունեմ քո դալար,
Անունդ վիշտ ու ժպիտ, անունդ շունչ, երգ ու ձայն,
Անունդ լոկ մի հնչյուն, բայց ինձ քնար բազմալար.
Անունիդ մեջ՝ նոր երկինք՝ աչքերդ ունեմ կապուտակ,
Անունիդ մեջ կշոյեմ գիշերը սև մազերիդ,
Անունիդ մեջ դու ցնորք ու ցնորքի մեջ դու կյանք,
Անունիդ մեջ կծագի նորալուսինը ճակտիդ,—
Եվ ատամներդ ադամանդ անունիդ մեջ կշողան,
Անունիդ մեջ ծիծաղում ու լալիս ես դու ինձ հետ,
Անունիդ մեջ շուրթերդ իմ շուրթերին կդողան,
Անունդ սեր ու սարսուռ և սպասում ակնդետ,—
Ինձ չի լքել անունդ, որ միրաժն է աչքերդ,
Որ տեսիլն է քո սիրո, որ կրակն է համբույրիդ,
Ինձ չի լքել երբևէ անունդ իբրև անմահ խոհ,—
Եվ քո հուշերն անշշուկ անունիդ մեջ իմն են միշտ,
Եվ անո՞ւնդ է ինձ շոյում, ինչպես ձեռներդ մի օր,
Ինչպես ձեռներդ, քո՛ւյր իմ, ինչպես ձեռներդ աղամնյակ,
Որ թռել են, բայց թողել անունն իրենց անհատակ...

Անունդ սեր ու շրշուն, անունդ երգ ու երազ,—
Անունդ ձեռք մայրական՝ հովա՞նի է միշտ վրաս...

1948 թ.

ԱՆՍՈՒՏՈՅՆԸ

թեև կորցրի տէր խեղճս մանկութիւնս,
բայց Հաւատար ոսկի մանկութիւնս գրպանս...

***

Տխուր-տրտում այն փողոցից, մրոտ խուցից ես ո՞ւր հասա,
Իմ մանկության բեռը թողած, այս մեծ գետին փրփուր հասա։

Որքանցի կամարներով հոնքը կիտած անցյալս դորշ՝
Որը օրերիս դալուկ ձեռքով՝ թե ետ կանչե՝ իզո՞ւր ասա։

Մանկությունս կորավ, որպես ջուր ծախողի կոտրած մի կուժ,—
Նոր աշխարհի դռանն հասած՝ նո՞ր բերիրանքի աղբյուրն հասա...

935 թ.

ԻՆՔՆԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Ասում են, թե դու արդեն բանաստեղծ ես բարձրագահ
Գիտունների հետ վիճում ու խփում ես թաս-թասի,
Բայց ո՞վ գիտե, թե ինչ էր երեկ կյանքդ անօգտ,
Երբ չծագած աստղ էիր մառախուղում երազի.
Ախ, ո՞վ գիտե, թե սարին դու դառներ ես արածել,
Ինքդ սոված մնացել դրախտների մեջ դարնան,
Ախ, ո՞վ գիտե, թե աչքիդ կժով ջուր ես դու ծախել,
Ինքդ ծարավ մնացել աղբյուրների մեջ դարնան.
Ախ, ո՞վ գիտե, թե մանուկ ձեռդ ես մեկնել գողության
Դեպի գրպանն ուրիշի ու... չես ներել ինքդ քեզ,
Ախ, ո՞վ գիտե, թե ինչու դալուկն ունես աշունի
Դեռ քո մատաղ այտերին... Ախ, ո՞վ գիտե, թե ինչպես
Հազար ու մի ոտքի տակ ընկած մանկությանդ հողից
Նլավ եղեգն հասակիդ, ու դու դարձար բանաստեղծ
Ու ծիածանդ հյուսեցիր մի կաթիլ շաղ ու շողից
Քո անցյալի արցունքի ու խնդության նորաստեղծ...

1946 թ.

ՀԻՆ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Մեկից մի սոխ, մեկից մի հաց գողանում
Գնում էինք Արփաչայը լողանում։

Սոված, ծարավ, բոկոտն ընկնում սար ու ձոր՝
Շրջում էինք անգիտությամբ բախտավոր։

Աշխարհն ասես սարի ետև վերջանում՝
Իջնող արևն իրեն հետ էր մեզ տանում...

Չգիտեինք ո՞վ էր ժպտում, ո՞վ լալիս,
Ո՞վ էր մեզ հաց, ո՞վ մեր աչքին լաց տալիս...

Չգիտեինք թե ո՞ւմ կուրծքն էր զարդարում
Ջնծաղիկը, որ մենք էինք միշտ բերում...

Չգիտեինք աշխարհն ինչ էր, մարդն ինչ էր,
Մենք դարդի մեջ՝ չգիտեինք դարդն ինչ էր...

Ա՜խ, դեռ մանուկ մենք ծերացած, գլխիկոր
Շրջում էինք՝ անգիտությամբ բախտավոր...

1943 թ.

***

Հե՜յ, կարկաչո՜ւլ առուներ,
Մանկությունս ո՞ւր տարաք,
Առած մի օր գիրկը ձեր՝
Ո՞ր ծովերի մեջ կորաք.
Ա՜խ, ե՛տ բերեք դուք նրան...
Բայց ինչո՞ւ եմ կանչում ետ,
Որ երգերս նորի՞ց լան
Այն թափառիկ մանկան հետ.
Որ, ա՜խ, նորի՞ց գլխիկոր
Ման դամ նոթի խեղճ ու լուռ,
Ոտաբոբիկ ու տկլոր՝
Նորի՞ց ընկնեմ դոնե-դուռ.
Նորի՞ց ահով՝ մի պատառ
Հաց դողանամ անցորդից,
Նորի՞ց ծեծեն, ու ես՝ գառ
Մայեմ մորս կարոտից.
Նորի՞ց բուքին դուրս մնամ,
Հագած մի հին ցնցոտի,
Նորի՞ց լացս քամուն տամ՝
Բախելով դուռն հարստի։
Կամ ջո՞ւր ծախեմ, ու լա՞մ դեռ
Լոկ արցո՞ւնքս տուն տանեմ,
Ա՜խ, ետ մի՛ք գա առվակնե՛ր,—
Որբ մանկությունն ի՞նչ անեմ...

1946 թ.

ՋՈՒՐ ԾԱԽՈՂԸ

Ձեռին բռնած կուժ մի պուճուր՝
Ջուր կծախեր, միշտ սառը ջուր,
Այն թուխ ու ժիր տղան պուճուր:

Եվ օրն ի բուն՝ մտած շուկա
Նրա ձայնն էր միշտ զողանջում,
Ծարավներին ջրի կանչում:

Ա՜խ, այդ ջրի ձայնը վկա,
Ես էլ էի այդպես կանչում,
Բայց իմ ձայնը չէր կարկաչում:

Խմում էին ու... փող չկա...
Դատակս էին գլխիս քաշում՝
Ծաղրի աչքով սիրտս մաշում:

Բայց... արցունքիս կուժն՝ էլ չկա՜,
Ու չի կանչում տղան պուճուր՝
— Է՜յ, հա՛ց տվեք՝ ջո՛ւր տամ, պաղ ջո՜ւր.

1938 թ.

***

Հոռս ճիշատակին՝
Գյումրեցի բոստանչի Թաքոսի

Կգար հայրս Շիրակի հովերի հետ իրիկվա,
Կշողշողար բահն ուսին՝ սարից ելնող լուսնի պես,
Կգար հայրս, կհիշեմ երազի պես երեկվա,—
Կարծես աշխարհն էր մտնում մեր խրճիթի դռնով ներս...

Կգար բոլոր Շիրակի բոստանների բույրերով,
Կշողշողար բահն ուսին՝ մեր տան ոսկի հույսի պես,
Եվ ինձ կառներ ուսերին ու խրճիթում զնգալով
Իմ թոթովանքն էր թռչում՝ հայրիկ ուսիդ բահն եմ ես...

Բոստաններից միշտ կգար՝ տուն բերելով բույրն հողի,
Ու ես գիրկը կընկնեի՝ կսուզվեի ողջ գիշեր
Համեմների մարգերը ու մարգերը թարխունի,
Մանուկ սիրտս հեքիաթի դրախտներում կշրջեր...

Կգար հայրս ու բույրով դաշտերը մեզ կբերեր,
Էլ չէի մորս հավատա թե, ա՜խ, չունենք մենք բոստան,
Թե ուրիշի ջրվորն էր ամպի նման հայրս ծեր,—
Կգար հայրս, կհիշեմ ու մանկան պես դեռ կուլամ...

1947 թ.

***

Մանուկ էինք ժիր ու խայտակ,
Ելնում էինք սարերը վեր,
Ու մեր բախտին դեռ անգիտակ՝
Խաղում էինք ուլերի պես։

Կռիվ էինք մղում խաղով
Հի՜ն, ավերակ բերդի գլխին,
Իջնում էինք ու ծիծաղով
Գրոհ տալիս թիթեռներին։

Ու երբ հոգնում էինք խաղից՝
Ընկնում պաղ գիրկն Արփաչայի՝
Լողում էինք աղմկալից,
Մինչև մթներ դաշտն ամայի։

Եվ անհագուրդ՝ գետից ելած
Մի հովվի հետ, բեկված ու հեզ,
Սրտներիս մեջ ասող ու երազ՝
Տուն կերթայինք դառների պես...

1945 թ.

ՆՈՐ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Թեև կորցրի մի խոզն մանկությունս,
Բայց հայտնաբերվի մանկությունս գտա ...

Դու աշխարհ ես գալիս ծաղիկների նման,—
Թե ծաղիկներն հազիվ մի գարուն են ապրում,
Դու անթառամ ծաղիկ՝ ծաղիկ ամեն գարնան,—
Քեզնով գարունները գալիս ու չեն գնում։

Ինչ կար իմ աչքերում՝ քո աչքերում չկա,
Քո աչքերում արև, քո աչքերում գարուն,—
Դու նո՞ր իմ մանկություն, սերունդներդ վկա՝
Քեզնով գարունները գալիս ու չեն գնում։

Ես մի Գիքոր էի, ես մի գառնիկ ախպեր՝
Վաղուց մորթիս պատռել՝ մորդ գիրկն եմ ընկնում,—
Քեզ մի մայր է ծնում, սնում՝ հազար մայրեր,
Քեզնով գարունները գալիս ու չեն գնում։

Օրոցքդ առաջին դուռն է անմահության,
Լեզուդ՝ գալիքների բանալին է զնգուն,
Մատաղ սերունդ, ինձ էլ հիշիր գեթ մի բերան,—
Քեզնով գարունները գալիս ու չեն գնում։

1948 թ.

***

Իմ Առաքելին

Իմ թիթե՛ռ բալիկ, դու աշխարհ եկար
Որ մանկությանս կարոտանքն առնեմ,
Որ նորի՛ց վազեմ դաշտերը դալար՝
Քո մեջ մանկացած՝ նորի՛ց կարկաչեմ.
Որ թիթեռներին,
Որ թռչնակներին,
Որ առվակներին իմ գիրկը կանչեմ
Որ նորից վազեմ դաշտերը դալար,
Քո մեջ մանկացած՝ նորի՛ց կարկաչեմ...

1945 թ.

***

Վարդերի մեջ, իմ բալիկ, դու ինձ մոռացիր,
Բայց թե փուշը խայթե քեզ, կանչիր, ես կգամ։

Արևի տակ, լույսի մեջ, դու ինձ մոռացիր,
Բայց թե մթնի քո ճամփեն, կանչիր, ես կգամ։

Ուր էլ լինեմ, կռվի մեջ, կամ թե հողի տակ՝
Երբ էլ ցավի մեջ ընկնես, ինձ կանչիր, կգամ...

1914 թ.

***

Դու ազնիվ կավի մի կտոր ես դեռ,
Իմ լուսե՛ մաքո՛ւր, իմ անգի՛ն մանկիկ,
Ու միշտ մի բան եմ բոլորանվեր
Խորհում քո մասին, իմ անգի՛ն բալիկ,
Թե բախտիդ համար կարենա՞մ պիտի,
Իբրև հայր, լինել այնպիսի բրուտ,
Որ կավից փոխվես գինու գավաթի
Եվ համբույրի պես անցնես շուրթե-շուրթ-
Եվ բարի խոսքով՝ գինով կենդանի,
Միշտ մարդկայինը դու համասփռես,
Եվ կյանքդ որպես անխառն գինի.
Աշխարհի շրթին դրած՝ սպառես...

1945 թ.

***

Ա՜խ, իմ բալիկ, կարոտել եմ, դիրկս ե՛կ,
Սիրտս գավաթ՝ կյանքս գինի՝ քեզ լինի,
Ես կուզեի յոթը գավաթ, ոչ թե մեկ,
Յոթն էլ թեկուզ ինձ ջուր տային, ոչ գինի,
Ես կուզեի յոթը որդի, ոչ թե մեկ,—
Քանզի տունը մեկ սյան վրա չի կանգնի...

1947 թ.

***

Այն տունը տուն չէ, որ աղմուկ չունի,
Ուր դեռ չի հնչել ծիծաղը մանկան,
Այն տունը, սիրտ իմ, որ մանուկ չունի՝
Լեզվակը պոկած զանգի է նման.

1947 թ.

***

Ա՜խ, իմ երգերից ամենաջինջը
Անգին մանկիկն է իմ սուրբ գրկի.
Հազար երգ արժե նրա մի ճիչը՝
Նա է երգ-երգոցն իմ երգերի...

1941 թ.

ԺԱՌԱՆԳ

Սրիկա է նա ով հայր է լինում...
(Աբու Լալա Մահաջուց)

Կարոտած, հոգնած ու հոգեխռով տուն վերադարձիս՝
Որդիս հույսի պես իմ գիրկն է ընկնում,
Եվ իսկույն հորս իմաստուն խոսքն է իմ միտքը գալիս՝
— Բախտավո՞ր է նա, ով հա՞յր է լինում...

Կարոտիս ամպը՝ լոկ մի համբույրով ցրում է որդիս,
Բացվում է սիրտս ու թեթևանում,
Որդուս ժպիտով դրախտ է դառնում աշխարհը աչքիս,—
Երջանի՞կ է նա, ով հա՞յր է լինում։

Խաղում ու կարծես միշտ ետ է բերում մանկությունս վառ՝
Խաղընկերներով որդիս զվարթուն,—
Նրանք առվակներ՝ շուրջս կարկաչող, ես՝ ալիերին ծառ,
Երանի՞ նրան, ով հա՞յր է լինում։

Ու մայրամուտիս, երբ ես էլ իջա ձորը ծերության,
Հոգս ներխուժեց հին ոսոխն արթուն,—
Բայց ելա՞վ որդիս վագրենամռունչ, դա՛ւրս վանեց նրան,
— Սրիկա՞ է նա, ով հայր չի լինում...

1942 թ.

ԿԱՅԵՆԱՊԱՐԶ

Սէր Հայրենի՛ք քարի վրա
Լեռներու կիրճերուն Հովիտներ եւ կիրթք...

ՊԱՆԴՈՒԽՏԻ ԵՐԳԸ

Երանի ձեզ, զմրուխտ սարեր,
Որ չեք տեսնի պանդուխտ օրեր։

Ես այն վայրի մասրին էի,
Որ ժայռերի շրթին բսած՝
Ծաղկած քույրն էր սեգ սարերի,
Սարերի ձյան ջրով հասած։
Հարբած բույրով վարդիս գարնան՝
Եկան, ելան ինձ պոկեցին,
Պոկեցին ու պանդուխտ տարան,
Տարան բախչի մեջ տնկեցին,
Բայց չափարի մեջ չորացա,
Դարձա մի բուռ դեղնած աշուն,
Լեզուն կտրած մի հավք դարձա,
Էլ չտեսա սարերի ձյուն.

Հե՛յ, ձիավո՛ր հովեր, ո՞ւր եք,
Հե՛յ, թևավո՛ր հովեր, ո՞ւր եք,
Իջե՛ք, հովե՛ր մեր սարերի,
Ինձ այս ցավից պոկե՛ք, տարե՛ք։
Տունկս դրեք ծո՛ցը ժայռի,
Մեր սարերի ձնո՛վ ջրեք։
Էլի ժայռից ծիլ կուտամ ես,
Վարդ կբացվի մեռած սրտես,
Էլի վայրի բույրը նրա
Սար ու դաշտեր կխնկարկի,
Ա՜խ, հայրենի քարի վրա
Լեզուն կտրած հավքն էլ կերգի...

1946 թ.

***

Զյունն էլի հալվեց ու հովիտներում
Իմ գարնան ջրերն էլի խենթացան,
Էլի խենթացան, ու սրտիս հովտում
Գարնան տենչանքներս էլի խենթացան,
Բայց պաղ մնացին Մասիսներն հեռվում,
Ավա՜ղ, դեռ այնտեղ գարուններ չկան...

1947 թ.

ՊԱՆԴՈՒԽՏ ՀԱՅԸ

Թափառում ու թախծում էի
Հեռավոր Գանգեսի ափին,
Բայց հոգիս իմ հուսի ափին՝
Ճախրում է Արազի ափին։

Թխավարս մի աղջիկ տեսա,
Աչքերը սևորակ էին,
Սևորակ, սև լճակ էին,
Հոնքերն ամպի տակ էին։

Նա օտար ափերի վրա
Երբ հետս խոսեց հայերեն,
Թվաց, թե մայրս մեղմորեն
Օրորեց օրոցքս նորեն...

Թվաց, թե մայրիկիս տեսա,
Ու տեսա Մասիսն իմ հեռու,
Մասիսն իմ ու Սիսն իմ հեռու։
Արազն իմ, ազիզն իմ հեռու։

1945 թ.

ԷՔՍՊՐՈՄՏ

Դու երազիս պես բարձր ու անարատ՝
Ինձ այսքան մոտիկ և այսքան հեռու.
Հայացքս է սառել, ձյուն դառել վրադ՝
Ինձ այսքան մոտիկ և այսքան հեռու.

Մի՞թե շա՞տ պիտի մնաս, Արա՜րա՜տ,
Ինձ այսքան մոտիկ և այսքան հեռո՜ւ՜..

1948 թ.

***

Դյուցազն Բաղրամյանին

I

Քո օրորանն այն է, ուր որ
Հողմերից է լսում օրոր
Արծվաձայնն իր քարափին,
Ուր ձյունների թագն է արփին։
Ուր վիշապ է մութն՝ անդնդում,
Ուր որ մահիկն է զարգանդում...
Ուր կուրծք տված ամպ ու շանթին՝
Լճակներ կան գագաթներին,
Որ քո հայոց հարսների պես
Ամպի քողից նայում են քեզ...
Ուր գետերից հրեղեն ձին
Ծառս է լինում լուսարացին...
Ուր ժայռերից վարդ է կաթում,
Բայց ուր կայծակն է թրատում
Կաղնիները լեռան վրա,
Ուր անտառն է լեռանց զրահ։
Ուր մեղեդով մայրաբերան
Որոտանն էր քեզ օրորան,
Ուր մանուկդ՝ մութ անտառում
Վագրի բերանն էր պատառում...

ԴԵՊԻ ԲՆՕՐԱՆ

Գետեր են գալիս իրար խառնվում,
Խառնվում իրար ու ծով են դառնում,
Եվ այդպես բոլոր օտար ափերից
Վթար ծովերից,
Մթար դաշտերից,
Քար ապատներից,
Անապատներից,
Աշխարհի բոլոր, բոլոր կողմերից՝
Ծեծված աշխարհի բոլոր հողմերից
Ելնում ու քեզ են գալիս խուռներամ
Քարավանները քո թափառական՝
Թողած անեծքի գիշերներն անտուն
Եվ հայ պանդուխտի կանթեղ լուսընկան.
Գալիս են դեպի դաշտերը քո ծով՝
Լեռներիդ նման խարիսխ ձգելու,
Եվ էլ չի հայ մեջքն հայ երկի լացով
Օտար դեռերին կամուրջ դառնալու...
Եվ խոսանում ես երկրում հայրենի
Իրար մեջք դարձող քո որդիներով,
Քանզի անտառը որքան խիտ լինի՝
Այնքան չեն անցնի հողմերն իր միջով...
Ու դու հին վերքից
Դառած սիրո երգ
Դեռ ավետում ես՝ ի լուր աշխարհի,

Թե Հոկտեմբերյան թնդյունով բացվեց
Առաջին օրը քո ոսկեդարի,—
Թե հայոց ազգն էլ ահա բռունցքվեց,
Ու բարձրանում է սանդուխքն աստղերի
Դեպի երազը, որ կյանքի փոխվեց,
Դեպի կատարներն իր երազների...

1947 թ.

***

1.

— Ո՞ւր է, բաբո, մեր Հայրենիք.
— Էն, որ ունի բանձր երկինք,
Էն, որ ունի կարմիր արև՝
Յուր կապուտակ գլխի վերև.
Էն, որ ունի մեջ աստղերուն
Լեռն Ալագյազ՝ ձյունը գլխուն՝
Հա՜ կկաթն ամեռ-դարուն.
Էն, որ տեսքով իր Սևանի
Մաղերն արձակ ու գեղանի
Նստած Հարսի կնմանի.
Էն, որ ունի աշխարհի թագ՝
Քանց թագավոր՝ Մասիս ճերմակ,
Ճերմակ Մասիս՝ սիրտը մոմուռ,
Գլուխը վեր՝ դրախտի դուռ.
Էն, որ ունի Մասիսն ի վար
Հին-հին բերդեր, վանքեր մթար,
Որ ավերակ, բայց դեռ դարեր
Լուռ կաղոթեն երկինքն ի վեր.
Էն, որ ունի Արազ, տղմուտ
Եվ ափերը մամռոտ ու մութ
Գերեզմաններն են պապերուդ...
— Ո՞ւր է՝ տղա մեր Հայրենիք,
— Էն որ ունի բարձր երկինք,

Էն, որ արև կհուրհուրա՝
Իլիչի աչքն է մեզ վրա,
Էն, որ Ղազբեկն ու Արագած
Արտերու մեջ ախպեր կանգնած՝
Ձեռ կզանեն գինով թասին
Ու կձենեն ծեր Մասիսին
Թե, հե՞յ, բա՛ռ, ե՞ր ես մենակ
Պանդուխտ մնում ամպերու տակ...

1940 թ.

ՊԱՐԱՆԱՍՊԻՏ

"Ի թարմանալիքը դուն ես չէ՞ մեռեալ...

***

Ձյունը լալիս է, ձմեռն է մեռնում,
Ջյան անցած ճամփով, զվարթ ու անվիշտ,
Գարունը գալիս աշխարհն է բռնում։

Երանի՜ մեռնող ձյուներին, որ միշտ
Ետևից կանաչ գարո՜ւն են թողնում...

1940 թ.

ՎԱՅՐԷՋՔ

Անսալով ահա իմ հոգու ձայնին,
Որ ամեն քայլիս նույնն էր շշնջում,
Մենակությունս թողած լեռներին,
Իմ լույս դանձերով աշխարհ եմ իջնում,
Ու թող վայրէջքս իմաստուն լինի,
Ես կիջնեմ ինչպես ձյունները լեռան,
Կհալվե՞մ, կիջնե՞մ...
Լավ է իմ ճամփին
Սպիտակ պահեմ ջաղացի ճամփան,
Քան թե ձյուն մնամ մենության ժայռին,
Իսկ կյանքի հովտում ծարավեն նրան...
— Օ՜, սիրտ իմ, իջի՛ր, սո՛ւրբ է այս ճամփեդ՝
Քանզի ինչ պահես՝ հենց ա՜յն է կորած,
Ինչ տաս աշխարհին՝ այն քո՞նն է հավետ—
Քոնն է դարունը՝ ձյուներից ծնված...

1946 թ.

ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏ

Մանուշակներ ոտքերիս ու շուշաններ ձեռքերիս
Ու վարդերը այտերիս ու գարունը կրծքիս տակ,
Ու երկինքը հոգուս մեջ ու արևը աչքերիս
Ու աղբյուրները լեզվիս՝ սարից իջա ես քաղաք...
Ու քայլեցի խայտալով ու շաղ տալով մայթերին
Մանուշակներ ու վարդեր ու շուշաններ ձյունաթույր,
Ու մարդիկ ինձ տեսնելով՝ իրենց հոգնած աչքերին
Տեսան ուրիշ մի աշխարհ, գարուն տեսան նորաբույր։
— Ի՞նչ թարմություն, ասացին, ի՞նչ թարմություն, ու բացի
Լուսամուտներն իմ առջև ու ես իմ սիրտը բացել
Անցնում էի երգելով ու շաղ տալով մայթերին
Մանուշակներ ու վարդեր ու հասմիկներ հոգեթով,
Կարծես մի ողջ բնություն մի պատանի Լր դարձել
Քաղաք իջել լեռներից, կանցներ զմրուխտ հեքիաթով...

1946 թ.

***

Գարունն արևով ժպտաց ամենքին,
Բացվեցին բոլոր դռները դարնան,—
Իմ դուռն էլ խուժեց գարունը կրկին
Բայց սիրտս այսպես ողջունեց նրան։—

— Գարո՛ւն, արևդ տա՛ր աշխարհներին,
Ինձ մի մանուշա՛կ թող մնա միայն...

1940 թ.

ՃԱՆԱՊԱՐՀՍ՝ ԴԵՊԻ ԾՈՎ...

Մանուկ ոգիդ կախարդվեց հովիտներին հեռավոր,
Հեղեղի պես իջար ցած գարնանագեղ լեռներից,
Հեղեղի պես իջար ցած հազարագոչ ու պղտոր՝
Խոտեր պոկած ու քարեր, վարդեր պոկած քո ճամփից,
Տիղմ ու ոսկի հույզերով հեղեղի պես իջար ցած՝
Քո կարոտած հեքիաթի հովիտները մտնելով,
Ուր այս կյանքի դարունքվա հասակը նոր բողբոջած
Քեզ կանչում էր մորդ պես, ճամփիդ կանգնած լույսերով,
Ու դու իջար՝ հեղեղված երազներով ու սիրով,
Ճամփաներիդ խայտալով, համբուրելով հող ու քար,
Մերթ իմաստուն ու մերթ խենթ, ու ճամփեքիդ պարզելով
Գրկած գանձերդ ոսկի, տիղմը թողած՝ դու անցար,
Հանար հավերժ կարկաչով ու մտնում ես արդեն ծով,
Որպես աղբյուր, որ ծնվեց հեղեղներից այն խելառ։

1945 թ.

***

Ժայռից ջրվեժը փշրվում է ցած՝
Անդնդում մահով կապում ծիածան...
— Քանի որ կյանքս մի վայրկյան է լոկ
Եվ իմ դեմ աշխարհն՝ հավիտենակա՞ն,
Մի բան է տենչում սիրտս անամոք՝
Թեկուզ մի վայրկյան
Լիներ ծիածան,
Որ ծայրե ի ծայր՝ աշխարհը գրկե՞ր,
Ու գեղեցկությա՞մբ աշխարհը լցներ,
Թեկո՞ւզ մի՞ վայրկյան...
Թեկո՞ւզ մի վայրկյան,

1945 թ.

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՍԵՐ

Հորդ են գետերն այս գարնան, խենթ են գետերն այս գարնան,
Ու գետերի պես գարնան՝ իմ քնարը խենթ է դեռ,
Ու լարերը երգ են դեռ այս գետերի պես գարնան,
Սրտիս հեղեղն է ելնում ու ծածկում է ձոր ու լեռ։
Այս լեռներն են երկնային ակունքները իմ երգի,
Եվ աչքերդ, որ վրաս երկնքի պես կբացվեն,
Երգ եմ, ինչքան ինձ այրես, երգ է կրակն իմ վերքի,
Հողեղեն եմ առանց երգ, ես երգով եմ հրեղեն։
Ու քեզ համար՝ իմ սիրով՝ հորդ են գետերն այս գարնան,
Ու գետերի պես գարնան իմ քնարը խենթ է միշտ,
Հազար գունձեր եմ բերում քեզ գետերի պես գարնան՝
Հազար ու մի դիշերվա երազներս մարգարիտ,—
Դեպի քո սիրտն է հավերժ ծիածանված իմ ճամփան՝
Հազար ու մի դանձերով պիտի փարվե՞մ ոտքերիդ...

1946 թ.

***

Իմ բարի՜, իմ ջե՛րմ, հարազա՛տ իմ մայր,
Իմ բարի՛ արև, ես քե՛զ եմ սիրում,
Քե՛զ եմ երազել կարոտով անծայր
Իմ խեղճ մանկության անլույս օրերում։

Դու անհուն բաժակ, իմ անհաս կարոտ,
Ես վայրկյան, իսկ դու՝ հավիտյան ճամփորդ։

1935 թ.

***

Երբ միշտ սիրատարփ գարունն է գալիս,
Երբ հողն արևին իր կուրծքն է բացում,
Երբ բողբոջում են վարդեր ու նարգիզ,
Երբ խնձորենիք ծաղկում են, ցնծում,
Երբ խենթ ջրերն են ընկնում իրար գիրկ,
Երբ համբուրվում են երկիր ու երկինք,—
Ես էլ նրանց հետ, չգիտեմ ինչու՝
Ուզում եմ մեկին ծաղիկներ նետել,
Չքնաղ է թվում աչքիս ամեն բան,—
Ու կուզեմ կրծքիս սեղմել կյանքը ողջ,—
— Օ՜, սիրտ իմ, ա՛յս է խորհուրդը գարնան,
Ա՜յս է աշխարհը միշտ պահում բողբոջ...

1940 թ.

***

Տուն վերադարձան հնձվորներն հանդից
Մայրամուտ իջնող արևի նման,
Ծագեց լուսինը մանուշակ սարից,
Ինձ մենակ դուռավ դաշտում անսահման։

Չե՛մ դառնա ես տուն, ո՞ւմ թողնեմ դաշտում
Արցունքն ու խինդը իմ քույր ջրերի.
Գիշերահավի մեղեդին խնդուն,
Գիրկն ու համբույրը կույս ծաղիկների։

Ո՞ւմ թողնեմ երազն անուշ դաշտերի,
Մեղմիկ թռչանքը խորհող լռության,
Ո՞ւմ թողնեմ ղեփյուռն այս հովիտների,—
Ա՜խ, ո՞ւմ են այրել աղջիկներն այնքան։

Լռությունն ինչպե՞ս թողնեմ մեն-մենակ,
Ո՞ւմ հետ մտորի լռությունն անհուն,
Լռությունն ինքն էլ շարժում է ու կյանք,
Լռության մեջ է երազը ծնվում...

Գիշերն ո՞ւմ հարսը դառնա լուսնյակով,
Գաղտնիքն ո՞ւմ հայտնեն կույս աստղերն իրենց,
Թե աշխարհի հետ դու էլ գիշերով
Տուն վերադառնաս, անքուն բանաստեղծ...

1940 թ.

ԹԱԳԱԴՐՈՒՄ

Հոգիս արթնացավ հարավի բույրից,
Ինձ է դուրս կանչում զեփյուռը նրա,
Ձյունն էլ արևի ջահել համբույրից
Ուրախ լալիս է դաշտերի վրա։
Ելնե՞մ, ծաղկումն է ձնծաղիկների.
Ձյունից ինձ նայող աչերն համբուրեմ,
Գնամ ետևից ծիծեռնակների,
Նրանց հետ ետ գամ՝ գարունը բերեմ,
Բարձրանամ կապույտ զահը լեռների,
Արևն իբրև թագ իմ գլխին առնեմ,
Հագնեմ ծիրանին արշալույսների,
Գարնան թագավոր ինձ թագադրեմ,
Եվ հրովարտակ արձակեմ մի խիստ,
Որ աղբյուրները հավերժ կարկաչեն,
Որ ծաղկեն լեռներն իմ արևանիստ,
Որ ծով դաշտերը հավերժ կանաչեն,
Որ գարունները գան ու չգնան,
Որ հավերժանան զմրուխտ դրախտով,
Որ բեկվի իմ դեմ խորհուրդը մահվան,
Որ մարդը ցնծա հավերժի բախտով։
Եվ ես երջանիկ կլինեմ այնժամ,
Եվ գուցե այնժամ ես մահը սիրեմ,
Երբ անմահ լինեմ, երբ հավերժանամ,
Երբ գարունները ողջ թագավորեմ...

1940 թ.

ՋԱՀԵԼՈՒԹՅԱՆ ԵՐԳԸ

Աչքերիս մեջ գարնան օրեր,
Ճամփիս՝ բախտիս սարերն ի վեր,
Ելնում եմ ես քարերն ի վեր,
Ելնում եմ ես սարերն ի վեր,
Քարե՜ր, սարե՜ր, դարե՜րն ի վեր։

Բախտս աստղերն են վեր պահել,
Ջահե՛լ եմ ես ու ձի՛ս ջահել,
Չե՛մ նկատում քարեր ճամփիս,
Չե՛մ նկատում սարեր ճամփիս,
Քարե՜ր, սարե՜ր, դարե՜ր ճամփիս։

Շանթն է բեկվում ճակտիս վրա,
Մահ՝ չգիտեմ՝ կա՞, թե չկա,
Ելնո՜ւմ եմ ես ահերն ի վեր,
Ելնո՜ւմ եմ ես մահերն ի վեր,
Ահե՜ր, մահե՜ր, դահե՜րն ի վեր։

Աչքերիս մեջ գարնան օրեր,
Ճամփես դեպի աստղերն անմեռ՝
Ինձ ելնելու քարեր կան դեռ,
Ինձ ելնելու սարեր կան դեռ,
Քարե՜ր, սարե՜ր, դարե՜ր կան դեռ...

1945 թ.

ՏԱՂԵՐ

Եւ նոր ոգեւորութեամբ գրուածներ

***

Ասում են թե մեռածն հողից
Դուրս է գալիս ծաղիկ դառած,
Կյանքում քեզ շատ որոնեցի՝
Արցունքների շաղիկ դառած,
Բայց թե ես էլ դուրս գամ հողից՝
Ինձ կրկնակի մահ կլինի՝
Թե չտեսնեմ, իմ նազելի,
Քեզ էլ կողքիս՝ ծաղի՛կ դառած...

1947 թ.

***

Հոսում է իմ Գանգեսն հանդարտ...
Հ. Հայնե

Հանգիստ չէ Գանգեսն հեռավոր, հեծում է իր մառ ափերին,
Իր երկրի հերարձակ մոր պես՝ գլուխն է քարե քար զարկում,
Ախ, նորից հողմերը նրա հառաչյունն իմ հոգուն բերին,—
Հանգիստ չէ Գանգեսն հեռավոր, աշխարհով մեկ է հեկեկում...
Հեծում են ու ծառս են լինում ջրերը նրա արտասվող,
Հողմակոծ անապատն անցնող առյուծի բաշերի նման,
Եվ սիրտ է կտրատում ողբը՝ ինձ հեռու ափերից հասնող,
Հանգիստ չէ Գանգեսն ահավոր, նա բողոք ունի անսահման,
Նա քեզ է երազում, Վոլգա, նա մռունչ ունի խելահեղ,
Հանգիստ չէ Գանգեսն աղեկեզ, հանգիստ չեն գետերն հեռավոր՝
Ախ, նրանք դիերն են տանում սովատանջ որդոց վիրավոր,
Ու ճամփին դեռ ծառս են լինում՝ որդոցը փնտրում գերեզման,—
Հանգիստ չէ Գանգեսն հեռավոր, հանգիստ չէ և իմ սիրտն այստեղ,
Որ անտուն դիեր են տանում այսօր էլ սուրբ գետերն այնտեղ...

1946 թ.

ՀԱՅՐԵՆԻՔ ԵՎ ՍԵՐ

Երկրիս վրա մարդ ու ծաղիկ արեգական շողն են ընկել,
Սեր են առնում, սեր են տալիս, ուրախության լողն են ընկել,
Լուսինն անգամ շուտ է ծագում՝ աստղերն ուսին օղ են ընկել,
Արի ծաղկենք, իմ սիրեկան, մենք էլ սիրո դողն ենք ընկել...

Սիրտս առա ու ման եկա հազար երկիր, հազար մի հեղ,
Բայց չգտա հայրենիքից անուշ մի հող, անուշ մի տեղ,
Ուր բացվում է ձմեռ գարուն ազատ սիրո վարդը շքեղ,—
Արի ծաղկենք, իմ սիրեկան, սիրո ազատ հողն ենք ընկել։

Երկնքի պես մաքուր սերը երբեք ոսկի գահ չի սիրել,
Նոր կյանք մտած մանուկի պես՝ ոչ մի վայրկյան մահ չի սիրել,
Սիրող սիրտը՝ սիրող սրտից, սիրուց բացի՝ շահ չի սիրել,—
Արի ծաղկենք, իմ սիրեկան կյանքի արևկողն ենք ընկել։

Նշան սիրուդ՝ եթե երկրիս ծաղիկներ տաս՝ լավ կլինի,
Սիրո որսորդ սրտիս համար համբույրդ հազար ավ կլինի,
Նոր քո սերը ծով կդառնա, սիրտս ոսկի նավ կլինի,—
Արի ծաղկենք, իմ սիրեկան, հարսանիքի քողն ենք ընկել։

1939 թ.

***

Ոտքը դարնան դրախտի մեջ
Սարն Արարատ՝ գլուխը ձյուն՝
Բարձր բռնած՝ ժպտում է պերճ,
Ինչքան բարձր, էնքան սիրուն։

Դու էլ, սիրտ իմ, քո երգերով
Բարձր եղիր և իմաստուն,
Բարձր մնա երազներով՝
Ինչքան բարձր, էնքան սիրուն։

Բայց գլուխդ, գլուխդ միշտ
Թե ալեհեր թե իմաստուն՝
Ցածը պահիր՝ ամենքի դեմ,
Ինչքան ցածր, էնքան սիրուն...

1947 թ

***

Ես էլ աշխարհ տաղով եկա... Բայց դու իմ սար Սայաթ-Նովա,
Երեք շուրթեր իրար բերող Կովկասի յար Սայաթ-Նովա,
Իմ Կովկասի մարգարտաշար լեռնապարը շող մատանի՝
Դու մատանու անգին քարը, դու երկնաբար Սայաթ-Նովա։

Ա՜խ, թե գայիր՝ քեզ կտայինք՝ փառքի հաղար դարեր վրան՝
Մասիս սարը՝ քեզ քյամանչա՝ ձյունը՝ սաղաֆ քարեր վրան,
Արծաթ Զանգու, ոսկի Արազ՝ միշտ հայախոս լարեր վրան,—
Դու դարդիման իմ հայ սրտով՝ հայոց քնար Սայաթ-Նովա։

Քո աչքերից ակունք տվիր Արազ ու Քուռ գոչ-գետերին,
Կյանքդ մարմար կամուրջ արիր յարիդ ճամփի ողջ գետերին.
Երգդ սիրո բանալի է նորաբողբոջ բերդ սրտերին,
Սիրով ամեն դուռ կբանաս դու դարեդար, Սայաթ-Նովա։

Այն մայրը, որ քեզ է ծնել, ուրիշ աստղեր դեռ կծնի,
Թեև փոքր է, ոսկու նման՝ ինչ ծնեց անմեռ կծնի,
Նա մի քարվան, բայց դարե-դար անմահության բեռ կտանի,—
Դու մի խարխուլ հայ խրճիթից ծնված աշխա՜րհ Սայաթ-Նովա։

1943 թ.

***

Շաղ-կղա՜
Կաղ-կղա՜
Շաղ-կղա՜
Կաղ-կղա՜
Կաքավը սև քարին
Կխաղա, կշողա։

Շաղ-կղա՜
Կաղ-կղա՜
Շաղ-կղա՜
Կաղ-կղա՜
Կհիշե սիրածին,
Ու սիրտը կդողա։

Շաղ-կղա՜
Կաղ-կղա՜
Շաղ-կղա՜
Կաղ-կղա՜,—
Հայացքը սև քարին
Որսկանը կսողա...

1941 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՂՋԻԿՆԵՐԸ

Հուր են սիրո, սևի սիրուն աղջիկները Հայաստանի,
Ծրտիս վրա քայլող գարուն աղջիկները Հայաստանի,
Իմ սիրտն ի՞նչ է, ա՜խ, թե ուզեն բերդեր կառնեն մի հայացքով,
Անառիկ բերդ ու սիրո սյուն աղջիկները Հայաստանի։

Մեկը մեկից պարզ ու կախարդ, մեկը մեկից խոսքով քաղցր,
Ետ կբերեն ալևորին, օձ կթուլեն աչքով քաղցր,
Մեկը աստղիկ, մեկը լուսնակ, մեկն արևի տեսքով քաղցր
Իմ Հայաստանն են զարդարում աղջիկները Հայաստանի։

Ախ, չգիտեմ որի՞ն սիրեմ, որի՞ն թողնեմ, անհագ սրտով,
Ամենքին է սրտիս աչքը արևի պես կրակ սրտով,
Երբ հուր ծովի պես են քաշում՝ ո՞նց դիմանաս վտակ սրտով,—
Ինձ աստղերից ցած են բերում աղջիկները Հայաստանի։

Առանց նրանց՝ երգս պաղ էր՝ արև բացին իմ երգի մեջ,
Նրանց սիրո ձեռագործը ծիածանն է երկնքի մեջ,
Բայց քաջ կասեմ մեկին սիրես, լավին սիրես ու լավ սիրես,
Որ քեզ սիրեն բոլոր սիրուն աղջիկները Հայաստանի...

1947 թ.

ԱՐՔԱՆ ԱԲՈՎՅԱՆԻՆ

Ամեն անգամ, երբ նայում եմ մեր աշխարհին,
Երբ նայում եմ մեր աշխարհին, Մասիս սարին,
Քեզ եմ հիշում, քո կարոտն եմ ես հեկեկում,
Քո կորուստն է սիրտս սգում։

Ամեն անգամ, երբ հայացքս Մասիս սարին՝
Քեզ որոնում ու չի գտնում սուրբ կատարին,
Թվում է, թե այն վարդագույն ամպն ես, որ դեռ
Բարձրանում է լանջերն ի վեր։

Ամեն անգամ, երբ այն պայծառ ամպն է կորչում,
Երբ Արազն է նայում լեռանն ու հառաչում,
Ինձ թվում է, թե սուրբ լեռան անդունդն ու ձոր
Քո մեծ սրտի խոցերն են խոր։

Ու կարոտով ամեն անգամ, բայց ցնծագին
Երբ նայում եմ մեր աշխարհին, Մասիս սարին,
Թվում է, թե Մասիս լեռն է քեզ աշխարհում
Իբրև արձան վեր բարձրանում։

1940 թ.

ԽՈՀԱՊԱՆԱ

ասենք որ կյանքը Հայրիկ քաղաքի
ու ես կորած-իմի տոխիս եմ գնում...

ԼԵՆԻՆ

Տիեզերքն ու քո ոգին եկան մի օր չափվեցին
Թե որն է խոր ու անմահ, վկան արևն էր անգին,
Եվ արևը շշնջաց՝ տիեզերք է քո ոգին,
Եվ տիեզերքը կրկնեց արձագանքով ցնծագին՝
— Տիեզե՞րք է քո ոգին,
Տիեզե՞րք է քո ոգին...

1941 թ.

ԽՈՀ

Բնության առջև, նրա սրտում
Ես կամ, շնչում եմ, իշխում նրան.
Միրտս մեկ ուրախ ու մեկ՝ տրտում—
Ասես պատկերն եմ ես բնության։

Նայում եմ նրան, նայում եմ ինձ,—
Ասես թե ես եմ հյուսել նրան.
Ասես թե նա է իր շիթերից
Հյուսել հոգու ծովն իմ անսահման։

Օ՜, նա՜ է, նա ստեղծել ինձ,
Որ իմ մեջ տեսնի միշտ ինքն իրան,
Ինչպես որ ես եմ իր հյուլեում
Տեսնում էությո՜ւնն իմ անսահման...

1940 թ.

***

Հայրենախոս դաշտի վրա
Հերկում էի հողն հնօրյա,
Հանկարծ հողից իմ խոփը ժիր
Մի ժայռ հանեց բևեռադիր,
Ու ժայռն համր ծերուկի պես
Ու ես համր մանուկ մի հեղ՝
Շատ նայեցինք...
Բայց ճգնեցի,
Ժայռի համր լեզուն բացի
Ու կարդացի. «Ալամն իմ խալդ
Գերեց աշխարհն ու Այրարատ
Ու ես՝ արքան իր Արգիշտի՝
Հեղեղելով գետեր վշտի,
Ազգեր առա իմ տեդի տակ,
Արքաները ինձ դրին թագ,
Ու նիզակիս զարկից անմեռ
Հողագունդը շարժվում է դեռ։
Կամա՛ց անցեք, մարդ ու աստված,
Թե չէ հողից կելնեմ հանկարծ...».
Հա՜, հա՜, հա՜, հա՜,
Ելար և ի՞նչ.
Մի բուռ փոշի՝
Ուրիշ ոչինչ...
Այն ինչ հայոց իմ խո՛փն անեղծ
Քեզ մոռացման հողից հանեց,
Խոփ, որ ինչ որ չար էր՝ վանեց...

1940 թ.

ՔԱՐԸ

Մարդկային աչքից ու ձեռքից հեռու
Լեռներում տեսա մարմարի մի ժայռ,
Որ ձյունների տակ, չար բախտին հլու
Դարեր մոռացված մամռել էր մռայլ։

— Մարմար ես, գիտե՛մ, տեսնում եմ ահա,
Բայց ադամանդ էլ լինեիր թե դու՝
Մամռեիր պիտի՝ քանի քեզ վրա
Չէր իջնի ձեռքը ու ձիրքը մարդու։

Լավ չէ՞՝ լինեիր աշխարհում ընկած
Հասարակ մի քար սրտերի ճամփին,
Որ վրադ թիկներ հնձվորը հոգնած,
Որ հանգիստ տայիր հոգնած ճամփորդին։

Ես աշխարհ կիջնեմ, ու կյանքս անբիծ
Թող որ սանդուղքի մի քարը դառնա,
Թող ինձ կոխոտե, մոռանա թող ինձ՝
Միայն թե մարդը միշտ վե՛ր բարձրանա...

1940 թ.

***

Իմ երազի մեջ՝ կանաչ դաշտի մեջ
Կռիվն անցել էր, մաճկալ էի ես,
Կանաչ դաշտի մեջ, դալար դաշտի մեջ
Խոփիս տակ ընկավ մանուշակ մի հեզ՝
Կանաչ դաշտի մեջ, դալար դաշտի մեջ
Կարծես թե սիրտս պոկեցին կրծքես...

1944 թ.

***

Այնպես խաղաղ է իմ սիրտը զարկում,
Խոսքիս հետ գործս՝ նժար ներդաշնակ,
Մեղքի ստվեր էլ չկա կրծքիս տակ,
Օ՜, ինչ հանգիստ է իմ խիղճը երգում։

Չեմ պոկել կանաչ հասկը ոչ մեկի,
Եվ անգամ հավքից մի փետուր անգամ,
Խիղճս հանգիստ է քնի պես մանկան,
Սիրտս ավազան գութ, կարեկցանքի։

Ու ճակատս հպարտ ու բա՜ց է այնպես.
Չեմ ծծել դառը քրտինքն ուրիշի,
Սիրտս ծփանք է առյուծի բաշի,—
Բայց մեղքի մի մազ՝ չպիտի գտնես։

1947 թ.

***

Զյունեց քո էլ սև մազերին.
Զյուն՝ քո մատաղ երազներին.
Բայց դու այն վառ մանուկն էիր,
Որ բույր կուտար ծաղիկներին,
Որ բռնելով թիթեռներին
Պահ էր տալիս իր քույրերին՝
Իր քույրերին՝ շուշաններին...

Բայց ձյուն կիջնի քո մազերին,
Զյուն՝ քո գարնան երազներին,
Մինչ դու այն խենթ ջահելն էիր,
Որ ցնորքի երկնքներից
Աստղ էր բերում աղջիկներին,—
Աստղ էր թվում իր սերն անբիծ՝
Գերված նրանց սեր-խաղերին...

Բայց ձյուն իջավ քո մազերին,
Զյուն՝ քո աշնան երազներին,
Մինչ դու այն խենթ կտրիճն էիր,
Որ սանձում էր հրեղեն ձին՝
Որ բերդի պես՝ աչքը փառքին՝
Գլուխ չէ՞ր տա հողմ ու շանթին,
Անպեն դրոհ կուտար վագրին...

Բայց ձյուն դիզվեց սև մազերիդ,
Ձյուն հավերժ քուն երազներիդ,—
Բայց մահին էլ մի՛ հավատա,
Տես՝ շիրիմդ էլ ծաղի՜կ կուտա,
Եռ նայիր՝ տե՜ս՝ մանուկդ անդին
Ե՞տ է բերել գարո՜ւնդ անդին...

1946 թ.

***

Երբ ես էլ մտա համալսարան,
Ամեն ինչ այնպես պարզ էր թվում,
Կյանքն ինձ թվում էր մի երգարան,
Եվ միտքը՝ կղզի՝ սիրո ծովում։

Բայց երբ խորացա խոհերի մեջ՝
Իմ սիրո ծովը կղզիացավ,
Եվ ծովանալով իմ միտքն անվերջ
Սիրո կղզու շուրջն օվկիանացավ...

Տեսա, որ կյանքը հատակ չունի,
Ու ես կաթիլի ափին եմ դեռ,
Եվ սերունդները՝ այս անհունին՝
Մինչև գերեզման՝ ուսանողներ...

Եվ հիմա տիեզերքն է մշտահոս
Մայր համալսարանն իմ լուսաբեր,
Լուսինն էլ ճաղատ մի դասախոս,
Եվ աստղերն ինձ հետ ուսանողներ...

1948 թ.

***

Երբ օրերում իմ մանկության
Լսում էի իմաստության
Հեքիաթները իմ տատիկից,
Որ հեքիաթով թրծում էր ինձ,
Լսում էի ու զարմանում,
Ու բերանս բաց էր մնում,.
Ու կուզեի անվերջ լսել
Ու չէր երբեք քունս տանում։

Երբ մեծացա դարձա ես էլ
Երիտասարդ մի դյութական,
Ա՜խ, էլ չէի ուզում լսել
Հին հեքիաթներն իմաստության,
Անցնում էի բարձրադլուխ
Գրքերն առած իմ թևի տակ,
Ու կթվար, թե ինքնաբուխ
Ես եմ հեքիաթն իմաստության։

Բայց ալևոր դարձա ես էլ,
Եվ ինչպես օրն իմ մանկության
Հիմա կուզեմ անվերջ լսել
Ոսկի հեքիաթն իմաստության,
Ու խոնարհում եմ մտախոհ
Ահա գլուխն իմ ալևոր
Իմաստության հեքիաթի դեմ՝
Ինքս էլ դառած հեքիաթ մի նոր..

1940 թ.

ԲՆՈՒԹՅԱՆ ԶԱՅՆԸ

Օ՜, ինչ անշարժ է, հավիտյան անդորր շուրջս ծաղկավառ,
Կարծես հույների նախահայրերը չէին ճշմարիտ,
Կարծես չի հոսում շուրջս ոչ մի բան՝ կարծես ոչ մի ծառ,
Կարծես ոչ մի ծիլ, կարծես ոչ մի ցող, կարծես ոչ մի շիթ...
Ես ծաղիկների բուրմունքի հետ եմ մտորում քնքուշ,
Այնպես անգո է շշուկը նրանց, օ՜, անհուն մեղմի՜կ,
Կարծես երազ է, ու հարց է տալիս հովը մեղմանուշ՝
Թե ի՞նչ են արդյոք այս հովիտները, գառներ ու ծաղիկ...
Ու ես չգիտեմ՝ ի՞նչ պատասխանեմ, բայց հովն է անցնում,—
Ե՛ս եմ ամենը՝ ես թե մի վայրկյան, և թե հավիտյան,
Մերթ մա՜րդ, մերթ ծաղի՜կ, մերթ հո՜վ ու մերթ գա՜ռ, ես՝
մերթ մահանում,
Մերթ կյա՜նք եմ առնում... իմ մեջ, ինձնից դուրս գաղտնի՜քն է
շարժման...

1946 թ.

***

Ամպերն ուզեցին ծածկել արևին,
Բայց երբ հեգնանքով նրան մոտեցան,
Հանկարծ ամոթից լուռ կարմրեցին՝
Երբ որ հիշեցին, որ առանց նրան
Իրենք՝ ծովերից ինչպե՞ս կելնեին,—
Չէ՞ որ արև՛ով երկինք բարձրացան...

1947 թ.

***

Արծի՞վ լեռների, արծի՞վ ինքնիշխան,
Ուզում եմ ես էլ քեզ հետ սավառնել,
Չունենալ իմ դեմ և ոչ մի սահման՝
Երազի բոլոր բարձունքներն առնել,
Ու ճախրել միշտ վե՞ր, օ՜, թևե՞ր տուր ինձ՝
Սլանամ դեպի արևներն անմար,
Կամ պոկի՛ր, արծիվ, սիրտս իմ կրծքից,
Միայն թե քեզ հետ բարձունքները տար...

1945 թ.

***

Իմ բույնը դրի երկնքում լազուր,
Իմ բույնը դրի լեռներում գարնան,
Բայց ինչքան ձեռքս մնաց առանց սուր՝
Ագռավն ու գայլը ձագերս տարան։

Իջա ծովերի խորքերը լազուր
Ու բույնս դրի դիրկը մենության,
Բայց ինչքան ձեռքս մնաց առանց սուր՝
Ծովերի մեջ էլ ձագերս տարան։

Իսկ երբ մարդացած ես բերդս դրի
Արևի ճամփին՝ ամենքի նման—
Երբ սուր կոփեցի ու մերկացրի՝
Ձագերս ապրեցին ու գարուն եկան...

1942 թ.

***

Հայրս ինձ ոսկի գանձեր է թողել,
Ե՛ս եմ ամենից հարուստն աշխարհում,
Օ՜, այսքան գանձեր չէին հեղեղել
Աշխարհի Շահերն իրենց քյոշքերում։—

Ու երկրիս թողած անկորնչելին՝
Տեր չեմ գանձերիս, ու դուռս փակ չէ,
Բայց վա՜յ ձեզ, գողե՛ր, վա՜յ ձեր գիշերին
Իմ հարստությունն իմ հոգու մեջ է...

1941 թ.

ԽՈՀ

Սովետական Ակադեմիայի հիմնադրմանը

Դարեր ու դարեր հոգիդ տենչում էր
Ելնել աստղերի սանդուխքն երազուն,
Որ տիեզերական դաղտնիքը մեկներ,
Որ աշխարհ բերեր աստղերի լեզուն...

Բայց սոսկ ամպին էլ թե ուզես հասնել՝
Հողին պիտ դնես սանդուխքդ նորից,
Իսկ հողն ոտքիդ տակ տարուբերվում էր
Դարե՞ր ու դարե՞ր՝ օտար հողմերից...
Եվ ազգեր կորան. մինչ քեզ՝ դարերում՝
Վառ պահեց լույսի երազանքդ վեհ,
Մինչև խաղաղվեց քո հողն աշխարհում
Քո իսկ ոտքի տակ ու՝ հանց մարգարե՝
Դու իմաստության սանդուխք ես դնում
Քո իսկ մայր հողին, որ դա՞ր ու դարե՞ր
Բարձրանա՞ս խոհով ու երգդ իմաստուն
Աշխարհին նետես բոլորանվեր...

Բայց թող աշխարհներն, աստղերն իմանան՝
Որ չէր խաղաղվի հոգդ երբեք,
Որ չէր խաղաղվի թեկուզ մի վայրկյան,
Թե Հոկտեմբերը հրաշքով իր վեհ
Չդառնար և քո հողին պատվանդան...

1942 թ.

Արծիվը թառել կիսավեր վանքին,
Մտքում՝ նայում էր իր անցած կյանքին,
Բայց հանկարծ վանքի մի որմի վրա
Տեսավ քանդակված պատկերն ինքն իրա,
Ու շա՜տ զարմացավ արքան ալեհեր,
Ե՞րբ էր քանդակված՝ չէր տեսել դարեր,
Ինչո՞ւ չէր տեսել քանդակն երբեէ՝
Շուրջը չէ՞ր նայում օրերում իր վեհ,
Երբ որպես ճճի՝ մարդուն ցած թողած,
Ճախրում էր ինքը՝ աստղերին հասած...
Գոռո՞զ էր, ի՞նչ է,—
Բայց, նո՛ր հասկացավ
Թևաթափ ողին՝ երբ փառքից ընկավ,
Որ գոռոզ աչքը շուրջը չի՛ տեսնում,
Մինչ՝ խոնարհ աչքի հայացքն՝ աստղերից
Մինչև ծովերի հատա՜կն է հասնում...

1945 թ.

***

Միտք եմ անում դետի ափին,
Պառկած ափին կանաչերակ,
Ինձ թողնելով ակնթարթին՝
Գետն հոսում է հավերժավաղ.
Երթն ասում է իր ալիքին՝
— Ետ չնայես՝ քա՛ր կդառնաս...
Ետ չի՛ թեքում թարթիչն անգամ
Ու միշտ առա՜ջ, առա՜ջ, առա՜ջ՝
Ասես գիտե ուր է վազում
Կույր տարերքով մշտաշառաչ.
Ու գնո՜ւմ է, գնո՜ւմ, գնո՜ւմ
Հավերժի հետ մշտագնա,
Լոկ ալիքն է ափին մեռնում,
Նա որ ետ է նայում մի պահ։...

Այդպես դարե՜ր, դարե՜ր գալիս՝
Դարերին է համբավ տալիս
Իմ ժողովուրդն ու հավատա՜
Հավե՜րժ պիտի այդպես երթա
Դեպի երա՜զն իր դյութական՝
Ետ չթե՛քած թարթիչն անգամ,—

Ետ չի՛ նայում,
Թե դառնա ետ՝
Կքարանա
Իսկույն ևեթ...

1947 թ.

ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Հոգիս ծարավեց խորհող լռության,
Եվ խոլ ժխորից մտա թանգարան,
Անհուն գեղեցկի անզուսպ ծարավով,
Եվ իմ մեջ խսկույն
Լռեց շշուկը շատախոս մահվան՝
Ես հավերժն անցա վայրկյանի նավով,—
Եվ միտքս հայացք, սիրտս՝ հիացք դարձավ,
Այն հուշաշխարհում մտախոհ ու սեգ,
Եվ մահը աչքիս այնքան փոքրացավ,
Որ շշնջացի՝ մահ չկա՛ երբեք՝,
Քանի կա արվեստն այս հավերժաթով,
Քանի երգը կա, հետքը կա վրձնի,
Քանի դեռ հազար ու մի հեքիաթով
Խոսում է ինձ հետ հանճարն իմ նախնի.
Եվ սերնդի հետ՝ ինձ նման ապրող՝
Ծնվում է նորեն և ինչպես գինի՝
Սերնդե-սերունդ՝ դառնում է դյութող...
Բայց կյանքը՝ դրսում՝ ուրի՞շ թովք ունի,
Քանի կա թեկուզ սիրած մի աղջիկ,
Կյա՞նքն է, օ՞, կյա՞նքն է անհուն գեղեցիկ,
Եվ սիրտ գեթ մի պահը ծաղկավետ
Չեմ փոխի այս լուռ անմահության հետ,
Թեպետ երգս էլ է ձեզ հետ երազում,
Որ անմահության անեղծ արվեստի

Փոշին, գեթ փոշին իր վրա նստի...
Եվ այցում էի սրահները դեռ՝
Երբ մագաղաթներն իբրև դառնահուշ
Նախահայրերիս ուղեղի ծալքեր՝

Բացվեցին իմ դեմ ու ոսկեմշուշ
Ցնդեց անցյալի երազանքս ծեր,—
Եվ ինձ դուրս կանչեց կյանքն իր թովչանքով,
Հազար ձայներով դուրս կանչեց, սակայն՝
— Թանգարան մտնել շատ հեշտ է կյանքով,
Դժվար է մահով մտնել թանգարան։

1947 թ.

***

Երբ դեռ փոքր էի՝ ինձ առնում ծնկին՝
Հայրս շիբուխն էր անդադար ծխում,
Ես մերթ ձեռ տալիս շիբխի կրակին,
Մերթ շիբուխն էի բերանից խլում,—
Ա՜խ, ի՜նչ իմանար իմ մանուկ ոգին,
Թե հորս վշտի հետ էի խաղում...

Քանզի երբ անցան տարիքն աղեկեզ՝
Հայրս իր վերջին վշտի անկողնում
Իր վերջին շնչով շշնջաց այսպես,—
— Գանձ չունեմ, որդիս, այս եմ քեզ թողնում,
Ծխիր՝ երբ դու էլ վշտի մեջ ընկնես...

Ու ես ծխեցի՝
Երբ աշխարհով մեկ աչքերս բացի,
Ու ես ծխեցի ու ծխում եմ դեռ,
Ոչ թե հորս պես՝ իմ կարոտն հացի,—
Ա՜խ, ես ծխեցի ու ծխում եմ դեռ,
Որ թեկուզ դեռ կա մարդ մի կարևեր,
Որ դեռ քաշում է հին կարոտն հացի՝
Ծովերից այն կողմ՝ ծովի մեջ լացի,
Ու դեռ իր սիրտն է մաշում դռնե դուռ՝
Հորս սրտի պես հազարամրմուռ...

Բայց վերջին շիբուխն ինձ հետ կտանեմ,
Թող թեթևա՜նա
Հողն հորս վրա,—
Գավաթս պիտի որդուս կտակեմ,
Գինո՜ւս գավաթը, որ սի՜րտս է վաղվա...

1948 թ.

ՄԱԾՂԵԼ

Եւ նայեցէք, խորհուրդ հայոցն թեւոյթեան
հայոցն գիրուկիցն անուանհամառութեամբ։։։

ԱՐԾԻՎՆ ՈՒ ՄԱՐԴԸ

Տխրեց արծիվը, իջավ երկնքից,
Իջավ, կուչ եկավ մի ժայռի վրա,
Նայեց երկնքին, կարոտեց նորից,
Եվ քամվեց կարծես ծեր սիրտը նրա։

— Երկինքն էլ մարդը խլեց ինձանից,
Երկիր ու երկինք չափեց թև առած...
Ասաց ու կարծես երկինքն՝ աչքերից
Ցած ընկավ մի շիթ սև արցունք դառած։

Ու վերջին անգամ նայեց արևին,
— Քեզ էլ կհաղթի, շշնջաց տխուր.
Այնինչ՝ մարդն արդեն գերած աստղերին՝
Դեպի արևն էր թռչում մտասույր,—

1940 թ.

***

Այն օրից, երբ դու ինձ աշխարհ բերիր,
Դարեր են անցել այն օրից ահա,
Օ՜, մա՛յր բնություն, սակայն ինձ ների՛ր,
Թե քեզ առաքեմ բառերն այս անմահ,—

Դու անմահություն, ես անցորդ, ես մահ,
Դու հավիտյան բաց, ես փակվող մի դուռ,
Դու անմեկնելի, բայց ես եմ ահա
Իշխում քեզ վրա, ես՝ հողդ մի բուռ...

1940 թ.

ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ ՄԵՂԵԴԻՆ

I

Ոչ թե աղջկա բախտն ես գուշակում,
Որպես մի գնչու ցնորք ափիդ մեջ,
Դու գիտես թե ծովն ինչ է մտորում՝
Ծովն իր կաթիլի՝ իր պատկերի մեջ։

II

Դու որ դուրս ելար ցավերի ծովից
Կանչես վար կիջնե գարունն արևից,
Եվ թե գետերի վրա սրոտաս
Գետերն հինավուրց հունը կփոխեն,
Բավ է ճակատիդ ադամանդը տաս՝
Անապատները մեղր կբխեն։
Կանչես՝ ժայռերի կրծքերից հանկարծ
Անտառներ կելնեն՝ գարուններ գրկած։
Մինչև կոկոններն աչքերը բանան՝
Կանչես՝ ծովերը պիտի միանան։
Լեռներին մինչև դայակ չդառնաս՝
Հղի լեռները չեն ծնի գանձեր,
Քանի պատվաստն՝ ձեռքդ՝ բնությյան՝
Կջահելանան անտառները ծեր։
Քեզ դարեր սաստած կայծակները քեն՝
Մի փունջ երկաթի մեջ կբանտարկես։
Կկտրի, կանցնի օվկիանոսներն անվերջ
Քո շշուկն ահա՝ մի վայրկյանի մեջ։
Եվ ցած բերելով թևավորներին՝

Դու երկնքումն էլ բացիր քո ճամփեն,
Հրամայեցիր՝ քեզ առավ թևին՝
Երկինք սլացավ բրոնզն անկենդան։
Այն չես՝ ում սիրտը աչք էր վագրենի,
Սիրտդ՝ չար ծովեր ծածկող գթություն։
Քնքշանքդ բացեց լեզուն դազանի,
Եվ հավքերն ահա երգերդ են կրկնում։
Եվ միակ խինդդ է՝ ոչ թե նմանիդ՝
Այլ խոլ հողմերին դրաստդ կանես,
Եվ օրոր կասես քեզ ծնած հողիդ,
Դու հող, բայց հողից դրախտ կծնես։
Ձեռքդ կնիքն է կախարդանքներիդ
Եվ մարդուց բացի՝ ամեն դոյ՝ գերիդ՝
Դու երկրե-երկիր պճնողն-աստղերի,
Դու դեռ խորտակողն անարդ թագերի,
Խոսքդ— բնության ճակատագիրը,
Գործդ— երազիդ գալոց երկիրը,—
Դու մարդը՝ խորհող հյուլեն բնության,
Հյուլեն՝ տիրակալն անսահմանության,
Տիեզերանյութ շաղախից մի բուռ՝
Բայց մի տիեզերք՝ քանզի բյուրաղբյուր
Էակների մեջ քո հին զուգընկեր՝
Լույս ծնելն հողից՝ քեզ է վիճակվել,
Եվ կգա դարը՝ կհրամայես՝
Գիշերն արևն էլ կզարթնի քնից։
Եվ քեզ կնայե նա էլ ապշադեմ,
Եվ կշշնջա՝ «Այս դու ես որդի՞ս,
Ով մարդ, բայց հազիվ քեզ ճանաչեցի,
Այնքան՝ լուսավոր թվացիր աչքիս՝
Թվաց թե աչքս ես իմ դեմ բացի...
Բայց ի՞նչ ես փնտրում անգամ գիշերով,
Երբ բաց աչքերով աստղերն են քնել,
Ինչո՞ւ ես մինչև աստղերը հանել
Մտքիդ գլուխը, ի՞նչ վիշտ կա նորից,

Երբ մի բուռ հողից վայրի բնության
Դու քեզ հասցրիր կատարելության,—
Ինչու չես ննջում».
— Չեմ ննջի երբեք,
Քանի գաղտնալից տիեզերքն այս սեգ՝
Չի բացել իմ դեմ ծալքերն իր բոլոր,
Քանի դեռ մութն է ու խորհրդավոր.
Քանի դեռ անդուռ առեղծված մնան
Գոյության գաղտնիքն ու քենը մահվան.
Չեմ ննջի երբեք՝ մահը կա քանի,
Քանի չեն դարձրել հավերժ պատանի
Ինձ հայտնություններն իմ իմաստության.
Քանի գործս՝ հավերժ, կյանքս է մի
վայրկյան.
Քանի լուսնին էլ ծաղիկ չեմ ցանել,
Քանի լուսնից էլ մահը չեմ վանել,
Քանի չի դիպել դեռ ոտքս Մարսին,
Քանի չեմ հասել լույսերիս լույսին՝
Անմահությանը մարդկային կենաց,
Որին արժան է մարդը տառապած...
Քանի մի ձեռքս մյուսիս համար
Կոթող է հղկում, կամ թե շիրմաքար.
Քանի ագռավն իսկ մարդուց շատ կապրի,
Կամ բառաբբը՝ յոթն հազար տարի,—
Մինչ մարդս... պիտի գերեզման իջնեմ՝
Զապրած փետրի չափ հավքի մի նստեմ,
Մարդը՝ խոհերի մի նոր աստղածով,
Ճանապարհորդը ծիր-կաթինների,
Մարդն էլ հողածին, բայց մարդն իր գլխով՝
Նժարն անհամար մոլորակների.
Մարդն՝ հավերժորեն չարի դեմ հաստված,
Մարդն՝ արարչությամբ՝ և աստծո աստված.
Բայց այս՝ իր խոհն է՝ գործն
հավերժական,—

Իր կյանքով սակայն
Մարդն հավերժի դեմ ինչ է՝ մի վայրկյան,
Թիթեռի մի կյանք, մի բառ՝ մահվան դեմ՝
Որ չարտասանած գերին է մահվան...
Մինչդեռ մարդկային ծարավն առաջին՝
Տիեզերասույզ տենչն է իմ վերջին.
Հավիտյան ըմպել երկինքն աստղալից,
Հավերժ վայելել գգվանքը կնոջ,
Չհանգչի երբեք կիրքս մրրկալից,
Ոտքիս տակ բացվի լուսինը բողբոջ,
Նմանս ծնել և աստղերի մեջ,
Անմահ վայելել տիեզերքն այս պերճ,
Եվ սիրտս դառնա բերդն անմահության,
Վայրկյանի սիրտս՝ դարեր տառապած...
Ու թեև ինչպես կյանքն սիրալի՝
Մահն էլ է շարժմանց պատճառն անհեղլի՝
Առանցքը շարժմանց ներդաշնակության,
Բայց կյանքն ինչքան շատ գեղեցկանա՝
Մահն աչքիս այնքան կրտդեղանա,—
Կդառնա վերջին ոսոխս ամենի
Բայց ելնում ընդդեմ զառամյալ մահի՝
Եվ կռվելու եմ այնքան ժամանակ,
Մինչև՝ ինչպես գահն իմ աստվածների՝
Թափուր գահ դառնա մահն էլ ոտքիս տակ...

1947 թ.

***

Մենակ չեմ կարող ես հացի նստել,
Մենակ չեմ կարող ըմպել խինդ ու վիշտ,
Մենակ չեմ կարող ես հացի նստել,
Թող գա անցորդը՝ բաց է դուռս միշտ։

Աղքատ ձմեռ է իմ աչքին թվում
Իմ ճոխ սեղանը՝ առանց ընկերի,
Առանց ընկերի՝ ա՜խ, կուլ չի գնում
Իմ հացի պատառն՝ առա՜նց ընկերի։—

Թող գա՜ն ամենքը ու թող հավքն էլ գա,
Բա՜ց է իմ դուռը՝ իմ բաց սրտիս պես,
Առանց ընկերի, ա՜խ, կուլ չի՛ գնա
Իմ խնդությունը՝ իմ անհո՜ւն սրտես...

1947 թ.

ՊԵՏԵՐ

...Ճամբան կու ծռվի եւ հանդարտ
սահելու իր կրունկի...

ՀՐԱԶԴԱՆ

1.

Էն Գեղամա սարերն ի վար,
Էն շոր, ամա քարերն ի վար՝
Իմ դարերի մրմունջն անքուն,
Իմ վաշն,
Իմ հո՜ւշն,
Իմ հին Զանգուն՝
Քարափների ձյունից ծնված,
Փրփրաբարուր ձագերն առած—
Փախած ցավից,
Դավ-անձավից,
Հազար ցավի ձենով գալիս—
Մինչև Մասիս՝ ձայն էր տալիս,
Ցավն էր ուզում պատմել մեկին,
Հայոց հնուց ցավն անմեկին—
Մերթ ահագնած,
Ու մերթ հոգնած,
Մերթ փրփրահույս
Ու մերթ անհույս.
Մերթ մունջ,
Շշունջ,
Ու մերթ մռունչ՝
Հազար ղոներ՝ հազար ժայռեր—
Մեկ ծեծելով, բյուր կոծելով,
Մեկ խլաձայն անիծելով,

Զարկվելով մեկ այս ափին,
Զարկվելով մեկ այն ափին,
Ծեծո՜ւմ, ծեծկո՜ւմ,
Հեծո՜ւմ, դա՜լիս—
Ժեռ ափերին ցավն էր լալիս,
Սիրտն էր բացում այր ու ժայռին,
Հորդում խռով ու մռայլին
Անցնում գոչով մշտամրմուռ
Քարափներով ահեղալուռ,
Որ միշտ խոժոռ, համր ու անշարժ
Կիտում վրան հոնքն ապառաժ—
Սեղմում էին, ճզմում նրան,
— Դուն ի՞նչ կուզես, փրփրաբերան,
Դուն ի՞նչ կուզես.
— Տի՜ղ, տե՜ղ—՝
Խուլ հեծում էր Զանգուն իմ հին,
Ալիք թևը փշրում ժայռին,
Մերթ խելահեղ, մերթ խեղճացած,
Հառաչում էր՝ տեղս է նեղված
Իմ սիրտն է խոց,
Իմ երգն է կոծ,
Իմ վերքն է բաց,
Իմ աչքն է թաց...
Ու չգիտեր
Էլ ո՞ւմ պատմեր
Իր հին ցավերն անդնդախոր,
Ու հորդում էր գլխամոլոր,
Վազում վռազ, դառնում Արազ,
Բախվում հազար ժայռ ու սարի—
Թաթար, սելջուկ նժույգների
Սմբակները դեռ լվալով,
Գլատոր լալով,
Խոլոր գալով՝—
Քարերից՝ սիրտը քրքրված,

Որդիքն՝ օտար ափեր ցրված,
Շուրջը՝ սարեր,
Դեմը՝ դարեր,
Վերքն՝ անհունով,
Ցավը՝ ձենով,
Լացը՝ մռունչ—
Քանդում կամուրջ՝

Աչքը նետում հազար մի կողմ—
Բողոքում էր ու մշտահողմ
Ձենը ձգում աշխարհով մեկ—
Թռչում՝ դառած արցունքե տեգ—
Ցավից գոռում, պատռում սարեր,
Հազար ու բյուր դժար դարեր,
Մերթ ոսոխի ծունկը ծալում,
Մերթ իր տիրոջ թագն էր խլում
Ու գլորում իր ջրերին՝
Ջանգուն իմ հին՝ իր հին ճամփին,
Հազար տեղով խոցված անցնում—
Աշխարհն Հայոց ողբով լցնում՝
Կանչում—Մասի՜ս,
Տեղ տուր, ազիզ,
Ճչում, կոծում,
Բաշն էր ցնցում,
Ցնցում այնպես,
Որ աղեկեզ
Արցունքի շիթն
Աչքից թռել
Ընկել Մասսին է դեռ սառել,
Ու դեռ պանդուխտ Մասիսն հեռվում
Այն արցունքն է աչքիս թվում՝
Դարը դարի վրա սառած՝
Հայոց վերջին վիշտը դառած...

Էն Գեղամա սարերն ի վար,
Սարերն ի վար, քարերն ի վար
Անցան լացի դարերն հանց գետ,
Տարան գետի լացն իրենց հետ.
Ու գալիս է Զանգուն էլի՝
Բայց խաղաղված ու նազելի.
Մայր Վոլգայից մուրազն առել—
Առել՝ մորե մեկ է դառել.
Հագել է հիր, կանաչ-կարմիր,
Գլուխը ձյուն,
Սիրտը՝ գա՜րո՜ւն։
Շուրջն հավաքել որդիներին,
Որպես ծաղկունքն իր ափերին,
Գալիս՝ երգով
Ու ալիքով
Իր նո՜ր ափերն է փայփայում՝
Մտքո՜վ անգամ ետ չի նայում,
Ի՞նչ է թողել, որ ետ նայի,—
Վշտի օրոցք ձորն ամայի,—
Ավե՜ր,
Ավա՜ր,
Դարե՜ր խավար...
Ու դեռ Մասսյաց միրաժն աչքին՝
Որպես արցունք՝ իր մի աչքին,
Հույսով գալիս՝ լուր է տալիս
Այն սարերին դեռ անմուրազ.
— Իմ լացն հո՜ւշ է, ձեր լացն՝ Արազ»
Որ կարոտից մերթ հեկեկում,
Մեկ հեկեկում, հազար երգում,
Ձայն է ձգում աշխարհով մեկ,

Թե իմացեք, որ գետն իմ հեղ՝
Պատռել պատյանն իր ժայռենի՝
Ձեռքն է առել թուրն հավլունի,
Վերքը մարել,
Ե՞րգ է դառել
Ականջի տակ Երևանի,—
Ե՞րգ է դառել, դառել քնար՝
Ջրանցքներով իր յոթնալար.
Ու գոչա՞լով, խոխոջա՞լով,
Դեռ չմտած դաշտերը ծով՝
Նոր բերդ առնում՝
Լույս է դառնում՝
Լցնում աչքերն Երևանի
Միածանն՝ն իր ծիրանի,—
Իմ հորդացած, իմ նոր Զանգուն,
Իմ խենթացած, իմ խոլ Զանգուն,—
Երեկ՝ արցունքն իմ Սևանի՝
Այտի վրա Երևանի...
Այսօր՝ լույսի մեծ մի անտառ,
Ամեն սյունը՝ լուսե մի ծառ,
Ամեն ծառով
Ամեն ճեռով
Ջահեր բռնած,
Միածանած
Իր վերա մայր Հայաստանի...
Զանգուն իմ լույս,
Որ մշտահույզ
Մեջքին կապել գրանիտի
Կամուրջն՝ իբրև փառքի գոտի,
Լույսը տալով,
Դուրս հորդալով,
Կաթնաջրի ծով կտանի,
Որ զմրուխտո՞վ, մեղրո՞վ լցնի
Ղեռն՝ իբրև դատարկ սինի,—

Ինդո՞վ լցնի՝ վշտամատյան
Դարերի դաշտն Արարատյան—
Ու հորդ ու հաշտ
Մտնում է դաշտ՝
Քար ու քոլերն հարբեցնում
Ու քարե քար՝ վարդ է ծնում,
Փռում զմրուխտ
Արտեր ու տուղտ,
Պճնում հողի լայն կուրծքը կույս
Ստինքներով մեղրատոպկույզ,
Ջուգում դաշտերն իր հին երազ,
Դառնում դաշտի հավերժահարս՝
Ջույգ ափերը՝ ուսերն իր շող,
Այգիները՝ վարսերն իր ճոխ,
Ձեռին գինին նոնագավաթ
Կանցնի՞, կերթա՞ դաշտերն ազատ,
Կերթա անդուլ,
Կերթա անվերջ,
Կերթա անքուն,
Կերթա հավերժ,
Իմ Հրազդանն, իմ նոր Զանգուն,
Մայր Վոլգայի դուստրն անքուն,
Անվիշ,
Անվաշ,
Առյուծաբաշ,
Իր ճոխ մազերն ուսերն ի վար
Սանրել, հյուսել ու կենարար
Կերթա՝ ծիծ տա մեր դաշտերին՝
Կանաչ, մանուկ Հայաստանին,—
Որ է՛լ ծաղկի
Ու ծիծաղե,

Ինչքան խո՛ռունկ
Որ ծիծաղե՝
Հին վիշտն
Այնքան
Խորունկ
Թաղե...

1947 թ.

ԲԱՂԱՆՔ

1.

Իմ կարոտի աղավնի, թռիր սիրտս քո թևին,
Հասիր Կրեմլ ու նրան, որ նման է արևին,
Հասիր իմ հորն իմ երգով ու շշնջա ականջին՝
Թե այս գիշեր սարերում,—
Երկրում իմ նոր նախիրյան
Հասավ քո ձայնն աստղալույս ու պահում ենք քո ճամփան,—
Դու ես հայոց հույսերի պատգամավորն առաջին,
Ո՞վ չի ընտրի արեգակն այս աշխարհում իր ճամփին.
Եվ Մասիսը երկնամուխ, իբրև իր ձեռը պարզում՝
Ժողովուրդն է քեզ ընտրում, որ արևն էր երազում.
Ողջ երկիրն է քեզ ընտրում և այս գիշեր դյութական
Խրախճանք է սրտե-սիրտ ու պահում ենք քո ճամփան,
Կուզենայինք ձայնիդ պես դու էլ գայիր այս անգամ,
Քո այցին է սպասում հայոց երկրի սիրտը ծով՝
Կարոտների ծփանքով...

2.

Դու մեր խորհող արեգակ, դու արևի նման պարզ,
Որ Կրեմլի բարձունքից գիշեր ու զոր լույս կտաս,
Մեր հույսերի ոսկե սյուն,—
Մեր լեռները երբ դու գաս,
Իմ ծերունի մոր սիրտն էլ ձնծաղիկով կլցվի
Թե ձյուն լինի՝ ձյան տակից վարդի աչքն էլ կբացվի,

Վարդի շուրթն էլ կբացվի, որ ճամփեքդ համբուրի,
Ոտքդ ուր էլ որ դիպչի հողից դարուն կբուրի,
Սրորոցի մանկիկն էլ՝ լեղու կառնի, կժպտա,
Թոթովանքով առաջին՝ քո սուրբ անունը կտա...
Փշրվելով քո ճամփին ջրվեժները խենթորեն
Վիհերն ի վար՝ ողջույնի ծիածաններ կկապեն.
Էլ ի՞նչ ասեմ քեզ կարոտ սրտի մասին, իմ սրտի,
Երբ որ շա՜ղն է համբույրով սրբում փոշին քո ճամփի,
Երբ ջրերը, մանկանց պես, ծամի կզարկեն ափերին,
Մանկանց աչեր կդառնան ծաղիկները թփերին
Ու կնայեն քո ճամփին...

3

Մեր իմաստուն Առաջնորդ, դու արեգակն աշխարհի,
Քո ձեռքի տակ ծիլ տվեց անգամ սիրտը ժեռ քարի,
Հյուր եկ, արև՜ այդպան,—
Այդիներիս ոսկեծով,
Օ՜, երբ որ գաս, հավատա, հափշտակված քո սիրով՝
Խաղողներից ինքն իրեն՝ առանց հնձան մտնելու
Դուրս կպրծնի անհամբեր մեր սուրբ գինին, որից դու
Կզգաս համն ու հմայքը մշտադինի ու բուրյան
Արարատյան մեր դաշտի, որ սինին է խնդության...
Մեր նեղ օրին հասնում ես, լայն օրին էլ այցելիր,
Ցրված պանդուխտ հայերիս բախտի դուռը դու բացիր,
Նրանք էլ են քեզ կարոտ, բայց մտնելով Հայաստան՝
Քո իմաստուն աչքերը մեր լույսերի մեջ տեսան,
Նրանք էլ են քեզ կանչում,
Որդու սրտով անրջում...

4

Դու կատարումն ու կյանքն ես մեր դարավոր հույսերի,
Հավերժաբուխ շատրվան դու լենինյան լույսերի,
Մեր հանճարեղ Առաջնորդ,—
Հյուր եկ մի օր Երևան,

Ուր շենքերը հեքիաթի դղյակներ են դյութական,
Ուր էլ չկա՞ն գետնախոր խրճիթները մթամած՝
Ժայռերի սև հոնքի տակ կույր աչքի պես կուչ եկած.
Ուր ապարանք է դարձել նաև սիրտը մարդկային՝
Ջահավորված նորախոհ երազներով աստղային.
Քեզնով հարյալ մեր ոգին ու մեր երգը, որ դարեր
Որդեկորույս մոր նման հառաչում էր կարեվեր.
Ինչպես ավին Եփրատի, որ լալիս է հեռվում դեռ՝
Ա՜խ, հայ արնով են ներկված հնում հազար ձոր ու լեռ
Եյն ափերում կարեվեր...

5.

Մեր հարազատ, մեր անգին, մեր խնդության ակնաղբյուր,
Երկրից երկիր խնկարկվող ազատության ծուղկի բույր,
Արդարության միակ դուռ,—
Լույս խղճերի բանալի,
Մեր սարերն են քեզ կանչում՝ բարձր պահած քո անդրին,
Կարոտիս պես ծառս եղած՝ դեռ նայում են քո ճամփին.
Քեզ մեր մուրազն է կանչում, ե՞րբ ես դալու, մեզ այցի.
Արադածին քո որդի, ուր վարդ է հետքն իր լացի.
Արարատին իմ դերված, որ հայայրքն է քեզ հառել,
Եվ կարոտի արցունքը թարթիչներին է սառել.
Նրան մեր հին օրերի բախտի հողմը չարաբաստ
Ուզեց դեպի մահ քշել, որպես մի որբ առագաստ...
Ե՞րբ ես գալու, երբ դաս՝ մեր սարերը բարձր ու վեհ
Կցածրանան ժպտալով՝ կանաչ ճամփա կտան քեզ,
Ե՞րբ ես դալու, որ սարի խնկածաղկի բույրի պես
Մեր համբո՜ւյրը բերենք քեզ...

6.

Ծով է աշխարհն հեղհեղուկ ու ծովի մեջ անսասան
Նորից կանգնած է մեր սեգ հայրենիքը քեզ նման,
Մեր դյուցազուն, մեր անգին,—
Ե՞րբ ես գալու, սյուն սրտի,

Մենք ծաղիկներ, դու արև՝ խփենք գավաթ գավաթի,
Արի հայոց վարդակերտ լեռնաշխարհը բյուրավան,
Բռնած Զանգուն՝ սարն ի վեր՝ ելնենք Սևանն հոտելման,
Որ կարոտիս գինու պես սպասում է քո ճամփին,
Զանգվին ղրկում սուրհանդակ՝ ձայն է տալիս Մասիսին,
Թե երբ որ դա՝ ձայն տուր ինձ, դու ինձնից շուտ կտեսնես,—
Բայց Մասիսը լուռ է դեռ ու կսպասե աղեկեղ.....
Ե՞րբ ես գալու, ա՜խ, գիտեմ, որ աշխարհում մեր շքեղ
Կանմահանա՝ ով քեզ հետ հացի նստի դեթ մի հեղ,
Ոտքը քարի չի դիպչի՝ ով քեզ հետ է դարումն այս,
Դու հաղթության բանալի, երբ հայերիս այցի գաս,
Մեր Սևանա ծովը լույս որպես մի թաս, գինով լի՝
Կբարձրացնենք ձեռքերով մեր Գեղամա լեռների,
Կբարձրացնենք աշխարհում քո կենացը ոսկեղեն,
Քո կենացը ու մեզ հետ աստղե՞րն անդամ կխմեն
Քո կենա՞ցը ոսկեղեն...

Դու աշխարհի փրկիչը, դու պաշտելի մարդկության,
Սերունդներին հայր-արև՝ հավիտենից հավիտյան,
Մեր հանճարեղ Ստալին,—
Ամեն սիրտ է քեզ կանչում,
Թեև ամեն ծաղկի մեջ քո ժպիտն է բողբոջում,
Թեև ամեն սրտի մեջ քո երազն եմ տեսնում ես,
Թեև երկրիս լույսերով քո հայացքն է հասնում մեզ,
Թեև ամեն մի հոգում քո պատկերն է ճառագում,
Թեև գործդ աշխարհն է, բայց սրտիս պես անդադրում,
Քեզ է կանչում իմ կամքով հայ ժողովուրդն անթառամ,
Քեզ է կանչում իմ կանչով զմրուխտ երկիրն իմ հայոց,
Քեզ է կանչում Արարատ գերված կայմը քո որդոց,

Քեզ են տենչում աչքերս՝ Սևանա ծով, Վանա ծով,—
Մեկը լցված խնդությամբ, մեկը դեռ լի իմ արցունքով...
Քեզ են կանչում իմ կանչով կորիճները տուն եկած,
Քեզ է կանչում իմ սիրտը, որպես երկրիս դուռը բաց,
Քեզ եմ կանչում, ե՞րբ կգաս, քեզ եմ կանչում սրտատրոփ
Ես բանաստեղծ մի նոր զանգ՝ Հայաստանից ղողանջող...

1939—46 թ. թ.

ՍԻՄԱՆԹՈ ԵՎ ԽԱՋԵԶԱՐՆ

ՆԱԽԵՐԳԱՆԴ

1.

Քո ծարաված սրտի համար երգիս ոսկե սափորով
Ժողովրդի զուլալ սրտից պաղ ջուր առա ջերմ սիրով,
Աչքս բացվեց շուշանի պես և աստղերով այս գիշեր
Լցվեց մատաղ երկինքն հոգուս, սիրտս դարձավ մի ծով սեր,
Սիամանթոն այցի եկավ, Խաջեզարեն՝ երկուսով
Լույսերի պես կուրծքս մտան իմ աչքերի դարբասով,
Բայց ա՜խ, նրանց սիրո լացով ու կարոտով համբույրի
Իմ սափորում արցունք դարձավ ցողն հուշերիս աղբյուրի.
Եվ արցունքի միջից վհատ ինձ նայեցին կարոտով
Սիամանթոն, Խաջեզարեն՝ դարեր լացած աչքերով։
Նրանց անհույս աչքերի մեջ անբախտ մի սեր կարդացի
Եվ իմ երգի արցունքներով նրանց սերը ես լացի,
Կարծես սիրուս ծաղիկները սրտիս վրա չորացան,
Ու ես ընկա մութ գիշերի փշերով լի մի կածան,
Ուր դեռ կոկոն սիրտը թոշնում, սերն էր մեռնում սարվորի.
Կյանքն էր նման սև գերանդու բերանն ընկած մի լորի,
Ուր, որ ջահել մի հայ չորան և քուրդ աղջիկ մի չքնաղ
Երազներով իրար գտան սուրբ սարերում ցողաշաղ,
Համբուրվեցին հովերի պես դաղտնի սիրո շղարշով,
Բայց պսակեց բախտը մռայլ՝ նրանց սերը լոկ փշով,
Եվ դեռ ծաղիկ, իրար ծարավ, կորան անդարձ ու անտես՝
Անապատի բերանն ընկած երկու կաթիլ ջրի պես...

Բ.

Բայց թե եկեք, ով աղջիկներ, եկեք ինձ հետ ձեզ տանեմ,
Դեթ երգի մեջ աստվածային սիրո ճամփան ձեզ հանեմ...

ԵՐԳ ԱՌԱՋԻՆ

Ա.

Սիփան սարը հագավ դանդաղ գիշերվա թուխ յափունջին
Ու մակաղեց Սիամանթոն հոտը սարի մի լանջին,
Վրան քաշեց այծենակաճն ու մուշ-անուշ մտավ քուն.
Գլխին աստղերն հայտնվեցին երազներով իր ժպտուն.
Երազի մեջ Սիամանթոն սարից ահա իջավ ցած,
Մինչև աղբյուր՝ ճամփա տվին ծաղիկները արթնացած.
Բայց աղբյուրին դեռ չհասած՝ տեսավ կանգնած մի եղնիկ,
(Որ իրեն էր նայում անթարթ աչիկներով գեղեցիկ)
Ուզեց զարկել, բայց եղնիկը հանկարծ դարձավ մի աղջիկ.
— Մի՛ սպանիր, ես քո բախտն եմ, քեզ խնայիր, իմ սիրած.
Ասաց աղջիկն ու աղայի ձեռից աղեղն ընկավ ցած...
— Դու ո՞ր սարի եղնիկն էիր, քեզ ո՞ր ճամփան ինձ բերեց,—
Ասաց հովիվն ու աղջկան երազի մեջ համբուրեց։
— Սիրո ճամփան,— ասաց աղջիկն ու հանելով իր մատից
Իր մատանին հովվին տվեց, որպես սիրո խոսքն անբիծ։
Ու երազով հովիվն ինքն էլ՝ իր մատանին կուսական,
Որպես իրա բախտի աստղը, անխոս տվեց աղջկան...
— Արի տանեմ քեզ իմ սարը,— հովիվը մեղմ շշնջաց,
Եվ ուզում էր գրկել նրան ու համբուրել, բայց հանկարծ
Նորից եղնիկ դարձավ աղջիկն ու ծիծաղով իր անգին
Թռավ կորավ քերծերի մեջ՝ շվար թողած որսկանին։
Սիամանթոն ուզեց վազել, ոտքը դիպավ մի քարի,
Եվ արթնացավ՝ երազն անցավ, տեսավ լոկ բույլն աստղերի...
Նորից փակեց աչքը շվար՝ նորից տեսավ երազն այն,
Նորից եկավ եղնկատոտ այն աղջիկը տեսլական,
Նորից բռնեց, նորից փախավ ու յոթն անգամ նույն խաղով
Նույն երազը հովվին թողեց՝ նույն աղջկա ծիծաղով...

***

Ա՜խ, երազ են համբույր ու սեր, երազն էլ կյանք է թվում,
Բախտավորը նա՝ է միայն, ում երազն է կատարվում։

Զ.

Սիրիան սարի գլուխն արծաթ՝ ահա ոսկու փայլ առավ,
Արևն հագավ իր ծիրանին, դեպի երկինք բարձր արավ.
Ձորերի մեջ մառախուղը հողմի թևին հանց դերի՝
Օրորվելով զոնաղ գնաց կատարներին լեռների.
Գյուղերն ասես ծխի ամպով, ձիու թամբով հանդ ելան,
Սարերն ելան դաշտից հոտերն ամպերի պես վաղորդյան.
Սիամանթոն հոտը քշեց, ելավ կանաչ սարն ի վեր,
Ցրիվ եկան ուլերն, ինչպես ծաղիկ քաղող մանուկներ.
Ու վաղորդյան շաղերի մեջ, լանջերն ի վար ղով սարի՝
Սարի սուսան հարոսներին դերվեց հոտը ոչխարի։
Սիամանթոն թիկնեց ժայռին ու ցած նայեց աղբյուրին,—
Ձորում դրկեց նրա պատկերն՝ աղբյուրի ջինջ հայելին,
Կարծես ընկավ աղբյուրի մեջ մի կտոր թուխ արեգակ
Եվ աղբյուրը ջրահարսի ծիծաղ դարձավ ժայռի տակ...

Այդ աղբյուրից, տարին մի հեղ, ամեն ուխտի առավոտ,
Ջուր են առնում աղջիկները, ուխտ են կապում նրա մոտ,
Ջուր են տանում իրենց զանդակ, կարապնավիզ կժերով.
Ու ջրի հետ համբույր յարին՝ նոր վարդացած թշերով.
Ու մուրաղին է մեկն հասնում, մեկն հառաչում՝ «ա՜խ, չկա».
Եվ աղբյուրն է միշտ գողանում ծիծաղն ու լացն աղջկա...

Սիամանթոն սրինգն առավ ու նվագեց, նվագեց,
Սրտի արցունքն՝ իր սրնգի աչիկներից դուրս բխեց.
Իր երազն էր նա դեռ լալիս ու կարոտը եղնիկի,
Մանանա էր կարծես իջնում անուշ լացով սրնգի,
Ու դյութվելով ոչխարները մեղեդիով սրտախոր՝
Գլուխ գլխի մնչում էին՝ անդիտությամբ բախտավոր...

Ու երբ ինքն էլ հարբեց, հոգնեց ու ցած նայեց մի վայրկյան՝
Ջորում կարծես աչքը դիպավ իր երազի աղջկան...
Ա՜խ, չէ՜, նա չէ՜ր, երա՜զ էր նա...
Ու աղջիկներն աղբյուրի
Երազի պես երգում էին իրենց կարոտն համբույրի։

Արևը պաղ աղբյուրին
Ընկել՝ կդողա.
Ծարավ եմ քո համբույրին,
Աչքի լույս տղա։

Տղա, դու ո՞ւր ես, չկաս,
Սկել եմ, արի,
Իմ սիրտը ծարավ մի թաս;
Դու աղբյուր սարի։

Ցերեկը՝ սիրտս լալիս,
Լացս չես լսում,
Երազիս մեջ ես գալիս
Ու երազ դառնում...

Ու այլայլվեց Սիմանթոն ժայռի վրա շուռ եկավ,
Ժայռից քարի մի փերթ պոկվեց ու աղբյուրի գիրկն ընկավ,—
Աղջիկները վեր նայեցին...
Այն ինչ տղան վերստին
Նվագում էր՝ իր կարոտի լեզուն տված սրընդին,
Իր երազն էր ասես պատմում՝ անուշ լալով իր մասին,
Իր երազն էր նա ետ կանչում՝ հավատալով երազին...
Ու երբ սրինդն հովվի շուրթից արցունքի պես ընկավ ցած՝
Մեկ էլ ձորից վեր նայեցին աղջիկները կախարդված։
Հովիվն այնքան էր գեղեցիկ ու մեղեդին այնքան խոր,
Որ մոռացան աղջիկները սիրածներին հեռավոր.
Ու երբ անցավ սիրո ցնորքն իրենց սև-սև աչքերից,
Ամենքն անխոս առան կժերն ու ջուր լցրին աղբյուրից.

Բայց դեռ մեկը աղբյուրի դեմ, աղբյուր ու կուժ մոռացած՝
Ժայռին հենվել միտք էր անում՝ անուշ վշտի մեջ ընկած։
Նա էր, իմ վիթխարաջեղարեն, բեկի դուստրը վարսասաթ,
Երեսը կաթ ու բերանը այն կաթի մեջ ընկած վարդ։
Կուրծքն հասակի ծառը զուգող՝ զույգ խնձորի էր նման,
Ու ոչ մի ձեռ, ինչպես տերև, չէր դուրգուրել դեռ նրան։
Բարակ մեջքը Վանա ծովի կարապի վիզն էր կարծես,
Մեջ այն շուշան աղջիկների՝ նա վառվում էր վարդի պես։
Նրա՛ն գերվեց Սիամանթոն ու շշնջաց զվարթուն.
— Ախ դու չէի՞ր իմ երազում՝ եղնիկ դառած՝ ինձ խաբում...
Ու կարծես թե հովվի աչքից պոկվեց աստղի պես մի բան,
Ցոլաց ընկավ կույսի սիրտը ու այլայլեց աղջկան...
Ու վեր նայեց աղջիկն հուշիկ, ինչպես ծաղիկն արևին,—
Այսպես՝ սրտի հայացքներով իրար սիրո խոսք տվին.
— «Թե դու էիր, մի ջուր տուր ինձ»...
Ու ձեռն ահով մեկնեց ցած,
Ու կարկամեց խաջազարեն, շուրջը նայեց կարմրած,
Ու վեր ելավ բաղեղի պես, ու ջուր տվեց իր կժով...
Իջավ անխոս, հոգին լցված մի անսովոր մշուշով,
Ու կթվար թե սիրտն արդեն ուրիշ տեսակ էր բախում,
Սիրո հավքը իջավ աչքին, ու սրտի մեջ դրեց բույն։
Ու կթվար՝ կելներ, կիջներ ինչ-որ ահով մեղրածոր
Կուրծքն՝ հասակի ծառից կախված արևելքի զույգ խնձոր։
Ու դյուղ իջան աղջիկները կարոտների կժով լիք,
Ջորում սիրտը տված հովվին՝ դեռ մնչում էր մի եղնիկ։
Խաջեն էր նա, որ աղբյուրից ջուր առնելը մոռացավ
Լիքը կժով, լիքը սրտով երազներով տուն դարձավ.
Ու հետևից մեկ էլ նայեց Սիամանթոն սիրարբած,
Մինչև զարկած իր եղնիկը սարի ուսով իջավ ցած...
Հովը եկավ ու գուրգուրեց գանգուրները չոբանի,
Ախ, նա այրող համբույր կուզե, հո՛վ, քո խաղերն ի՞նչ անի։
Ու նվագեց սրինգն էլի, որ լալիս էր ու կանչում,—
Սիրահարի նվագի տակ ժայռն էլ սեր էր անրջում։

3

Տարի բոլոր ձյուն կշողա Սիփանա սեղ սարերին,
Բայց շատ այրվեց սիրտը հովվի՝ գանգատվելով ձյուներին...
— Ախ ինչ քար սիրտ պիտի լինի, որ սիրող սիրտը կոտրի։
Մտածելով՝ Սիամանթոն թողեց Սիփանն իր բարի,
Ու գյուղ գնաց, հանեց խենջարն ու յատիմնջին, սիրտը՝ հեվ,
Ձեռքը կրծքին՝ գնաց կանգնեց իր սիրածի հոր առջև.
— Ի՞նչ կա, սարի Սիամանթո, խոսեց բեկը մեղմագին,
Գայլը սարից ոչխա՞ր տարավ, թե շոր չունես քո հագին...
Հովիվն ասաց, թե ծաղկում է սարի վրա ամեն բան,
Միայն ինքն է թոշնում սիրուց՝ հարս է ուզում աղջկան...
— «Դուրս կորի, դուրս», գոռաց բեկը ու վեր թռավ նա ոտքի,
Ասես հովազը դուրս նայեց որջի միջից մութ աչքի...
Բայց շշնջաց հովիվն ահով «Աստված է մեզ պսակել,
Երազի մեջ՝ խաչեի հետ՝ մատանի եմ ես փոխել...»
Հանկարծ մոտիկ դռան ճեղքից դեմքը ցոլաց աղջկա,
Կարծես լուսինն ամպից նայեց, բայց չքացավ նորից նա,
Երբ դուրս արավ հայրը հովվին՝
— «Էլ չերևաս սարերում,
Ո՞վ է լսել, որ չոբանը փեսա լինի բեկ մարդուն...
Երևում է՝ կտրիճ էիր, դուռս եկար քո ոտքով,—
Գնա... ու տե՛ս իմ աղջիկը մե՛կ էլ չանցնի քո մոտքով»։
Եվ նույն գիշեր Սիփան սարը հովիվ տեսավ ուրիշին,
Սիամանթոն իջավ սարից, աչքը սարի մշուշին...
Վշտով ամպեց Սիփանը ծեր, աշնան թուխպերն իջան վար,
Երբ հեռացավ հով-զոզանից Սիամանթոն վշտահար։

4

Գնաց տխուր Սիամանթոն, գնաց ուրիշ մի աշխարհ.
Թողած գյուղում եղնիկն իրա, թողած բեկի սիրտը քար,
Ու դեռ հայրը ղեյլան ծխում, հորդորում էր աղջկան,
— Ի՞նչ ես էլի գլխիս ամպել՝ բաց երեսիդ լուսնկան,
Ու ձգելով վիզն աղջկա նորից մի շար հակինթի՝

Ասաց—«Խելքն է բախտի ճամփան, սերը ճամփան չէ՛ բախտի...
Հանիր փուշը քո վարդ սրտից, Ազիզ բեկի որդուն առ,
Որ հոտ ունի՝ ինչպես Առնոս սարը ծածկող մի անտառ»։
— Ա՜խ, չէ, բաբո, թեկուզ ոսկով սարեր ծածկի, չեմ ուզում,
Բաբո, ինձ մի մալուլ թողնի, բաբո իմ սիրտն է մրսում.
Բաբո, գարնան ծիծեռնակի ձագը բնից մի հանի,—
Մի սպանի քո աղջկան, յարին մալուլ մի անի...»
Բայց քարի պես, ժեռ քարի պես բեկի սիրտը անզգա՝
Ասես չէր էլ ուզում լսել լացն ու մորմոքն աղջկա.
— Վերջը ոտքդ քարին կգա, հորդ խոսքից մի անցիր,
Հոր անեծքը մոր անեծք չէ, հոր անեծքից վախեցիր...
— Ա՜խ, չէ՛, բաբո՛, կանչիր ետ գա, նա արծիվն է Սիփանի,
Կանչիր ետ գա իմ գարունը՝ սիրո գետ գա ինձ տանի...».
Ու լալիս էր աղջիկն անհույս ու միշտ ձեռքը ծեր բեկի
Լուռ սրբում էր, բայց չէր զգում բոցն աղջկա արցունքի.
— Լո՜, լո՜,— ողբում խաջեզարեն ու տեսնում էր երազում՝
Սիամանթոն էր խոռված, իր մատանին ետ ուզում...
Մինչ օրն ի բուն խաջեզարեն աղբյուրի մոտ թափառում՝
Տուն էր գալիս ու խեղճ կժով սրտի արցունքն էր բերում։

Ա՜յ աղբյուր, սա՛րի աղբյուր,
Ա՜յ անուշ, բա՜րի աղբյուր,
Ա՜խ դու էլ լալո՜վ կերթաս,
Իմ կորած յա՜րի աղբյուր։

Ա՜յ հավքեր, սա՜րի հավքեր,
Ա՜յ նախշուն, բա՜րի հավքեր,
Ա՜խ, ձեր էլ սիրտն է սգում,
Իմ կորած յա՜րի հավքեր։

Ա՜յ Սիփան, սարի՜ Սիփան,
Ա՜յ բանձր, բա՜րի Սիփան,
Դու էլ ես դոմանի մեջ,—
Ի՜մ կորած յարի Սիփան։

Բայց աղբյուրը լուր չէր տալիս ու թվում էր, թե լալիս՝
Հեռվում լացող իր սիրածի սև աչքերից էր գալիս։

ԵՐԿ ԵՐԿՐՈՐԴ

Ա.

Զմեռն անցավ. բացվեց նորից վառ կարոտի մի գարուն,
Կարապները ծովերն իջան՝ ինչպես ափից փլվող ձյուն.
Քոչվորների սիրո երգը նորից սուրաց սարն ի վեր,
Գարունը սեր, արևը սեր, երկիր երկինք դարձան սեր։
Մեռած սերերն հողից ելան՝ ծաղկի փոխված աչքերով,
Սարերն ելան ապրողները, որ պսակվեն վարդերով...
Բայց ա՜խ, սարի Սիամանթոն մնաց վշտի անձավում՝
Լալով հուշերն իր Սիփանի՝ թափառում էր պաղ հեռվում։
Կամ տեսնելով եղնիկներին՝ հառաչում էր մեղմակի,
Չէ՞ որ չքնաղ խաչեզարեն շատ էր նման եղնիկի։
— Ա՜խ, երանի՜, հավք ու հովեր, երանի ձեզ, եղնիկներ,
Որ ման կուգաք մուրազն առած ու ցավ չունի սիրտը ձեր».
Ու մերթ գիշերն իր սրնգով հեկեկում էր դալկահար,
Աչքը ձգում ճամփաներին՝ չէր իմանում ուր գնար։

Ճամփա կա՝ ծով է տանում,
Ճամփա կա՝ այգի,
Ճամփա կա՝ ափ է հանում
Նավակը կյանքի։

Ա՜խ, ո՞րն է սիրուս ճամփան,
Ցույց տվեք, աստղե՛ր,
Առանց սեր ի՞նչպես մնամ,
Կմեռնե՛մ անսեր։

Ու մի գիշեր երազ տեսավ, բայց այս անգամ չար երազ,
Տեսավ իբր խաչեզարեն հարսնացել է անմուրազ...
Ի՞նչ իմանաս երազն ի՞նչ է, որ նման է գիշերի,—

Խավարի մեջ չկա՞ն կայծեր ճշմարտության աստղերի.
Ու վեր թռավ Սիամանթոն, նժույգն հեծավ գիշերով,
Յոթը գիշեր ճամփա կտրեց՝ երազի սև հուշերով.—

Ամպեց. կորավ լուսնկան,
Սարեր, մտեք քուն,
Սարով կանցնի իմ ճամփան՝
Կերթամ յարիս տուն։

Սերս գաղտնի թող մնա,
Սերս յարիս պես,
Ճամփեն պիտի չիմանա
Թե ո՞ւր կերթամ ես...

Ու մրմունջով յուրդերն հասավ, լսեց տրտունջն աղբյուրի,
Մոր պես դեմից ձեռքով կանչեց նրան Սիփանն իր բարի,
Ու աղջիկներ հայտնվեցին, ինչպես ծանոթ ծաղիկներ,
Բայց նրանց մեջ վարդը չկար, ու փուշ թվաց սարն անսեր...

Աղջիկներ, ա՜խ, չե՞ք տեսել
Շվաքն իմ յարի,
Ինչո՞ւ է պղտոր գալիս
Աղբյուրն իմ սարի։

Ո՞ւմ աչքն է յարիս տեսել՝
Էն աչքին մեռնեմ,
Էն աչքը թող ինձ նայե՝
Կարոտս առնեմ։

Ա՜խ, Սիփան սարը տեսա,
Տեր չկա սարիս,
Երազիս չարը տեսա,
Ո՞ւր տարան յարիս։

Բայց տխրեցին ծաղիկները ու նա վարդից լուր չառավ,
Եվ կարոտի կայծը սրտում մի հրդեհի բոց դառավ,
Ու ձին քշեց ձորերն ի վար՝ մտամոլոր մտով դյուղ,
Երբ տխրաբեր իրիկունն էր կտուրներից քաշում ծուխ,
Եվ հյուր մնաց մի պառավի ու վարդավառ, վաղ ծեգին
Լսեց հեռվից դհոլ զուռնի հունչն ու թինդը ցնծագին,
Ականջ դրեց, ասաց «Մամիկ, այս ի՞նչ ձայն է, որ կուգա,
Ծովասարի հովերի պես մեկ շնկում է, մեկ չկա»։
Ու պառավը խոսեց մեղմով. «Ա՜խ, ի՞նչ ասեմ, որդի ջան,
Հեռվից եկել հարս են տանում Զարեհ բեկի աղջկան,
Բայց լալիս է խաչեվարեն ու քողի տակ հառաչում,
Քուն թե արթուն, երազ դառած՝ Սիամանթո է կանչում...
Բայց թե չուզեց Զարեհ բեկը հարս տալ աղքատ իր դուլին,
Ու կորցրեց վարդ աղջիկը սրտի մալուլ բլբուլին...»
Լռեց պառավն ու ամպի պես Սիամանթոն մռայլեց,
Ու աչքի մեջ անհույս մի միտք՝ մի արցունքի պես փայլեց.
Ասաց. «Մամիկ, ա՛ռ մատանիս, ինձնից հարսին տար նվեր,
Թող երազը մուրազ լինի, թող ողջ մնա հայրը ծեր»։
Ու մնաց հյուրն արցունքի մեջ՝ աչքը ուրախ մի դարձի.
Պառավն առավ սիրո գաղտնիքն ու մատանին սիրածի,
Ու պահելով քիշմիշի մեջ շող մատանին հանց մի հույս՝
Ելավ՝ հարսին ի տես գնաց, գնաց հույսի աչքալույս...

2.

Ուր գառնարած հովվի հանդեպ՝ վագր են դռները բեկի,
Լուռ մտավ ներս պառավն անտես՝ ինչպես զեփյուռն օրեքի,
Դեռ հուզվում էր հարսանիքը հանց դինեդետ մի պղտոր,
Բայց գետափին հարսը լացող մի ուռի էր գլխիկոր.
Ու դեռ կոկոն թասերի մեջ վարդ գինին էր փթթում,
Միայն հարսի սև բաժինն էր՝ արցունք դառել դավաթում.
Նստել էր նա կակաչի պես՝ կարմիրն հագին, սիրտը սև,
Ինչպես թռչնակը վանդակում՝ թևերը կախ, սիրտը թև...
Ու շիթ առ շիթ արցունքները հասնում եզրը շուրթերի՝
Կարծես փնտրում էին լալով հետքը՝ հովվի համբույրի...

Ու թախծում է նա գլխիկոր ու չէր նայում ոչ մեկին,
Երբ մոտեցավ պառավն հուշիկ, մի թաշկինակ իր ձեռին.
Ու շշնջաց՝— «Բարի ծաղկես, այս էլ ես եմ քեզ բաշխում».
Ու քիշմիշը դողը ձգեց թաշկինակով իր նախշուն.
Հարսը բացեց համբ ու անփույթ, բայց քիշմիշի մեջ հանկարծ՝
Ինչպես լուսինն աստղերի մեջ՝ իր մատանին շողշողաց...
Ու կայծակող հույսի թափից խաչեզարեն դալկացավ,
Բարակել էր սիրտը վշտից՝ խնդությունից ուշքն անցավ։
Պառավն ահով բարձրացրեց ընկած գլուխն իր ձեռին.
Շոյեց այրվող ճակատն հուշիկ ու ջուր ցանեց աչքերին։
Ուշքի եկավ խաչեզարեն՝ «Ո՞ր սարից ես գալիս դու,
Քեզ ո՞վ տվեց այս մատանին, նրան էլ չե՞մ տեսնելու.
Ինձնից պաղել՝ ե՞տ է տալիս, էլ չի՞ պահում իմ ճամփան,
Ասա, մամիկ, ի՞նչ հնարով, ի՞նչպես տեսնեմ ես նրան»...
Ու պառավը մայրաժպիտ՝ այսպես խոսեց գլխիկոր՝
— «Իմ ղոնաղն է, մի գեղեցիկ, մի թուխ ջահել ձիավոր,
Երբ նա լսեց քո հարսնառի ուրախ ձայնը մեր կոնից,
Կարծես մահվան խոսքը լսեց՝ գույնը թռավ երեսից...».
Ու անհամբեր՝ խոսքը կտրեց խաչեզարեն սրտադող.
— «Իմ չսիրած մարդն է գլխիս հորս ձեռքով գցել քոզ,
Գնա, մամիկ, ասա նրան, խաչեզարեն քո սերից՝
Այս էլ քանի՞ ծարավ գարուն՝ աղբյուր հանեց աչքերից.
Ասա՝ հիմի մնացել է մեկ օր միայն ու մի ճար՝
Էգուց մորս գերեզմանին ուխտ եմ գնում՝ Ծովասար,
Կանուխ կերթամ, ասա թող գա, ասա թող գա՝ ինձ տանի,
Ասա թող գա՝ որսը տանի, թե արծիվն է Սիփանի»։
Ու դուրս ելավ պառավն ուրախ ու անմրմունջ իջավ վար
Ու լուրն իբրև ճրագ բերեց մթնած սրտին սիրահար։

3.

Գիշերն իջել Ծովասարին ու հովն անգամ չէր հևում,
Եվ լուսնյակի մայր ձեռի տակ՝ գիշերն օրոցք էր թվում,
Ու նրա մեջ լեռ ու ամրոց, օբա ու կոն ու խրճիթ՝
Օրորվում են՝ սուզված պես-պես երազների մեջ վճիտ.

Բայց դեռ արթուն ու անլուսին մթնած սրտով՝ երազում՝
Սիամանթոն Ծովասարին իր լուսնին էր սպասում...

Լուսնկան նոր է, նոր է,
Իմ լուսնակ յարն է կորե,
Սիրտս աստղերի նման
Հազար ու մի կտոր է...

Ա՜խ, նա շատ էր հոգնել վշտից ու նինջն իջավ աչքերին,
Ու չիմացավ ինչպես քնեց գերեզմանի պաղ քարին։
Երազի մեջ խաչեզարեն մեռած մոր հետ երևաց,
Ու մայրն ասաց. «Սիա՛մանթո, լույս աղջիկս քեզ մնաց,
Առ քո թևին, թռչան ես դու, ու թռցրու, տա՛ր Սիփա՛ն»...
Ու համբարձավ մայրը նորից՝ հովվին թողած աղջկան.
Ու մուրազի վարդը պոկած Սիամանթոն շոր թևից՝
Երազ ձիով փախցնում էր նրան կյանքի ափերից...

2.

Արևն ելավ Ծովասարից՝ բռնեց կապույտ իր ճամփան,
Սիամանթոն աչքը բացեց ու չգտավ աղջկան.
Մի զույգ ոսկի ճաներ տեսավ ու վերցրեց նա խսկույն,
Իջավ սարից ու ձեռնունայն որսկանի պես մտավ տուն,
— Մամիկ, հեյ վախ, խաչեզարեն չեկավ մթնով թե լուսով,
Քնել էի, զարթնա՝ չկար ու մնացի քո հույսով.
Այս վեգերը գտա, մամիկ, ընկած էին ծաղկանց մեջ,
Առ՝ քո բախտն է։ Լռեց տղան, ու պառավը կռահեց՝
— Նա եկել է, Սիամանթո, ետ գնացել խռոված,
Նա՞ է ձգել այս վեգերը՝ երբ տեսել է քեզ քնած...
«Դեռ մանուկ ես»,— ա՛յս են ասում քեզ այս վեգերն աղջկա,
Թակ ծիրան է քո սիրտը դեռ՝ այսօրվա քունդ է վկա...
Գնա ու ճան խաղա գյուղում, սիրո ճամփեն մի բռնի,
Դեռ մանուկ ես, սիրո մարդ չես, թռչանը չես Սիփանի։
Սիամանթոն ամոթահար՝ շիկնեց ինչպես մի խնձոր,
Ու պառավից՝ իր հույս մորից նորից խնդրեց դլխիկոր.

— Գնա, մամիկ, վերջին անգամ՝ թող իր խոսքը տա վերջին,
Քո քաջն, ասա, քո կարոտն է լալիս ձիու ականջին...

Ե.

Գնաց պառավն ու ետ եկավ ու վերջին ճարը բերեց,
Ու լուրն ինչպես սիրածի շունչ՝ հովվի հոգին համբուրեց.
— Խաչեզարեն այսպես ասաց. «Եթե սիրո մարդ է նա,
Եվ թե ինքն է Սիամանթոն, թե սեր ունի ինձ վրա,
Էգուց սիտի յարին տանեն հարսանիքի հանդեսով,
Թող գա ձիով՝ ինձ փախցնի, թող չմնա ինձնից սով...
Թե չէ, ասա, էլ ճար չկա ու թող մեկ էլ չքնի,
Բախտը, ասա, մարդու չեն տա, թող իր բախտը փախցնի...»։

ԵՐԴ ԵՐՐՈՐԴ

Ա.

Լեռներ, լեռներ իմ հայրենի, ի՞նչ եք խորհում, ա՜խ, լեռներ,
Քար աշխարհից դուք խառված, հեռու քաշված հովիվներ.
Ցած են նայում, ա՜խ, ի՛մ Սիփան, ուսիդ ամպե յափունջին,
Ասես բան ես ուզում ասել Գրկուռ սարի ականջին,
Բայց չե՛ս կարող ու տխրում ես, ու Գրկուռը թախծալից
Աչք է պահում Առնոս սարին, որ դուրս կուգա անտառից...
Հազար ու մի աղբյուրները՝ որպես մանյակ իր կրծքին՝
Ծովասարն էլ հարսի տեսքով դյութել կուզե Վարագին։
Բայց վանքն առած իր շրթունքին՝ իբրև աղոթք ու մրմուռ՝
Սաղմոս կասե երկինքն ի վեր Վարագա լեռն ահա լուռ,—
Այսպես իրար փարվել կուզեն լեռներն իրար կարոտած,
Ու չեն կարող ու թախծում են կարոտներով՝ քարացած...
Բայց Սիփանը ամպի տակից որդու վիշտն է կռահում,
Որ ձին հեծել ու դեռ վշտի երգով՝ ճամփա էր պահում.—

Քու հեր՝ ոսկի քամար կապեր,
Իմ հեր՝ չուներ տրեխ ոտի,

Քու մեր՝ լուսնակ՝ աշխարհ խաբեր,
Իմ մեր՝ աստղիկ՝ մեջ սև ամպի.

Դու՝ հոր ու մոր ձեռին ծաղկած,
Ես ծիլ՝ ելած քարի տակեն,
Ախ դու կրակ, դու հարսնացած,
Ու ես կերվեմ քու կրակեն...

Հանկարծ աչքը նա վեր թեքեց՝ կռինչ լսեց արծվենի,
Տանում էին անդղները մի սպիտակ աղավնի։
Բայց արծիվը թռավ՝ զարկեց ու խափանեց նրանց չուն՝
Ետ խլելով անդղներից՝ երկինք տարավ աղավնուն...
Ցիավորը ժպտաց մի պահ, բայց ժպիտը լուռ հանգավ.
— Ախ մի հավքի չա՞փ էլ չկամ,— ու հին վշտի մեջ ընկավ.
Ցին սմբակով հողը փորեց ու վրնջաց հանկարծ ձին,
Հեռվից կարծես ձիեր ելան ու նիզակներ- ճոճվեցին,
Հեռվից ճամփի փոշին ելավ, ձիեր ելան սանձաթող,
Ու երևաց հարսնահանդեսը՝ դլխին փոշին՝ հարսնաքող...
Ցիավորը մեկից թռավ դեպի ձիերն ակնդետ,
Ու ետ կանգնեց հարսնառն ահով՝ ինչպես ժայռին դիպչող դետ,
Ու մխրճվեց ձիերի մեջ Սիամանթոն աննկուն,
Որպես արծիվն իր այն տեսած, որ փախցրեց աղավնուն.
Ու ծառս էին լինում ձիերն հարսնառի լաց-կականում,
Հուր ու տապից, կռվի թափից օդն էր շուրջը շիկանում,
Եվ շիկացած օդում կարծես դաշույնները հալվեցին՝
Միայն կոթերը փղոսկրյա՝ ձեռքերի մեջ մնացին...
Եվ ընկրկեց մահախուճապ խառնամբոխը հարսնառի,
Բայց զարկում էր Սիամանթոն, ինչպես շանթը մի ծառի,
Ու կոտրատեց, մեկդի վանեց նիզակ ճուղքերը մեկ-մեկ,
Մնաց բունը՝ բուն թշնամին՝ մնաց բեկը սրտաբեկ.
Ու սիրածին Սիամանթոն տեսավ թարքին այն բեկի,
Ու կրծքի տակ սրտի զարկը թվաց հարված մի տեղի.
Ու մոլեգնեց Սիամանթոն, մահով բացեց իր ճամփան,
Թռա՞վ, խլե՞ց բեկի գրկից իր երազի աղջկան,

Ու ձախ ձեռով գրկեց ամուր, աջով զարկեց թշնամուն,
Զգեց ձիու ոտների տակ ու խթանեց իր ձիուն
Ու արծվի պես իր աղավնուն իր գիրկն առավ ու թռավ՝
Երեք օրվա ճամփեն մի սանձ, մի զարկ ու մի շունչ արավ...

Շ.

Վերջին շողերն էր շռայլում հոգնած արևն ու անփույթ
Լեռնաշխարհն էր արդեն հագնում մշուշ կապան իր կապույտ.
Ծալկանց միջով, լեռանց լանջով, մուրազ ձիով անվեհեր
Սիամանթոն սիրածն առած՝ կելներ Սիփան սարն ի վեր,
Կարծես սիրո հավերժական աստծո մոտ էր բարձրանում,
Որ վերջալույսն իբրև ոսկի հարսնաքող էք ծածանում...
Եվ հասնելով ակն աղբյուրի՝ ձիուց իջան շունչ առած,
Իրենք ասես երկնքի մեջ, երկիրն, էյ հե՜յ, ցած մնաց...
Եվ աղբյուրի կանաչ գլխին վրան զարկեց բախտավոր,
Երբ աստղերը ցած նայեցին՝ աչքերի պես իրենց մոր,
Ու շշնջաց մի համբույրով Սիամանթոն սիրակեզ,
— Ջեմ հավատում, խաջեզարե, մի՞թե դու իմ գրկումն ես.
Ու համբույրից շիկնեց աղջիկն՝ ինչպես կոկոն բացվելիս,
Կույս աչքի տեղ այտի փոսն էր «աչքով անում» ժպտալիս.
Հանկարծ ինչպես հավերժահարս՝ լուսինն անցավ աղբյուրից.
Ընկավ աղջիկն հովվի կրծքին, ասես հալվեց համբույրից.
— Խաջեզարե, սարը սեր է, էլ չե՞ս ուզում իջնել ցած...
— Սիամանթո, սերը սարն է՝ մեռնենք սարը քո տիրած...
— Խաջեզարե, սիրուց բացի ուրիշ դրախտ էլ չկա,
Ու համբույրով թերթեր պոկեց վարդ շուրթերից աղջկա.
— Ախ, այս գիշեր ինչ անուշ է՝ համբույրները շրշացին,
Ու գգվանքից կույս կոկոններն իրենց վարդերը բացին...
Սարի գիշեր, սիրո գիշեր, մեղրագիշեր Սիփանի,
Սիրո գիշեր, տարի դարձիր, համբույրները մի տանի...
Հովե՜ր, հավքե՜ր, ծաղկո՜ւնք, ջրե՜ր, ժայռե՜ր, աստղե՜ր,
եղնիկնե՜ր.
Դուք էլ, դո՜ւք էլ համբուրվեցեք, պսակվեցե՜ք այս գիշեր,
Ա՜խ, անուշնան թող համբույրով սիրո վշտերն ու աշխարհ,—

Ու հալվեցին սիրտ բոցին՝ աշխարհն ասես էլ չկար...
Սարի՞ գիշեր, սիրտ՞ գիշեր՝ աստղաշարը ճակատին,
Երազն առած, մուրազն առած հանգան սարի դագաթին...

3

Ա՜խ, մարդն ի՞նչ է, որ երկնքի ճակատագիրն է կարդում,
Բայց թե ի՞նչ կա իր ճակատին՝ դեռ չգիտե աշխարհում...

4

Արդեն սաղմոսն էր ավարտում ամեն կաքավ իր քարին,
Արդեն արևն էր արթնանում, ոսկի ցանում սարերին.
Բայց սիրահար սիրտը սրտին՝ քնած էին դեռ անդորը՝
Հովվի հաղթած նիզակի տակ, յափունջու տակ բախտավոր...
Հանկարծ քամին ագռավի պես նրանց գլխով անց կացավ,
Ու նրա պաղ թևի զարկով խաչեզարեն արթնացավ,
Ու թվաց թե աղբյուրի մոտ՝ ամպը ամպին ձայն տվեց,
Ու բուղագոռ մի աղմուկից խաչեզարեն գունատվեց՝
Սիրտը քամվեց ու սև աչքից մի տաք կաթիլ ծանրացավ
Ընկավ քնած քաջի դեմքին ու նա իսկույն արթնացավ.
— Ի՞նչ պատահեց, խաչեզարե, ա՜խ, ինչո՞ւ ես գունատված.
Ու գունատված իր ծալիկը քաջին այսպես մրմնջաց.
— Զարթնել էի, երբ որ հանկարծ ձորից եկան աղմուկով՝
Այս աղբյուրից ջուր խմելու՝ քառասուն ցուլ ու մի կով.
Բայց ջրի մոտ խառնվեցին ու բուղագոռ ու վայրի
Կռիվ բացին, կովի համար, աղեղ-նետով պողերի.
Գլուխ գլխի՝ եղջյուրներով իրար ուսեր ոլորին,—
Շատի եղջյուրը փշրվեց, բայց մեկն հաղթեց բոլորին,
Քեզ հիշեցի Սիամանթո...
Բայց սև բաշովն ահագին
Շատ էր նման քո սպանած սև-ձիավոր այն բեկին,
Բայց նա, ախ, նա զարկեց, հաղթեց այն ցուլերին անվեհեր,
Խլեց կովը ու աղբյուրից ելան, կորան դարն ի վեր...
Ու չիմացա էլ ինչ եղավ, սիրտս չարն է գուշակում,
Ախ էն բեկն էր ժպտում աչքիս՝ էն սև ցուլի սև աչքում»։

Լռեց գունատ Խաչեզարեն, Սիամանթոն մռայլեց,
Լարեց աղեղն իր հոնքերի և աչքի նետը վայլեց.
— Մի՞թե իմ սերն հարամ է ինձ ու չի ժպտում ինձ խուզան,
Այսպես ասավ շարագուշակ՝ Սիամանթոն ինքն իրան,
Ու խելահեղ ցած սլացավ՝ որոնելով սև ցուլին,
Ճակատագրի ձորերն իջավ, սարին թողած մարալին...
Բայց մեկն ասես փախավ ժայռից... այն ինչ՝ հովիվն քարայրի՝
Դունչը կովին՝ որոճում էր ցուլ մի անգեղ ու վայրի։
— Սրա մեջ է մտել ոգին իմ սպանած այն բեկի...»
Ու մթագնած Սիամանթոն բռնեց բաղուկն իր տեգի
Ու շանթի պես թռա՜վ, ղարկե՜ց, խոցված ընկավ ցուլն անհույս՝
Ու հանց լեզուն իր անեծքի՝ արյան բոցը թռավ դուրս...
Ու կտրիճը դաշույնն հանեց ու ժպալով մոտ գնաց,
Որ այն ցուլի սիրտը հանի, յարին տանի, բայց հանկարծ...
Ախ, ցուլն հանկարծ մի եղջյուրով այնպես խփեց թափով թունդ,
Որ քարափից Սիամանթոն ընկավ·մթին մի անդունդ,
Ընկավ՝ մի չոր ու ծեր ծառի, կուրծքը մտավ ոստը ցից՝
Սև թրի պես կուրծքը ճեղքեց ու դուրս ելավ թիկունքից...

***

Հանկարծ ինչպես պատյանից թուր՝ ցոլաց կորավ ձորն ի վեր՝
Ինչպես տեսիլ շարագուշակ աղեղնավոր մի ստվեր...

5·

Բառաչում էր մեռնող ցուլը, բառաչո՜ւմ էր հառաչո՜ւմ,
Իսկ անհանգիստ Խաչեզարեն՝ սարից յարին էր կանչում.
— Լո՜, լո՜, ո՞ւր ես, Սիամանթո՜, ո՞ւր մոռացար քո յարին.»
Ու հովն հեծեց. «Հանգավ լո՜-լո՜ն, դու մնացիր պաղ սարին».
Ու սիրտը դող՝ Խաչեզարեն, արագ իջավ դարն ի վար,—
Տեսավ որսը՝ տեգը կրծքին, բայց ա՜խ, որսկանը չկար.. .
Ու ահն իսկույն սիրտն ընկավ, ծռեց ճամփեն աղեկեզ,
Դեմը բացվեց անդունդը սև՝ սև ցուլի սև աչքի պես.
Ու ցած նայեց՝ գլխին տալով. գոռոցն ընկավ սար ու ձոր.

— «Սիամանթո՜, քեզ ի՞նչ եղավ, ո՞ւր ես ընկել վիրավոր.
Սիամա՜նթո՜, վե՜ր ել, ասլա՜ն, քեզ ո՞վ զարկեց, ո՞վ գցեց»։
— «Բա՜խտս, բա՜խտդ, Խաջեզարե՜», ձորից մի ձայն հառաչեց-
— Սիամա՜նթո՜, ո՞ւր է որսդ, լուռ է լեզուդ քաղցրախոս,
— «Խաջեզարե՜, լաց մի լինի, որսկան էի՝ դարձա՜ որս».
— «Սիամա՜նթո՜, ցավի ժեռը ինչպե՜ս պահեմ իմ կրծքին».
Ու քար վշտից ճերմակեցին ջահել մազերն իր գլխին...
— Ո՜վ է՞ լսել՝ զարկված որսը ետ՝ որսկանին սպանե,
Ո՞վ է՞ լսել վայրի ցուլը սիրող սրտեր բաժանե,
Լո՜, լո՜, վա՜յ, լո՜՜, քո սրինգը էլ ո՞վ պիտի նվագե,
Ծակծկվեցի սրնգիդ պես ու երգս արուն-արցունք է»։
Ու գոռում էր, գլխին տալիս, ձորի շուրջը ման գալիս,
Ասես մեռած որդու վրա մի մայր լիներ ողբալիս։
— Խաջեզարե՜, անձայն ողբա, ձայնդ նետ է սրտիս մեջ,
Բայց Խաջեի արցունքն ասես ծովից կուգար՝ չուներ վերջ.
— Խո՜րն է վերքդ, խո՜ր կտքաս, ի՞նչպես կանգնեն աչքերն իմ,—
Սիամա՜նթո՜, մի՛ հառաչե, Սիամա՜նթո՜, կմեռնիմ...
Սիամանթո՜, վե՛ր ել, ի՜մ սեր, տես՝ մազերս են ճերմակել,
Կուզե՞ս՝ մազերս վա՜ր կախեմ, Սիամանթո՜, բռնի՛ր, ե՜լ».
Եվ հյուսքերից մեկը կտրեց՝ իրար կապեց՝ կախեց վար՝
Բայց չհասավ... ու լալի՜ս էր, ու գոռո՜ւմ էր խելագար...
Ու դեռ ձորից նվազ մի ձայն՝ հեծեծում էր՝ մի՜ մնա,
Խաջեզարե՜, արև՜ս քեզ, Խաջեզարե՜, տո՜ւն գնա...».
— «Սիամանթո՜, գի՜րկդ կուգամ, էլ ինձ համար տուն չկա՜,
Սինամ հավքի թևերս ընկան, էլ ինձ համար բուն չկա...».
Ու սև ժայռի հոնքերի տակ, որ կախվեցին ահավոր,
Լալիս էին աղբյուրները՝ աչքերի պես նրանց մոր...
— «Ո՞վ է տեսել գարուն օրով, կանաչ սարին ձյուն դնի,
Սիամա՜նթո՜, գիրկդ կուգամ, առանց յարի մի քնի»։
Ու մուժ կիջներ սարե ի սար, կիջներ նրանց վշտի պես,
Լացով իջնող դումանը պաղ նրանց պատանքն էր կարծես.
Դուման կիջներ Սիփանն ի վար ու ձյուն կիջներ ու քամի,
Ու լցվում էր ձորը լացով այն որբացած այծյամի։

«Քամիներ, իջեք
Մաղերս պոկեք,
Ա՜խ, էլ մաղերս դուրդուրող չունիմ.
Ագռավնե՛ր, իջեք,
Աչքերս հանեք,
Ա՜խ, էլ աչքերս համբուրող չունիմ...»։

Հանկարծ ինչպես պատյանից թուր՝ ժայռից մեկը թռավ դուրս,
— Դու համբուրող ունիս, խաչե, լաց մի լինի էլ անհույս.
Լուսի կտոր իմ խաչեզար, բաժին չէիր շոբանի,—
Նա իմ նետով բաժինն առավ ու քո մահը թող տանի...
Էն՝ սև ցուլի եղջյուրի հետ՝ էն իմ նետն էր սրընթաց,
Ե՛ս էի որսն՝ որսկան զարկող՝ ժայռի ետև թաքնված,
Նա քեզ խլեց իմ եղբորից՝ Ազիզ բեկի մեծ որդուց,
Բայց պատժվեց փոքրի ձեռով, ետ մի՛ կանչե կսկծուց,—
Ով է տեսել, որ շոբանը փեսա լիներ բեկ մարդուն,
Խաչեզարե, մի հառաչե, ետ մի կանչե, զնանք տուն՝
Ես քեզ կառնեմ...»

Բայց խոլ ճչաց խաչեզարեն իմ անբիծ,
Ետ չնայեց ու կռացավ պոկեց մաղերն իր գլխից,—
Ու ձայն տվեց անդունդն ի վար՝ «Քո խաչեն եմ, նայիր, տես,
Սիամա՜նթո՜, ինձ էլ տեղ բաց, Սիամանթո՜, կուգամ քեզ...
Հովե՜ր, ծաղկանց խունկը վառեք, մեզ թաղեցեք առանց քար»։
Կանչեց խաչեն ու աչքը խոսի՝ նետվեց ձորը գլխիվայր,
Ժայռին փլվող ալիքի պես նաղոկ կուրծքը փշրվեց,
— «Ա՜խ, ինչ արիր»՝ վերջին շնչով Սիամանթոն ձայն տվեց.
Ու հեծեծաց խաչեզարեն՝ վերջին շնչով իր անձայն՝
— «Սիամա՜նթո՜», ու փշրված սիրտը՝ սրտի՝ լո՜ւռ հանգան։
Վերջին անգամ հովն հեծեծաց՝ ասես շո՜ւնչն էր տղայի՝
— Խաչե՜զա՜րե՜սս... ու հավիտյան լռեց անդունդն ամայի...

ՎԵՐՋԱԲԱՆ

Իսկ այն ձորում, ամեն տարի, ամեն գարնան բացվելուն՝
Երկու ծաղիկ են հայտնվում՝ երկու կակաչ տխրանուն,—
Ասում են, թե չկար երկրում ոչ մի ծաղիկ՝ սիրտը սև,
Այն օրվանից աշխարհ եկան կակաչները սրտասև,
Երբ որ Խաջեն, Սիամանթոն ընկան սիրո կես ճամփին,
Ընկան, հանգան, բայց չկորան ու կարոտով սրբագին
Աշխարհ եկան՝ կակաչ դարձած, որ բացվում են դեռ այսպես՝
Իրենք՝ կարմիր, սրտերը՝ սև՝ իրենց էն սև՝ բախտի պես։
Բայց թեքելով գլուխ գլխի՝ հավերժ իրար են նայում,
Մահվան մեջ էլ՝ հավերժ սիրով՝ հավե՞րժ իրար փայփայում...

1935—40 թ. թ.

ՊՈԵՄ ԱՆԽՈՐՍԴԻՐ

Ցավը տվեց սարերին՝
Սարերը չտարան...
Ցավը տվեց մարդուն՝
Մարդը տարավ.
(Մորս խոսքերից)։

I

Երբ անհայտ ոգին՝ աշխարհն արարող,
Որ աստված կոչվեց դարեր ու դարեր,
Ստեղծեց երկինք, արև, ծով ու հող,
Ստեղծեց համայն տիեզերքը մեր,
Եվ աշխարհ բերեց բիրտ հողից մարդուն,
Բաժանեց բոլոր իր բարիքն անհուն.

II

Լույսի հրճվանքը տվեց երկնքին,
Կապույտ ծիծաղը ծովին ծավալեց,
Ճերմակ ժպիտը սփռեց ձյուներին,
Վեհության խինդը լեռներին տվեց,
Դաշտերին՝ կանաչ ժպիտը գարնան,
Դայլայլը տվեց հավք ու հովերին,
Հողին՝ բերկրանքը տվեց մայրության,

Սիրո խայտանքը տվեց ամենքին,
Ու բոլոր վարդերն իր ուրախության
Շաղ տվեց այսպես նորաստեղծ երկրին։

III

Բայց վշտի փուշը իրեն մոտ թողեց՝
Ու չէր իմանում ում բաժին հաներ,
Ով ուներ մի սիրտ այնքան լայն ու մեծ,
Որ վշտի խայթը անխռով տաներ։
Ու խորհեց խորին արարողը մեծ
Եվ անտեսորեն երկրում թափառեց.
Տեսավ ցնծում է սիրտը հավքերի,
Խենթ համբուրում են գազաններն իրար,
Ու նրանց տվեց խայթը ցավերի՝
Ցրելով նրանց խինդը խելագար։
Եվ իսկույն աշնան տերևների պես
Ցավից սգացին հավք ու ծաղիկներ
Ու կակաչների սիրտը սևացավ,
Այն օրից իրենց լեզուն կորցրին
Ու դեռ նետում են կաղկանձով անբառ
Գազաններն իրենց անեծքը լուսնին։
Եվ դթաց նրանց արարողն ասես
Նայելով երկրի խրոխտ լեռներին,
Լեռները, ասաց, հզոր են ու վեհ,
Գոռոզ է նրանց կեցվածքն իմ աչքին,
Թող քիչ խոնարհվեն ու խորհեն ինձ պես,
Ասաց ու վիշտը տվեց լեռներին։
Եվ հառաչեցին լեռները ցավից,
Անեծք ժայթքեցին հրաբուխներով,
Ցավից լանջերին խոցեր բացվեցին
Դարձան անդունդներ ու խորանալով
Այն սեգ լեռների տանջանքը լացին,
Եվ արցունքները գետերի փոխված՝

Իբրև լեռների լեզուն փրփրած՝
Խոցված լեռների անեծքն են լալիս,
Իսկ դաղաթներին ձյունն հավերժացած
Սառած արցունքն է, որ ցած չի գալիս։
Գթաց լեռներին արարողն ու մեծ
Ցավն առավ՝ անհոգ դաշտերին տվեց,
Վերքեր բացվեցին դաշտերի կրծքին,
Եվ հառաչեցին դաշտերը դարեր
Ու դեռ մնում են նրանց վերքերից
Անապատները որպես սպիներ։
Գթաց դաշտերին արարողը մեծ՝
Մռայլ նայելով ծովի ծիծաղին,
Առավ վշտի շանթն ու ծովը նետեց,
Ու ծովն անդնդից ելավ կատաղի,
Մինչև աստղերը ծառս եղավ ցավից,
Այնպես ծառս եղավ, որ ալիքների
Մատները կարծես աստղերն հանեցին՝
Որպես երկնքի աչքերը անգութ,
Որ նույնպես լացին...
Այնպես ծառս եղավ, որ հատակներից
Քարացած արցունք՝ ավազն երևաց,
Դարեր մոլեգնեց ու հետքը ցավի
Ալիքների մառ կնճիռը մնաց՝
Սղծելով չքնաղ երեսը ծովի։
Ծովին էլ գթաց արարողը լուռ,
Ցավն առավ ծովից՝ երկնքին տվեց,
Ամպերով գոռաց երկինքը զարհուր,
Ցավից անձրևը կարկուտի փոխվեց,
Անեծք կայծակեց ու լացեց անհույս,
Ու մնաց լուսինն աչքում երկնքի
Որպես մի շիթը սառած արցունքի.
Իսկ հավերժական ցավից հալածված
Աստղերն այն օրից ասուպներ դարձած
Թռան ու մեռան իրար գրկի մեջ,

Եվ դարեր ցավը երկնքում մնաց՝
Ցրեց աստղերի դաշնությունը պերճ։
Ու ցավն առնելով արարողն էլի
Խորհում էր՝ ո՞ւմ տար, որ դեթ մի դիշեր
Անխռով տաներ պարգևն ահալի,
Որ, ավա՜ղ, ինքն էլ չէր կարող տանել։
Սոսկաց, թե ցավը կմնա իրեն...
Ո՞ւմ տար այս անգամ՝ խորհում էր, նայում,
Երբ տեսավ մոտիկ հովտում՝ տարտարեն
Ժպտում էր մարդը՝ վագրի ճանկերում...
Տեսավ խաղաղվեց խռովյալ ոգին,
Եվ ասաց՝ լոկ սա՛ կարող է տանել,
Ու մարդուն տվեց վիշտը երկրային
Եվ ինքը թեթև սլացավ երթեր...

IV

Եվ ծնվեց մարդու դեռ վայրի սրտին
Ցավի զգացումն և ահը մահվան,
Եվ մարդն այսուհետ խեթ նայեց վագրին՝
Սրելով աչքը ժանիքի նման։
Այդ ցավն էր մարդու աչքերը բացեց,
Եվ մերկ ուղեղը զգեցած ահով՝
Զգաց, որ մա՜հն է վիշտն ամենամեծ
Եվ կռվի ելավ մահվան դեմ մահով,
Գերեզմանի դեմ դնելով մանկան
Ոսկի օրոցքը՝ իր հույսն օրորեց,
Իր մահը դարձրեց գույի հոլովում
Ու սերնդաշար ապրեց վերստին՝
Տանելով դժնի վիշտը մոր մահվան,
Դիմացավ որդոց անհետ կորստին,
Տարավ դառնանուշ տանջանքը սիրո,
Տոկաց բնության խոլ աղետներին,
Ու լցված կյանքի ծարավուտ սիրով՝

Դիմացավ այրող վերքերի ցավին։
Բայց իր թույնի հետ վիշտն էլ մեղը ուներ։
Եվ առագաստը բացեց մտածման
Վիշտը՝ մեծ դայակն իր մանուկ մտքի,
Վիշտը, որ դարձավ հույսի օթևան...
Ու երբ նորախոհ մարդը մի վայրկյան
Առաջին վիշտը հույսի մեջ խեղդեց,
Ոգին հիացքով հայտնվեց անձայն՝
Գոյության կովի ցավերն էլ տվեց.
Բայց մարդը կրա՛կ պոկեց ժայռերից՝
Լույսի ծնունդով ցավերը մեռցրեց,
Ու կենաց պտուղն հանապազօրյա
Իր տառապանքի անտառում գտավ,
Ու ոգորանքով հաղթեց ա՛յն վշտին,
Որից խոլական մամոնտը կորավ...
Եվ դարեր ծխաց սիրտը մարդկային,
Լցրեց տիեզերքն իր վշտի ծխով,
Բայց չկորցրեց իր հույսն աստղային
Եվ իմաստությամբ իր նորաբողբոջ
Դարեր գուպարեց իր նմանի դեմ,
Որ լուծ էր դարձել իր բյուրն ուսերին....

V

Բայց անադորույն ոգին նորից նոր՝
Մարդու մեջ քամեց դետերով պղտոր
Իր տիեզերքի ցավերը բոլոր,
Եվ հրամայեց ապա մայր հողին,
Որ մարդու առջև բարիք չփռե,
Եվ անապատի փոխվեց տխրագին
Մարդու աչքի դեմ՝ դաշտը զմրուխտե...
Բայց ինչքան շատ է մարդն իմաստնանում՞
Իր ցավերն այնքան հեշտ է դարմանում։
Ու մարդը խորհեց և մառ դաշտերից

Փախած գետերը ձորերից հանեց
Եվ անապատված դաշտերում սփռեց՝
Եվ գինի քամեց դաժան դաշտերից
Եվ մեղրագետեր քրտնքով քամեց,
Եվ դժնատեսիլ հոգսերով ելավ
Պեղեց ծովերը, լեռները պեղեց,
Աստծո թաքցրած գանձերը գտավ
Ու մտքի ձեռքը աստղերին մեկնեց՝
Եվ լուսնի վրա մահեր նշմարեց
Եվ կյանք նշմարեց աստղերի վրա,
Եվ մահվան ահից՝ իմաստնանալով՝
Գտավ հյուլեի հոլովումն անմահ,
Շարժմունքն անընդմեջ ու դարե՛ր խորհեց,
Զգաց, որ երկու անգամ չի կարող
Անցնել նույն ջրով նույն գետի՝ անցնող,
Զգաց, որ մահը և կա և չկա,
Որ նյութն ինքնագո շարժվում ինքն իրեն
Մեռնում, և հրա՛շք՝ ծնվում է նորեն,
Որ ոչ թե աստված ստեղծեց մարդուն,
Այլ մարդն է ահից ստեղծել աստծուն,
Դարերի մթնում իր խարխափանքի
Նյութին անգիտակ՝ նա երկնեց ոգի,—
Մարդը, որ ծնվեց ծովափնյա տիղմից
Ու դարձավ միակ խոհը բնության,
Կռահեց, որ հողն է աճյունն արևի՝
Եվ եղե՛լ է, կա՛, անստեղծելի՛,
Ու անեղծելի՛ ու դարեր խորհեց
Եվ իմաստությամբ իր լուսաբողբոջ՝
Իր արցունքի պես սրբելով ընկճեց
Իր ցավերի հետ ցավերն ընկերոջ,—
Եվ կործանելով իր մեջ գաղանին՝
Նա իր մեջ զգաց երազներ վսեմ,
Լույսը դարձնելով իր սպեղանին՝
Անցավ ցավերի ճամփեքը դժխեմ,—

Եվ աստծուց հզոր՝ ինքն էլ արարեց
Ջեղած հրաշքներ աշխարհի վրա,
Իր արարչության խնդությամբ խեղդեց
Մարդը բյուր դարեր բյուր ցավերն իրա,
Մարեց կրակով իր ստեղծագործ՝
Ցավերի ծովը իր մի բուռ սրտում
Եվ տիեզերքում լոկ մարդը՝ անեղծ
Վշտին հաղթելով՝ դարձավ իմաստուն։—
Այդ աշխատանքն էր, որ ինչպես դարբին
Կռեց ու կոփեց հոգսերի սալին
Բիրտ անբանից մարդ ու մարդուց աստված՝
Գազանի ճանկից մինչ աստղերն հասած...

VI

Եվ վերջին անգամ ոգին հայտնվեց
— Դու, ասաց, մարդուն, վշտին հաղթեցիր
Ժառանգիր ահա տիեզերքն իմ մեծ,
Քո մտքի թագով իր արքան դարձիր.
Վշտին հաղթողը՝ իշխա՞ն է՞ խինդի,
Իշխիր գաղտնալից տիեզերքն համայն,
Ինքդ ստեղծիր հողը դրախտի
Եվ սնիր, որ հա՞ր վայելես նրան,
Որ վշտիդ գետերն էլ չծովանան.
Եվ ինչ որ քո դեմ գաղտնիք թողեցի՝
Պեղիր տիեզերքն՝ հայտնություն դարձրու,
Դու՝ հրաշքներիս հրաշքն իմաստուն,
Թող վիշտ ու խինդդ անբաժան լինեն՝
Ինչպես կակաչի կարմիրն ու սևը
Եվ թող հավիտյան ախոյան՝ բախվեն
Վիշտն ու խինդը քո՝ քո մահն ու սերը
Եվ թող հույսերս քեզ ապավինեն
Եվ թե սրտասվես՝ թող քո արցունքից
Գոհար խաղողի ողկույզներ ծնվեն,

Թող նո՞ր հրաշքներ ծնվեն քո ձեռքից...
Եվ իմաստնացած կգնաս այդպես
Դարերի անտես սանդուխքով կելնես
Դեպի կատարը կատարելության,
Որ քո՛ նմանի վիշտն էլ ճաշակես
Ու նոր լինես մարդ ու ծաղկես որպես
Աղնիվ խտացվածքն ահեղ բնության՝
Հասնելով դու ներդաշնակության։
Իսկ ծաղիկներից՝ շունչն անմահության,
Որպես նոր գինի, լցիվ դու դնես,
Ըմպես, որ չիջնես ձորը ծերության,
Որ կյանքով լցվես ու նորից ելնես
Կանաչ սարերը քո պարմանության,
Որ տիեզերքում լոկ ինքդ լինես
Հավերժ տիրակալն հավերժ բնության...
Եվ լռեց հավետ...».
Ու մարդու սրտի
Հովիտներն իջավ, ընկնող աստղի պես,
Մարդո՞ն թողնելով սանդուղքն աստղերի...
Ու մարդն հասկացավ անբարբառ լեզուն
Մե՞ծ իմաստության ու տիեզերքի։
Ու ողջ բնությունն ապշեց մարդու դեմ,
Ծովերն աչք դարձան մարդու դեմ ապշած,
Որ դարեր ահա մնացել են բաց,
Երկնակամարն էլ հոնքն է վեր քաշված
Հավիտյան ապշած մայր տիեզերքի
Արեգակնաբիբ կապուտակ աչքի...

VII

Բայց իմաստնացած մի պարմանի պես
Մարդն էլ իրենով հիացավ կարծես,
Ու մեծ տենչանքի ու կրքի ճամփով
Ելավ փնտրելու իր ստեղծողին,

Տիեզերախույզ մտքով թափառեց,
Հյուլեից հարցրեց, հասավ աստղերին,
Հաղար մի չեղած հրաշքներ երկնեց
Ու ձգտեց հասնել իր ստեղծողին,—
Պեղելով նրա առեղծվածը մեծ...
Կասկածեց, հուսաց ու դարեր փնտրեց,
Ու աչքն աստղերից ուղղեց արևին՝
Դեպի լուսեղեն հրաշքը ձգտեց՝
(Իր վայրի քարայրն հավիտյան թողած
Այն վաղնջական խավարի հովտում
Անբան գազանին՝ լեզուն կորցրած...)
Իսկ բարձունքներում՝ լույսերով լցվեց
Դեռ վշտի սավոր սիրտը մարդկային
Արևի ճամփին, ուր դարեր փնտրեց,
Ու երբ չդտավ՝
Այն բիբլիական
Հարդագողն արած իր մտքի ճամփան,
Ու երբ չդտավ՝ ելավ նորախոհ՝
Էլ չապավինեց նա ոչ մի աստծո
Ու ոչ մի հոգու, որ իբր ահի
Տեսիլն էր անգո՝ այս տիեզերքում.—

. . . . . .

Այն ինչ նիրհում է աստված՝ իր հոգում...

1944 թ.

Դարձնական

ՆԱՊՈԼԵՈՆԻ ՓԱԽՈՒՍՏԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ

(Վ. Հյուգոյից)

Ձյուն էր գալիս և հաղթության երեկվա երթը ելվեց,
Եվ առաջին անգամ գլուխն արծիվն ահով խոնարհեց,—
Օ՜, ի՜նչ օրհաս, շարժվում է կայսրն ահա գլխահակ՝
Թողնում Մոսկվան բոցերի մեջ...
Թափուր թողնում փառք ու թագ,—
Եվ ձմեռն է իջնում երկրին, ոռնում է բուքն ամեհի,
Դեմը դաշտերն ալեկոծվող, նորից դաշտեր ամայի.
Ցրվել է զորքն ու չկա թև, չկա կենտրոն, զորասյուն,
Մարշալները չեն երևում և դրոշներ չեն ծփում,—
Երեկ բանակ էր ահռելի, այսօր՝ նախիր մի ցրված,
Ընկնող ձիու փորն է մտնում զինվորը խեղճ ու սառած,
Ձյունը գալիս համր և հորդ՝ լքված ճամփեքն է ծածկում,
Եվ քայլում է զորավարը՝ իր մահն առած հայացքում,
Եվ մերթ ընդ մերթ պահակները ելնում էին դեմն իրա՝
Սառել էին շրթունքներին շեփորները պղնձյա,
Դեռ ձյունի մեջ շաչում էին ռումբերը մեկ առ մեկ,
Փախչում էին կայսրի հետ իր համհարզներն ահաբեկ,
Կրծում էին սառած բեղերն ու սովատանջ՝ հառաչում,
Ընկնում էին գրենադեր հեգ զինվորներն ու սառչում,—
Խուճապում էր կայսրն այսպես ու փախչում էր տխրագին,
Ձյունը ծեծկում դեմքը դալուկ, մոլեգնում էր ցուրտ քամին՝
Փախչում էին ցաք ու ցրիվ՝ կարոտ շունչին հարավի,—
Ռազմիկներ չէին արդեն՝ եղած ահեղ արշավի,

Այլ անծանոթ երկնքի տակ սև տեսիլներ լողացող,
Կամ թե ամպեր հալածական՝ խավարի մեջ խարխափող.
Փախչում էին, չէր վերջանում տափաստանը ցուրտ ու մութ
Հետևում էր կայսրին՝ որպես վրիժառուն իր անգութ...
Եվ ամպադեմ ձյունն էր իջնում ու ձեռքերը խոլ բուքի՝
Սեղմում էին կոկորդը դեռ այն ահաբեկ բանակի.
Ու ամեն ոք՝ ձյունների մեջ՝ մահն էր զգում մոտալուտ
Եվ մենակ էր զգում իրեն հորդայի մեջ հորձանուտ,—
Կարո՞ղ էր գեթ մեկն ազատվել այս դժոխքից տարաժամ,
Թշնամիք են ցուրտն ու ցարը, ցուրտը ցարից էլ դաժան,
Կո՞րչի զենքը... ու խարույկի կրակի են կարոտում,
Ձյուն գալիս, քաղցը նրանց կորովն ու կամքն էր լափում,
Եվ հյուծվում են, ծունկն է ծալվում, բայց կանգնողը կկորչի,
Ինչպես տերև՝ սառույցի տակ՝ մինչև գարուն կսառչի...
Փախչում էին ու խժռում էր որովայնը անհուն ձյան՝
Արդեն բեկորն այն բանակի՝ գոռ դնդերը ոռնաձայն,
Եվ աստ ու անդ ձյունի տակից ցցվում մի ձեռք մարդկային՝
Կարծես անհույս հրաժեշտն էր տալիս փախչող արքային,
Կամ զորքին էր կանչում դեպի մահ հովանին իջնող ձյան,—
Օ՜, դու օրհաս հանկիբալյան, դու Աթիլլի դատաստան...
Ջարկվում են՝ իրար բախվում փախչող կառքերն ու մարդիկ,
Անցման պահն է, դժոխքն է դա՝ ամենքին մահն է մոտիկ,
Ֆուրգոնները փշրվում են՝ հանկարծ իրար բախվելով,
Բուքն է իսկույն նրանց ծածկում՝ ինչպես ափին ելնող ծով,
Եվ հազարներ՝ ձյան մեջ սուզվում, ելնում հարյուր սովերներ,—
Օ՜, դու օրհաս հանկիբալյան, ո՞ւր երեկվա փառքը ձեր...
Երբեմն ահա մարշալ Նեյը ճեղքում ձյունը դաշտերի՝
Փրկում ժամերն ու իր կյանքը, նահանջում է օր-օրի,—
Սակայն ահ կա ամեն դիշեր՝ տափաստանը ցուրտ ու մութ
Չի վերջանում նրանց առջև, նա թշնամին է անգութ,
Եվ փախչում էր զորքը ցրիվ, համհարզները թև-թևի՝
Ձգած զենքերն արյունածոր՝ մոռացած փառքը կռվի՝
Տանում էին կայսրին հոգնած...
Այն ինչ՝ մթնում՝ մերթ ընդ մերթ

Գայթում էին դեռ կարտեշներն ռուսական արկի հետ,
Տեսնում էին փախչողները՝ հետապնդող թշնամու՝
Մորուքները անտառներից, կաղակի տեգն ահարկու,
Ու թվում էր՝ գալիս էին անտառները դեռ բուքով՝
Ու փախչում էր մահախուճապ զորքն ահավոր շշուկով,
Ետ չէր նայում կայսրն ահից և չէր դրոշ ծածանվում,
Օ՜, հիրավի, որ մահազարկ դոռ բանակն էր կործանվում...

1941 թ.

ԴԱՇՈՒՅՆ

(Լերմոնտովից)

Քեզ այնքան եմ սիրում, օ՜, դաշույն իմ կեռ,
Լուսավոր ընկեր իմ, դու ընկեր իմ սառ,
Մտածկոտ վրացին քեզ սիրով կռել,
Ձերքեզն է քեզ սրել՝ իր կռվի համար...

Քեզ ինձ է նվիրել ձեռքն այն ձյունագույն՝
Իբրև վառ հիշատակ՝ բաժանման պահին,
Քեզանով դեռևս չի հոսել արյուն՝
Այլ սիրո արցունք ես տեսել տակավին։

Ու դեռ սև աչքերը՝ մեխված իմ դեմքին՝
Ինձ նման հմտակված վշտով աղեկեզ,
Ինչպես քո պողպատը՝ թռչող կրակին՝
Մեկ հանկարծ վառվում են, մեկ հանգչում կարծես...

Դու սիրուս ուղեկից, լուռ գրավական,
Թող չառնի օրինակ օտարը քեզնից,
Ես հոգով կմնամ դեռ անապական
Ինչպես դու, պողպատյա դաշույն իմ անբիծ։

1938 թ.

***

(Հատված)

Մոսկվա՜, Մոսկվա՜, սիրում եմ քեզ որպես որդիդ,
Որպես ռուս, բոցավառված, քնքուշ սիրով,
Եվ գարո՜ւնդ և սրբազան հյուսքը ձյունիդ,
Եվ այս Կրեմլն ատամնաբուրգ ու անխռով։

Իզուր խորհեց Տիրանը չար՝ չափվել գլխով
Ռուսական հազարամյա հսկայիդ հետ,
Եվ քեզ ընկճել խաբեությամբ իր նենգավոր,
Բայց նա ընկա՜վ, դու խոյացար որպես մի բե՜րդ,
Տիեզերքը լռեց և դու նո՜ր վեհությամբ
Մեր փառքերի ժառանգորդն ես ու կենդանի,
Եվ սրբազան ամեն մի քարդ՝ ցողված արյամբ՝
Սերունդներին նվիրական ավանդ է մի...

1942 թ.

ԿԱԼԱՇՆԻԿՈՎԻ ԵՐԳԸ

Էխ, դու, էխ, ահեղ Իվան թագավոր,
Թող որ այս երգը հյուսենք քո մասին,
Եվ համհարզներիդ մասին քաջազոր՝
Որոնք արծաթյա վառ աստղեր էին,
Իսկ դու նրանց մեջ ոսկեթագ լուսին.
Ասա հյուսում ենք քաջ վաճառական
Կալաշնիկովի ու նրանց մասին,
Ովքեր տաղերով մեր գուսանական
Քեզ փառք են մաղթում՝ մեզ հետ միասին,—
Մեր տաղն հյուսում ենք վաղեմի հանգով
Տավիղի հնչեղ լարերի վրա,
Եվ անմահ սիրո վաղեմի երգով,—
Զվարճանում է ժողովուրդն ահա.
Իսկ աղնվազարմ այն Մոնդավսկին՝
Մեղր է մատուցում մեզ ոսկեգավաթ,
Իսկ նրա կինը փրփրամարմին
Ձեռին լուսնաձև սկուտեղն արծաթ
Մեզ սրբիչ տվեց՝ նախշը մետաքսյա,
Եվ մենք երեք օր ու երեք գիշեր
Տավիղներն առած մեր կրծքի վրա՝
Երգենք պիտի փառք, և արցունք, և սեր...

ԵՐԳ ԱՌԱՋԻՆ

Չի շողում դեմքը ալ-արեգակի
Եվ չեն նրանով ամպերն հիանում...

Ահա դնելով իր թագը ոսկի՝
Ահեղ այն արքան սեղան է նստում,—
Եվ համհարզները շարվում են կողքին,
Դեմը բազմեցին բոյարներն ամեն
Եվ քեֆը բացեց արքան ցնծագին՝
Որ փառքի փայլով գավաթներ քամեն։
Եվ հրամայեց ահա սեգ արքան,
Որ լիքը լցնեն անապակ գինով,
Եվ խմեն՝ երգով հին գուսանական՝
Առաջին գավաթն աստծո անունով։
Եվ լցնում էին ամենքն ու խմում
Ի փառս աստծո և ի փառս իրա,
Եվ խմում էին ու փառաբանում
Իրենց այն ահեղ արքային անմահ։
Բայց միայն մեկը այն համհարզներից՝
Կատաղի կտրիճ մի ջահել ու պերճ
Հեռու էր կանգնել ոսկյա գավաթից,
Չէր թրջում բեխը կարմիր գինու մեջ։
Նա սև աչերը գցել էր գետին,
Գլուխը թեքել լայն կրծքի վրա,
Եվ սրտում գաղտնի մորկվում էին
Ամենքին անհայտ տենչերը նրա։
Բայց ահեղ արքան նրան նկատեց,
Կիտեց հոնքերը՝ կտրիճի վրա,—
Ասես երկնքից սև բաշեն նայեց
Վայրի դեռահաս աղավնու վրա։
Կտրիճն անտեղյակ մնաց գլխիկոր,
Եվ մութ աչքերը չբարձրացրեց,—
Երբ որ զայրացած արքան մեծազոր
Կուռ գավազանով հատակին խփեց,
Խփեց ու ճեղքեց հատակը կաղնյա,
Ահեղ որոտաց ամպի պես մթին,
Եվ բարի կտրիճն չսթափվեց ահա,
Բայց թագավորը մռնչաց կրկին.

— Հե՛յ, հավատարիմ, իմ բազկի ծառա,
Հե՛յ դու իմ կտրիճ Կիրիբեևիչ,
Ինչո՞ւ է չոքել ամպը քեզ վրա,
Ինչո՞ւ չես խմում, թե՞ գինիս է քիչ,
Թե՞ չար մտքով ես դու իմ դեմ թախծում,
Թե՞ ձանձրացել ես զենք ու զրահից,
Թե իմ փառքին ես գաղտնի նախանձում,—
Փառքիս, որ երկրում բարձր է իմ գահից։
Գիտե՞ս, որ երբ սեգ լուսինն է ծագում՝
Ուրախանում են աստղերը հստակ,—
Չէ՞ որ աստղերին հեշտ է՝ երկնքում
Կռվել մութի դեմ՝ լուսնի լույսի տակ...
Իսկ որը ամպի մեջ է թաքնվում՝
Կորցնո՞ւմ է ճամփեն իր պայծառատես,
Ու դու իմ քեֆից հեռու ես փախչում,—
Իմ բարի կտրիճ, անվայել է քեզ»։
Եվ պատասխանեց այն կտրիճն ահա,
Ահեղ արքային խոր գլուխ տալով.
— Թագավոր դու մեր, հավիտյան անմահ,
Սիրտս մի խոցիր ինձ նախատելով.
Անբախտ է կտրիճ սարովիդ անարժան,
Եվ վիշտս երբեք չես խեղդի գինով.
Քեզ զայրացրեց իմ տեսքը դաժան,
Հրամայիր՝ ինձ գլխատեն կացնով։
Կարեն գլուխս, որ դյուցազնական
Ուսերիս վրա կապար է դարձել,
Եվ կռացել է դեպի դերեզման
Եվ հույս ու աշխարհ, ողջը մոռացել»։
Ապա հարցրեց թագավորն ահեղ.
— Բայց ի՞նչ բանից է սիրտդ վշտանում,—
Հո չի՞ ծանրացել քո զրահն շքեղ,
Հո չի՞ քո դալար ձեռքը թուլանում,
Հո չի՞ քո ալմաստ սուրը կուրացել,
Հո չի՞ վիրավոր՝ կաղում քո հուր ձին,

Կամ քեզ հո կովում դետին չի՞ գցել
Վաճառականի թափառիկ որդին...։
Եվ կտրիճն այսպես տվեց պատասխան
Շարժելով գլուխն իրա գանգրահեր.
— Չի ծնված ձեռքը այդ կախարդական,
Որ սուրս խլած՝ ինձ դետին զարկեր
Դեռ սեդ արծիվ է հրեղեն իմ ձին,
Եվ զրնգում է զրահն ինձ վրա,
Սուրս շողում է՝ ինչպես ապակին,
Դեռ վայելում եմ ես փառքը նրա։
Կապում եմ դեռ իմ մետաքսյա գոտին,
Թավշյա գլխարկը ճակատիս թեքում,
Եվ հյուր եմ գնում Մոսկվա դետին՝
Դեպի այն ափին եմ ձիս ասպանդակում
Եվ ման եմ գալիս այն կանաչ ափին,
Ուր միշտ դուրս գալով դարբասների մոտ
Աղջիկներն ինձ են նայում խնդագին
Եվ փսփսում են, խոսում ծիծաղկոտ...
Գիտեմ՝ ինձնով են նրանք հիանում
Եվ ո՛չ նժույգով իմ եղնիկատ,
Բայց միայն մեկը՝ ճամփես չի պահում,
Չի նայի, թեկուզ մեռնեմ նրա մոտ...
Մեր հայրենիքում այս հնամենի՝
Ռուսաստանում սուրբ ու սրբազան
Նրա նմանը չկա, չես գտնի,—
Դրախտի մեջ էլ տենչում են նրան։
Քայլում է, սահում կույս կարապի պես,
Նայում է քաղցր, ինչպես աղավնյակ,
Իսկ երբ խոսում է, սոխակն է կարծես,
Վարդ են այտերը և վարդ և կրակ։
Ոսկե հյուսքերը ուսերից իջնում
Եվ համբուրում են կուրծքը սպիտակ,—
Ծնվել է նա մի ծեր ու դողդոջուն
Վաճառականի հարուստ հարկի տակ,

Եվ Ալինա են ամենքը կանչում,
Ու նա է, նա է, իմ վիշտս միակ,—
Հենց որ տեսնում եմ հանկարծ ես նրան՝
Ինքս իմը չեմ՝ սիրո մշուշից
Լուռ սևանում են աչքերս վառման,
Ծունկս թուլանում, ընկնում եմ ուժից,—
Ահա թե ինչո՞ւ չեմ խմում գինին
Ու ձանձրալի է թվում ամեն բան...
Ինձ չեն կախարդում ոչ կայծակ իմ ձին,
Ոչ էլ ծիրանին իմ իշխանական,
Էլ հարկավոր չէ ինձ ոսկի գանձեր՝
Ո՞ւմ հետ բաժանեմ ես գանձս ոսկի,
Ո՞ւմ ցույց տամ բազկիս թափը անվեհեր,
Ո՞ւմ առաջ սանձեմ հողմն իմ նժույգի,
Ո՞ւմ համար քաշեմ սուրս կայծակող
Եվ հաղթող լինեմ կարիճների մեջ...
Արձակիր, արքա՜ աստվածակարող,
Գնամ Վոլգայի տափաստանը պերճ,—
Ձպրելու կյանքով մի կազակական,
Կամ վայր դնելու գլուխս անահ
Մահմեդականի նիզակի ծայրին,—
Եվ թաթարները իմ գանգի վրա
Կռիվ կսարքեն, կխլեն իմ ձին
Մեկ մեկու ձեռքից և չերքեզական
Իմ թամբի համար կկռվեն կարգին...
Եվ այդպես հանդում անտեր կմնամ,
Ուրուրն էլ՝ դեռ թաց աչքս կհանի,
Գանգս անձրևը կլվա այն ժամ,
Եվ կարոտ խնկած մի գերեզմանի՝
Աճյունս պիտի ցրվի քամու հետ,
Անունս էլ այդպես կկորչի անհետ...
Բայց խոսեց արքան ծիծաղի ձայնով.
— Հե՜յ, հավատարիմ իմ բազկի ծառա,
Կարիճն իր վիշտը կխեղդի գինով,

Չե՛մ ուզում վիշտը քո սրտին մնա,—
Ահա, վերցրու իմ այս մատանին,
Որ տվել էի ես իմ թագուհուն,
Եվ այս մարգարտյա իմ մանյակն անգին՝
Նախ գնա՝ խոսիր հարսնախոսուհուն,
Նրա հետ գանձեր ուղարկիր նվեր
Դու քո Ալինա աղջկան անսեր,—
Եվ հենց որ առնի նա քո մատանին,
Եվ հենց որ սիրեց՝ հարսանիք արա,
Իսկ թե չսիրեց, է՞, քարը գլխին,—
Հեծիր նժույգդ, ուրիշին գնա...»։

Էխ դու, էխ, բարի Իվան թագավոր,
Խաբեց խորամանկ քո սորուկը քեզ,—
Ճշմարտությունը թաքցրեց նա խոր,
Նա քեզ չհայտնեց, որ գեղեցկուհին
Մի վաճառական կտրիճ է սիրում
Եվ հենց նրա հետ՝ օրենքով մեր հին
Պսակված է քո աստծո տաճարում։

Հե՞յ, տավիղները լարեք, գուսաններ,
Հե՞յ, խմեք գինին, պարեք այր ու կին,
Հասկացեք բանը, խմեք տղաներ,—
Է՞յ, հե՞յ, գուսաններ, շունչ տվեք երգին...

ԵՐԳ ԵՐԿՐՈՐԴ

Հսկա խանութում նստած է տխուր
Ջահել, թիկնավետ, բայց դալուկ դեմքով
Պարամոնովիչ Ստեփանը լուռ,—
Որին կոչում են և Կալաշնիկով։
Կանգնեց, դուրս նայեց և ապա լռին
Նա դասավորեց մետաքսները բաց,
Քաղցր ձայնելով նա անցորդներին

Ուզեց իր ոտնձով կախարդել նրանց՝
Հաշվելով շռայլ արծաթն ու ոսկին,—
Բայց օրը չար էր, ու նրա դռնով
Չէր անցնում բարին ու ներս չէր մտնում...
Եվ բոյարները անցնում անխռով՝
Ներս չէին մտնում ու օրն էր մթնում։
Արդեն հանդել էր սուրբ տաճարներում
Ժամերգությունը իջնող իրիկվա
Եվ վեհ Կրեմլի բուրգի ետևում
Վառվում է միդոտ վերջալույսն ահա,
Երկինքն են պատում ամպերը մթին,
Եվ բուքն է նրանց քշում աղմուկով,
Եվ խանութները փակվում են լռին,
Եվ տուն են գնում տերերն անխռով։
Կալաշնիկովն էլ փակում է անձայն
Ահա խանութը իրա կաղնեդուռ,
Մռայլ քրթմնջում մտքում ինչ-որ բան
Ու տուն է գնում ահա նա տխուր։
Այնտեղ դեռատի կինն է սպասում՝
Մոսկվա գետի այն ափի վրա,—
Եվ ահա, ահա նա տուն է հասնում
Ու ներս է մտնում դարբասից նրա։
Բայց դեմքին սառը զարմանքը պատեց
Այն ջահել ու քաջ վաճառականի՝
Չերևաց կինը, չդիմավորեց,
Չփռե՛ց ճերմակ սուփրեն սեղանին,
Եվ մոմն էլ վշտից հազիվ է վառվում
Սրբի դալկադեմ պատկերի առաջ,
Ու տունը մի լուռ դամբան էր թվում՝
Երբ չկար չքնաղ կինը կապուտաչ։
Կտրիճը կանչեց ծեր սպասուհուն,
Պառավն հայտնվեց ստվերի նման։
— Ո՞ւր է գնացել բարի հարսնացուն,
Ո՞ւր է իմ կինը, ո՞ւր է Ալինան։—

Նա այս ուշ ժամին ո՞ւր է թաքնվել,
Որ մանուկները աղմուկ ու խաղից
Հոգնել են վաղուց ու վաղուց քնել,—
Եվ դուցե սոված՝ կարոտ մոր կաթից։
— Տեր իմ,— պառավը ահով շշնջաց,
Նա մի ժամ առաջ ժամ էր գնացել,
Ահա տերտերն էլ փակեց, տուն գնաց,
Բայց իմ տիրուհին չի վերադարձել։
Ու երեխեքը լալիս են, լալիս,
Ու մայր են կանչում, ու մայրը չկա,
Պառկեցնում եմ, քունը չի գալիս,
Ախ, ասված, գլխիս ի՞նչ ձյուն սլիտի գա»։
Շփոթվեց մի պահ ու մթնեց մեկից
Այն երիտասարդ վաճառականը,
Եվ կյանքը կարծես չքացավ դեմքից
Եվ սուզվեց նա մութ մտքի օվկիանը։
Մոայլ մոտեցավ նա պատուհանին՝
Դրսում շոքել էր գիշերը խավար,
Թափվում էր ձյունը՝ ծածկում մարդկային
Դաժան կրքերի հետքերն անհամար։
Բայց ահա լսվեց մի խուլ ոտնաձայն,
Ասես հովն անցավ ու ջահը վառվեց,—
Եվ ինչպես անհայտ վշտի ուրվական
Սրահում հանկարծ կինը հայտնվեց։
Կինը՝ այլայլված ու չկար գլխին
Գլխաշորը խաս՝ մեռաքսը նրա,
Ինչպես արծվից փախած աղավնին
Հևում էր ասես, ու դողում էր նա.
Մազերը՝ ցրիվ, աչքերն ահառած
Խելակորույս էր հայացքն ամեհի,
Եվ շրթունքները ահա կարկամած,
Շրշացին բառեր անհասկանալի։
— «Ո՞ւր էիր, գոչեց մարդը զայրագին,
Թափառում էիր, բայց ո՞ւմ հետ, ասա,

Որ տուն ես գալիս դու այս ուշ ժամին,
Մազերդ քանդած՝ ուսերիդ վրա։
Թե՞ ազնվական կտրիճներն առած
Ման էիր գալիս, գուցե բա՞խտ ճարում,
Դրա համար չէ՛ր, որ աստծո առաջ
Մենք սլսակվեցինք աստծո տաճարում։
Սակայն քեզ հիմի՝ հինց դրա համար,
Կդնեմ մթին զնդանը խավար—
Կփակեմ նրա կաղնյա դռան տակ,
Որ էլ աստծո լույսը չտեսնես.
Կդնեմ վրան երկաթե փականք,
Որ ազնիվ անունս էլ չմրոտես...»։
Եվ կինը ճչաց, աչքերն ամուսնու
Թվացին՝ իր դեմ՝ դաշույններ սրված,
Եվ նա ընկնելով ոտները մարդու
Դառն արտասվելով խոսեց այլայլված,—
— Տեր իմ, արև իմ, դու տեր իմ անգին՝,
Սպանիր դու ինձ, կամ լսիր մի պահ,
Խոսքիդ դաշույնով մի խոցիր դու ինձ,
Չեմ վախում մահից, չեմ վախում դրսի
Բամբասանքներից չար ու արնախում,
Քո կինն անմեղ է, ինձ մի բամբասի,
Անողորմ ես դու, քեզնից եմ վախում։
Բայց լսիր մի պահ, կարեկցիր սիրուց,
Չի ստում լեղուն իմ անմեղապարտ,
Տուն էի գալիս մայր եկեղեցուց,
Երբ ետևիցս զիլ սուլեց մի մարդ,
Ետ դարձա՝ ահից ծունկս թուլացավ,
Ծածկեցի դեմքս իմ դլխաշորով,
Բայց չարագուշակ նա ինձ մոտեցավ,
Եվ այսպես ասավ՝ ձեռքս բռնելով
— Ինչո՞ւ ես վախում, իմ դեղեցկուհի,
Ոչ գող եմ ես չար, և ոչ մարդասպան,
Բարի ծառան եմ ահեղ արքայի,

Կիրիբեևիչն եմ ազնվական...»։
Բայց ես ավելի վախեցա, իմ տեր,
Գլուխս ահից պտտվեց, երբ նա
Սկսեց բռնի շոյել, համբուրել,
Եվ այսպես խոսեց համբույրով իրա
«Ասա, քեզ ի՞նչ է հարկավոր, ասա,
Իմ սիրելի դու, դու իմ թանկագին,
Ոսկի՞, մարգարի՞տ, ի՞նչ գանձեր, ասա,
Մետաքս ու ատլա՞ս և քարե՞ր անգին...
Քեզ կզարդարեմ թագուհու նման,
Ու թող բոլորը նախանձեն փառքիդ,
Միայն՝ մի թողնի դառնամ մարդասպան,
Մեռնեմ հանցավոր՝ սիրիր ինձ, գրկիր,
Դեթ հրաժեշտի այս պահին անմեռ...»
Եվ շոյում էր ինձ, և ինձ համբուրում,
Այտերիս վրա, կրակի պես դեռ
Պիղծ համբույրների հետքերն են վառվում։
Իսկ մարդիկ, մարդիկ, թե ջահել, թե ծեր
Նայում էին մեզ ու չար ծիծաղում,
Ահա հենց նրա ձեռքից եմ փախել,
Եվ գլխաշորս, որ գլխիս չկա,
Այն ավազակն է իմ գլխից տարել,
Թաշկինակի հետ քո այն մետաքսյա։
Անարգեց նա ինձ, ինձ խայտառակեց,
Մրոտեց շունը անունս անարատ,
Հարևանները ի՞նչ պիտի ասեն...
Էլ նրանց աչքին ի՞նչպես երևամ.
Դու մի թողնի ինձ, քո հավատարմին,
Պախարակելու և հայհոյելու,
Ախ, բացի քեզնից, ուրիշ հույս չունեմ,
Էլ ո՞ւմից խնդրեմ՝ գան ինձ օգնելու...
Ես որբ եմ այս լույս աշխարհի վրա,
Հարազատ հայրս հող է՝ հողի տակ,
Եվ կողքին հիմա մայրս է հող դառնում,

Իսկ մեծ եղբայրս, ինքդ լավ գիտես՝
Անհետ կորել է օտար աշխարհում։
Իսկ փոքր եղբայրս էլ փոքր է, երեխա,
Փոքր է, երեխա ու անհասկացող...»։
Այսպես էր խոսում, ու կրծքի վրա
Գլուխը կախում, արտասվում էր նա։

Դրսում գիշերն էր խորացել լրիվ,
Բայց ահա մոայլ վաճառականը
Կանչում է փոքր իր եղբայրներին,
Եվ եկան նրանք ու մեծ եղբորը
Իրենց կարոտած ողջույնը բերին.
— Հայտնիր մեզ, մեր հայր՝ եղբայր մեր անգին,
Ի՞նչ է պատահել, ի՞նչ ցավ-ունես, էխ,
Որ մեզ կանչեցիր այս մութ գիշերին,
Այս մեջ գիշերին, այս բուքին ահեղ։

— Ահա, սիրելի իմ եղբայրներ,
Մի սև փորձանք է եկել իմ գլխին,
Անարգել է սուրբ ընտանիքը մեր
Կիլիբեևիչ համհարզն արքայի,
Եվ այդ պիղծ բանը հոգիս չի տանի,
Եվ չի դիմանա անգամ սիրտը քաջ,
Եվ հենց որ վաղը դատեմարտ լինի,
Մոսկվայի ափին, արքայի առաջ,
Ես պիտի նետվեմ համհարզի վրա,
Եվ պիտի կռվեմ, թեկուզ մինչև մահ,
Բայց թե նա հաղթեց,— դուք կռվի ելեք,
Հանուն սրբության՝ նրան տապալեք,
Եվ մի վախեցեք, իմ արծվիկներ,
Ձեզ վրա մեղքը քիչ է սվելի,—
Ասված կների...»։

Ու եղբայրները
Պատասխանեցին զայրույթով լցված,

«Ուր որ քշում է երկնային քամին՝
Այնտեղ են չվում ամպիկներն հլու,—
Երբ թուխ արծիվն է կանչում ձագերին
Կռվի հովիտը՝ խնճույք սարքելու,
Լեշ հավաքելու... այն մեծի կանչին
Փոքր արծիվներն այնտեղ են գալու...
Դու մեր արծիվն ես, մեր երկրորդ հայրը,
Որոշիր դու մեր ճակատագիրը
Արա՝ ինչ կուզես, և, ինչ էլ լինի՝
Մեր հարազատին չենք դավաճանի...»։

Հե՜յ, տավիղները լարեք, գուսաններ,
Հե՜յ, խմեք, տղերք, հասկացեք բանը,
Զվարճացրեք բարի բոյարին
Եվ բոյարուհուն իր ձյունամարմին...

ԵՐԳ ԵՐՐՈՐԴ

Եվ ոսկեգմբեթ հսկա Մոսկվայի
Եվ վեհ Կրեմլի բուրգերի վրա
Խուլ անտառներից, հեռու լեռներից,
Տանիքի տակից երկնքի՝ ահա
Ցրելով այն դորշ ամպերը, լռին
Ալ արշալույսն է շքեղ բարձրանում—
Դառնում ոսկե թագ Մոսկվայի գլխին,
Շաղ տալով ոսկի գանդուրներն իրա,
Լվացվում է լուռ ձյունով բյուրեղի
Երկնքին նայում ու ժպտում է նա՝
Ինչպես հայելուն՝ մի գեղեցկուհի։
Բայց դու, արշալույս, ի՞նչ վաղ արթնացել
Ի՞նչ մի խնդության համար ես բացվել...

Ինչպես քիչ հետո կայծակող ամպեր
Ահա Մոսկվա սուրբ գետի վրա

Լուռ հավաքվում են քաջերն անվեհեր՝
Բոնցքամարտի և կիրակնօրյա
Տոնը խնդությամբ թնդացնելու...
Եվ ահա խրոխտ ժամանեց արքան,
Վառ շքախմբով իր համհարզների,
Եվ հրամայեց՝ «արծաթե շղթան
Շրջանցել միջով ոսկյա օղերի»—
Եվ շղթայեցին, սեգ արքայի դեմ,
Քսանհինգ սաժեն մի հրապարակ,
Ուր մտնեն պիտի ու մենամարտեն
Ամբոխից ելած գյուղացիներն անհագ.
Եվ ահա կանչեց արքան սիրաջեր,
— Հե՜յ, հայտնվեցեք, իմ երկրի քաջեր,
Զվարճացրեք ձեր հայր արքային,
Հալա՝ դուրս եկեք մենամարտեցեք,
Ես՝ գանձ ու պարգև կտամ հաղթողին,
Իսկ հաղթվողին՝ թող աստված փրկե...»։
Դուրս եկավ ահա Կիրիբեևիչն՝
Ահեղ արքային խոր գլուխ տալով,
Ցած դրեց մուշտակն հսկա ուսերից,
Աջ ձեռով խրոխտ կողքին հենվելով,
Ձախով նա ուղղեց գլխարկը կարմիր,
Եվ... սպասում էր հակառակորդին...
Եվ երեք անգամ բարձր ձայնեցին,
Բայց չշարժվեց և ոչ մի մարտիկ,
Միայն հրում էր մեկը մյուսին։
Եվ շղթայի մեջ համհարզն էր քայլում
Եվ կտրիճների վրա ծիծաղում.
— Էխ, էխ վախեցաք, մտքի տա՞կ ընկաք,
Ի՞նչ ռուսներ եք, որ ետ քաշվեցիք,
Բայց կխոստանամ՝ սուրբ երկնքի տակ՝
Ձեզ ծառա լինեմ՝ եթե հաղթեցիք,
Իսկ եթե ընկաք, ձեզ բան չեմ անի,
Նորից կենդանի կթողնեմ գնաք,

Մեղքերդ քավեք հանուն այս տոնի.
Միայն թե մեկը ինձ հետ կռվի գա՝
Զվարճացնենք մեր սուրբ արքային.—
Եվ լռեց քաջը, բայց շուրջը նրա
Լուռ է, նայում է մեկը մյուսին...
Հանկարծ ամբոխը ճեղքեց, դուրս եկավ
Վաճառականը այն երիտասարդ,
Այն քաջը վսեմ, այն կտրիճն ահա
Կալաշնիկովը այն մռայլազարդ,—
Կայծկլտում էին աչքերը նրա,
Բազեի պես էր նա շուրջը նայում,
Եվ հայացքն հառեց համհարզի վրա՝
Ահա դանդրամազ մորուքն է շոյում։
Եվ այսպես խոսեց Կիրիբեևիչն.
— Դե, ասա, տեսնենք, ով բարի կտրիճ,
Դու ի՞նչ ցեղից ես, ի՞նչ տոհմից ես դու,
Ի՞նչ են քեզ կոչում, ասա իմանամ,
Ո՞ւմ դեմ եմ ձեռքս բարձրացնելու,
Ումի հոգեհանգիստն եմ ես անելու...
Եվ պատասխանեց քաջը զայրալից.
— Մարդիկ կանչում են ինձ Կալաշնիկով,
Ծնվել եմ բարի ու ազնիվ հորից,
Ապրում եմ արդար աստծո օրենքով,
Ուրիշի կնոջ չեմ խայտառակել,
Չեմ եղել մթին գիշերն ավազակ,
Եվ աստվածային աչքից չեմ ընկել,
Վաճառական եմ, բայց հոգով կազակ,
Եվ ճշմարտությունն ասացիր հենց դու.
Մեր այս երկուսից մեկն է ընկնելու,—
Մեկիս պիտի գա մեծ հոգեհանգիստ՝
Ոչ ուշ, հենց վաղը, այսօրվա ժամին,
Ու մեզանից մեկն էլ պարծանքով հանգիստ
Խնճույք պիտի տա իր ընկերներին...
Ես ծիծաղեցնել չեմ ուզում մեկին,

Քեզ նման, դու չար մահմեդի տալա,
Քո դեմ՝ սառաջին կռիվս է՝ վերջին,
Եվ տես, ոտիս տակ հողդ կդողա...»
Լսեց ամենը Կիրիբեևիչն
Ու գույնը դցեց, ինչպես աշնան ձյուն,
Դող առավ կարծես թիկունքն առնական,
Մռայլեց, մթնեց կրակն աչքերում,
Եվ թաց շուրթերին բառերը սառան...

Ասյո՞ւծն էր հանկարծ իր բաշը ցնցեց,
Բո՞ւքն էր վրդովեց կանգնած ամբոխին,—
Ոչ, հսկաների կռիվն սկսվեց,—
Ամբոխն աղմուկով շունչ տվեց կռվին,
Համհարզը ձեռքը վեր բարձրացրեց
Առաջինն ինքը խփեց մոլեգին
Ուղիղ կրծքի մեջ Կալաշնիկովի,—
Եվ հսկան կարծես դողաց ցավագին՝
Կալաշնիկովը օրորվեց մի պահ,
Եվ կրծքին կախած իր խաչը ծռվեց
Եվ դանակի պես խաչը պղնձյա
Ցոլաց մի վայրկյան ու կուրծքը խրվեց
Եվ խաչի տակից կաթեց ինչպես ցող
Կարմիր ու ազնիվ արյունը նրա,
Սակայն դյուցազնը ծանր հառաչով
Մի վայրկյան այսպես շշնջաց տհա,—
«Ինչ վիճակված է՝ այն էլ կլինի,
Մինչև վերջ պիտի պատիվս փրկեմ,—
Ճշմարտությունը ինձ չի կորցնի...»
Եվ ոտնեց հանկարծ և ուժը պրկեց,
Հավաքեց կիտեց մկան մկանի,
Եվ ամբողջ ուժով հարձակվեց, զարկեց
Ուղիղ ձախ քունքին հսկա համհարզի.
Ջահել համհարզը հառաչեց թեթև
Օրորվեց, մեռած տապալվեց գետին։

Սառը ձյան վրա հասակը պարթև
Մեկնվեց, ինչպես անտառում սոճին
Հենց իր արմատից հանկարծ կտրված...

. . . . . .

Եվ ահեղ արքան կանգնեց մթագին,
Ցասկոտ զայրույթով գետինը դոփեց,
Խոժոռեց, կիտեց հոնքերը մթին,
Եվ որոտընդոստ նա հրամայեց,—
— Բռնեցեք վայրագ վաճառականին։
Կտրիճը գնաց նրա դեմ կանգնեց,
Եվ այսպես խոսեց ուղղափառ արքան.
— Պատասխան տուր ինձ, ճշմարիտ, խղճով,
Ազատ ցանկությա՞մբ, թե չո՞ւզենալով,
Թե՞ քեզ կորցրած զարկեցիր նրան,—
Իմ հավատարմին, կտրիճին իմ քաջ,
Իմ քաջ ծառային իմ աչքի առաջ...
— Ես կասեմ ամենն, ազնիվ թագավոր,
Խփեցի նրան ազատ ցանկությամբ,
Բայց քեզ չեմ ասի թե ինչ պատճառով,
Միակ աստծուն կասեմ լռությամբ...
Հրամայիր տեր, թող կառափնարան
Տանեն մեղապարտ գլուխս անգին,
Միայն թե դիաս, ողորմած արքա,
Իմ փոքր ու կտրիճ որբ եղբայրներին,
Եվ արդեն այրի կնոջս և այն
Իմ երկու ծաղիկ խեղճ մանուկներին...

— Լավ է, օ, լավ է, ով երիտասարդ,
Վաճառականի դու կտրիճ տղա,
Որ չատեցիր... կթողնեմ ազատ,—
Քո ջահել կնոջն ու մանուկներին,
Նրանց ես գանձեր, պարգևներ կտամ,
Հրամայեմ՝ քո եղբայրներին
Թողնեն՝ առևտուր անեն ինքնակամ,

Առանց մի վաշխի և առանց հարկի
Քաղաքների մեջ ողջ ռուսական,—
Բայց դու, ով կտրիճ, բարձրանաս պիտի
Եվ քո կատաղի գլուխը դնես
Կաղնեկուռ ծնկին կառափնարանի...
Եվ ահա ելնում ու կոչում եմ ես,
Որ քո դահիճը ալ կարմիր հագնի,
Սրի կացինը մի անգղի պես,
Եվ իմ երկրով մեկ զանգը հնչեցնի՝
Որ ողջ Ռուսիան իմանա, որ ես,
Թողած սրբազան օրենքն արքունի,
Քո դաժան մահով գթացել եմ քեզ...

***

Ցով է ժողովուրդն հրապարակում,—
Մահագուժ զանգն է զողանջում բեկ-բեկ,
Դեգերում է լուրն ու մռայլ սգում,—
Նա ամենուրեք ու սրտակեղեք,
Եվ լուռ բարձունքին կառափնարանի,
Կարմիր, արնագույն շապիկը հագին
Մեծ, սրած կացնով,
Սև դահիճն ուրախ քայլում է լռին
Իր մերկ ձեռները իրար շփելով.—
Լուռ սպասում է նա մեղապարտին.
Իսկ այն ջահելը, այն կտրիճն ահա
Կարծես ցող անգամ սիրտը չի լալիս,
Քարադեմ, մռայլ շշնջում է նա՝
Հարազատներին հրաժեշտ տալիս.
— Դե, եղբայրիկներ իմ արյունակից,
Համբուրվենք վերջին բաժանման համար,
Իմ Ալյոնային ողջունեք ինձնից,
Ասացեք թող՝ քիչ, թող քիչ վշտանա,
Իմ մասին՝ ասեք՝ երբեք չպատմի

Երեխաներին իմ կիսաբողբոջ,—
Բարեկամ, ծանոթ և թե թշնամի
Թող ողջույնս առնեն ու մնան միշտ ողջ,
Իսկ դուք՝ աղոթեք մայր եկեղեցում՝
Իմ հոգուն, որ չէ, չունի մահացում...»

Սարսեցին հանկարծ մարդիկ խմբովին,
Դահճի կացինը կայծակեց ահով,—
Եվ այսպես կտրիճ Կալաշնիկովին
Պատժեցին մի շար, մի դաժան մահով։
Եվ լռին տարան թաղեցին նրան
Մոսկվա գետի այն ափի վրա՝
Ամայի դաշտում՝ երեք անսահման
Ճամփաների մեջ,—

Տուլովյան,

Ռյազանի,

Վլադիմիրյան...

Եվ խոնավ հողից բլուր կանգնեցրին,
Լոկ մի խաչ գրկեց բլուրը նրա,
Շուրջը ոռնում էր կատաղի քամին,
Լալիս անանուն բլուրի վրա
Եվ՝ բարի մարդիկ, երբ ամեն անգամ
Անցնում են երեք ճանապարհներով՝
Կանգնում են մի քիչ, հիշում մի վայրկյան
Լցվում են, լալիս թախծոտ հուշերով
Եվ այսպես տարիք և գուցե դարեր
Կանցնի ծերունին՝ կխաչակնքի,
Կտրիճը կանցնի՝ լուռ կպատկառի,
Կանցնի աղջիկը՝ լուռ կվշտանա,
Եվ տխրադալուկ գուսանը կանցնի
Ու կերգի ազնիվ անունը նրա...

Հե՜յ իմ սոխակներ,
Գուսաններ ջահել,
Լավ սկսեցինք,— լավ կվերջացնենք,—
Թող նրանք գինի, մենք արցունք խմենք,
Փառք առատաձեռն բարի բոյարին,
Փառք գեղեցկուհի բոյարինային,
Փառք ժողովրդին...

1910թ.

Դ Ե Վ Ը

Հատվածներ

1.

Տխրագին դ�ը, վտարանդ ոգին
Թռչում վրայով մեղապարտ երկրի,
Եվ նրա մտքում խռնվում էին
Հուշերն աստղավառ իր լավ օրերի,—
Օրերի, երբ ինքն հրեշտակ էր դեռ
Անմեռ ու մաքուր ողջ տիեզերքում,
Երբ դեռ ճախրում էր աստղերից աստղեր,
Եվ դեռ գիսաստղ էր նրան ողջունում.
Երբ դեռ սիրում էր, երբ դեռ հավատում՝
Առջևնեկն իբրև մեծ արարչության,
Երբ անսահմանի մթին ոլորտում
Անհագ ծարավով մեծ իմաստության՝
Լուռ հետևում էր համր աստղերի՝
Մթնում թափառող քարավաններին.
Երբ դեռ անբիծ էր, մաքուր ու բարի,
Կասկած ու չարիք երբ դեռ չգիտեր,
Երբ չէին լկում դեռ իր միտքը վառ
Ունայն դարերի շարքերը հլու,
Ու շա՜տ այլ բաներ, բայց դևն հիշաչար
Ուժ չուներ այլևս ամենն հիշելու...

ԴԵՎԸ ԹԱՄԱՐԻՆ

Ես նա եմ, որին ուշք էիր դնում
Խոր լռության մեջ կես գիշերային,
Որի պատկերը երազով տեսնում
Եվ միտքն ահերդ գուշակում էին.
Նա եմ, ում հայացքն հույս է կործանում;
Ես նա եմ, ում դեռ չի սիրել ոչ ոք,
Օրհասն երկրային արարածների,
Ում նզովում է աշխարհն անողոք.
Ես ազատության և իմաստության
Արքան յոթնաթև,
Բնության չարը, ոսոխն երկնքի.
Եվ լոկ մի քայլն են ինձ համար՝ անհուն
Անսահմանություն, հավիտենություն,
Բայց ես, տեսնում ես՝ քո ոտքն եմ ընկել,
Ու քեզ իմ դարձի խանդաղատանքով
Իմ մեղսոտ սիրո աղոթքը բերել,
Եվ թե երկրային տանջանքս առաջին՝
Բերել առաջին իմ արցունքներով,—
Գթա, ականջ դիր և կարեկցիր ինձ,
Դու կարող էիր մի հատիկ խոսքով
Ինձ դարձնել բարուն և թե երկնքին,
Եվ քո սուրբ սիրո պատմուճանն հագած,
Որպես նորակերպ հրեշտակ մի նոր
Կհայտնվեի ես այնտեղ հանկարծ,

Օ՜, աղերսում եմ՝ դեռ լսիր միայն,
Ես սիրում եմ քեզ ու ճորտն եմ քո,
Երբ որ քեզ տեսա առաջին անգամ
Այսպես գեղեցիկ մեղմ ու մտախոհ՝
Իմ սրտի ձայնով անհաշտ ատեցի
Մենաթափառիս անմահությանը
Եվ ակամայից ես նախանձեցի
Երկրի անկատար երջանկությանը,
Ինձ այժմ ցավ է չապրել քեզ նման,
Մահ է ապրելս քեզնից անբաժան ,
Ամայի սրտումս՝ անսպասելի
Մարված կայծն էլի սկսեց մխալ,
Եվ թախիծն ինչպես օձը մեխսալի
Սկսեց իմ հին վերքի տակ սողալ,—
Առանց քեզ ինձ ի՜նչ հավերժությունը,
Իմ իշխանության անծայրությունը,—
Օ՜, լոկ բառեր են, հնչուններն ունայն,
Առանց քեզ՝ սին է իմ ողջ անհունը,
Տաճար է՝ առանց մի աստվածության։

ԴԵՎԻ ԵՐԴՈՒՄԸ

Երդվում եմ ահա
Ստեղծագործության առաջին օրով,
Երդվում եմ նրա և վերջին օրով,
Եվ անարգանքով իմ ոճիրների.
Քո դեմ ծնրադիր մեղապարտ ոգիս,
Նշավակությամբ երդում է տալիս.
Եվ ճշմարտության հաղթության դափնով,
Երդվում եմ անկման դառը տանջանքով,
Եվ հաղթանակի ցնորքով վաղանց,
Երդվում եմ ինձ հետ քո հանդիպումով
Եվ բաժանումով դալոց մեր անդարձ։
Երդվում միաբան իմ եղբայրների
Ճակատագրով,
Երդվում եմ ահա բազմությամբ անքուն
Իմ ոգիների,
Երդվում սրերով հրեշտակների,
Ու հավերժ արթուն
Իմ ոսոխներն են միակ իմաստուն։
Երդվում երկնքով և թե դժոխքով,
Երկրի սրբությամբ և թե քեզանով,
Երդվում առաջին քո արցունքներով,
Երդվում եմ և քո վերջին հայացքով,
Անչար բերանիդ շնչով եմ երդվում,
Երդվում վարսերիդ մետաքս ծփանքով,

Երդվում հաճույքով և տառապանքով,
Երդվում եմ սիրով, երդվում, որ ահա
Հրաժարվեցի իմ հին վրեժից,
Հրաժարվեցի հպարտ մտքերից,
Հրաժարվեցի, և էլ չեմ թույլ...
Շողոքորթության սև թույնն այսուհետ
Ոչ մեկի միտքը էլ չի վրդովի,—
Ես կամենում եմ հաշտվել երկնի հետ,
Ես կուզեմ սիրել և թե աղոթել,
Ջղման արցունքի ցողով կսրբեմ
Այս՝ քեզ արժանի իմ հեգ ճակատից
Հետքերն երկնային կրակի դժվեմ,—
Ու երկիրն՝ հավետ ազատված ինձնից,
Թող անդիտությամբ ծաղկումն ավարտի։
Օ՜, հավատա ինձ, միակն եմ ես դեռ,
Որ քեզ հասկացա, գնահատեցի,
Եվ քեզ ընտրելով սրբությունս անմեռ՝
Իշխանությունս ոտքիդ տակ դրի։
Սիրուդ վայրկյանի փոխարեն ահա
Հավերժությունն եմ քեզ նվեր բերում,
Ես սիրո մեջ էլ կլինեմ բարձրագահ՝
Ինչպես շարության մեջ էի անհուն։
Ես, որ որդին եմ ազատ՝ երկրի՝
Կտանեմ ես քեզ աշխարհն աստղերի,
Եվ դու՝ առաջին իմ ընկերուհին՝
Կդառնաս աստղե երկնի թագուհին,
Եվ անդ անտարբեր դու քո բարձունքից,
Կսկսես նայել այս երկրի վրա,
Ուր երջանկության չկա հետքն անբիծ,
Եվ ուր գեղեցիկ հավերժը չկա,
Ուր ագահությունն ու ոճիրն են միշտ...
Ուր կյանքն անցնում է փոքրիկ կրքերով,
Որտեղ առանց վախ՝ երբեք ճշմարիտ
Ոչ ատել դիտեն, ոչ սիրել հոգով,

Չգիտե՞ս գուցե թե ի՞նչ է արդյոք
Մարդկային սերը՝ մի վայրկյան է լոկ,
Լոկ երիտասարդ արյան վառ մի խաղ,
Օրերը կանցնեն՝ կհանգչի խաղաղ...
Եվ անջատումին ո՞վ կդիմանա,
Կամ հրապույրին նոր գեղեցկության,
Ծանր ձանձրույթին, կամ հոգեհմա
Երազանքների երթին ինքնիշխան,—
Օ՜, ո՛չ, իմ ոգու դու նոր զուգընկեր,
Ճակատագիրը քեզ չի սահմանել
Լռին թառամել այս անձուկ հովտում,
Սառը մարդոց մեջ, խանդի ոլորտում,
Փոքրոգի ընկեր-բարեկամների,
Եվ թե թշնամի նենգ վտառի մեջ
Անպտուղ հուսո և կույր ահերի,
Անլույս տքնության ու ոգորումի
Որմերի ետև՝ քո այս մենությամբ
Չե՛ս հանգստանա՝ առանց կրքերի՝
Աղոթքների մեջ՝ հավասար անջատ,
Դու մարդուց և թե աստվածությունից,
Օ, ոչ, դու չքնաղ, անզուգդ իմ էակ,
Ուրիշ բախտի ես վերուստ սահմանված,
Քեզ սպասում է ուրիշ մի բերկրանք,
Ուրիշ խնդություն մի չտեսնված,
Ուրեմն ձգիր երկրային բախտին,
Ցանկություններդ, հուշերդ նախկին,
Եվ նրանց խղճուկ լույսը մոռացիր,
Նրանց փոխարեն կբանամ քո դեմ,
Մեծ իմաստության անդունդներն անծիր,
Ու ոգիների ամբոխս հպատակ,
Կվխտա այնտեղ քո ոտքերի տակ,
Եվ նաժիշտներս թռվիչ ու թեթև,
Քեզ, ով գեղուհիս, կբերեմ պարգև,
Եվ արևելյան աստղերի գլխից

Կխլեմ ոսկյա թագը քեզ համար,
Եվ ծաղիկների ցող աղամանդից
Գինդեր կպճնեմ քո թագին, Թամա՛ր.
Եվ վերջալույսներն իմ վարդափթիթ՝
Գոտի կհյուսեմ քնքուշ խրանիդ,
Եվ թող քեզ համար՝ նեկտարով բուրյան
Մաքրվի, լցվի օդը եթերյան.
Եվ հրաշալի, քնքուշ նվագով
Կշոյեմ միշտ քո լսելիքն հոգով,
Եվ կկառուցեմ՝ ի տեղ այս բերդի՝
Քեզ ապարանքներ փիրուզ ու սաթի,
Ու ծովի խորքը կսուզվեմ ես մերթ
Եվ մերթ աստղերից էլ վեր կսուրամ,
Ո՞ղջ երկնայինը քեզ կտամ հավետ,—
Միա՜յն թե սիրի՛ր, ինձ սիրի՛ր միայն։

ՁԻՆՎՈՐԻ ԿԻՆԸ

(Լիրայի—պո-ից)

Սպիտակ վարդ էր ասեղնագործում
Հուսամուտի դեմ զինվորի մի կին,
Եվ ասեղն ահա իր մատն է ծակում՝
Արյունն է թափում սպիտակ վարդին։

Ա՜խ, ուշքն ու միտքը հեռու էր թռել՝
Այնտեղ ուր հիմա իր մարդն է կռվում,
Ու թվաց մի պահ թե մարդը խոցվել
Ու հիմա նրա արյունն է թափվում։

Ոչ, ձեռագործը ցած նետեց ահա,
Նա ռտնատրոփ լսեց նժույգի՝
Իր քաջն է գալիս... Ախ, ոչ, այդ նրա
Սիրտն էր արոփեց վանդակում կրծքի։

Ու նորից ուզեց ասեղնագործել,
Բայց կարմրել էր վարդը սպիտակ,
Եվ արցունքներն են մարգարիտ դարձել
Այն վարդի վրա՝ կարմիր ու հերմակ։

ՄԵՐԱՆԻ

(Բարաթաշվիլուց)

Անուղի և անդարձ սլանում, անցնում է իմ նժույգ Մերանին,
Ախ, առա՜ջ, հալածված իմ սրտի փախուստին սահմաններ էլ
չկա՜ն,
Սլացի՜ր՝ խռովյալ ու տխուր մտքերս տուր համա՜յն հողմերին,—
Ագռավը շարագույժ՝ իմ հետքից տագնապով կռնչա թող ունայն...

Հեծեծող հովի պես հեռացիր ոսկեղեն հեռուներն երազիս,
Մի՛ նայիր թե հոգնած, բեկված է իմ հոգին, սլացիր անխռով,
Քեզ համար ոչի՜նչ են վիհերի պես բացվող խութերը ճամփեքիս,
Օ՜, թռի՜ր, իմ Պեգաս, հեռացիր Նառի պես խոհերիս քարվանով։

Հալածված ամպի պես՝ տար անօգ ստվերս անապատ ու ծովեր,
Տա՜ր քեզ հետ հեծվորիդ, տա՜ր վհատ իմ հոգին, տա՜ր սիրտս
վիրավոր,
Հայրենի իմ երկրից դեռ լույսը չբացված՝ հեռանա՜մ կարևեր,
Հեռանա՜մ ընկերից, ծանոթից դավադիր ու սիրուց նենգավոր...

Իմ սրտի գաղտնիքը, իմ ցավերը բոլոր՝ կպատմեմ աստղերին,
Որոնք ինձ ուղեկից՝ կարեկցող հայացքով վշտերս կցրեն,
Սլացիր, Մերանի, հեռացիր՝ թող անդարձ իմ բոլոր ճամփեքին
Զարատանջ իմ սիրո հուշերի հո՜ւշե՜րն էլ կյանքի հետ մոռացվեն։

Սլացիր՝ կարճելով քո ամեն մի քայլով սև օրեր՝ իմ կյանքի,
Հեռացիր աննահանջ ու պատիր հույսի դեմ մի պահ էլ չկա՜նգնես,

Եվ ուր էլ սևանա, մթագնի իմ գլխին վրանը երկնքի՝
Այնտե՞ղ է իմ տունը՝ հայրենիք չունեմ ես...

Օ՜, թռիր, մի գթա հոգնատանջ հեծվորիդ, սլացի՜ր, տա՜ր նրան,
Չթաղվեմ թող կողքին հարազատ իմ մասունք վշտահուշ պապերիս,
Ցիների երամը թող փորե ինձ համար մի անհայտ գերեզման,
Չտեսնեմ օձեղեն ժպիտը մտերիմ, նենգ լացը սիրածիս։

Թող բախտից նզովված՝ չքանամ հավիտյան մոռացյալ մի հեռվում,
Թող վրաս սիրածիս արցունքի փոխարեն՝ սև ամպի աչքը լա,
Սլացիր՝ հեռանանք, իմ խաբված հույսերի սև ճրագն է մարվում,
Սահման չէ ճակատագիրն, իմ սիրտը խելահեղ՝ էլ ստրուկ չի մնա...

Ունայն չէ իմ փախսը,իմ հոգու տագնապը արահետ կբանա
Իմ հոգուն երբևէ բարեկամ մի սրտի, մի անհայտ ստվերի,—
Որ նա էլ լկվելիս՝ սև բախտին դիմադիր՝ համարձա՜կ հեռանա՝
Կարճելով վշտահար ճանապարհն հոլմածեծ իր կենաց օրերի։

Իմ նժույգ Մերանին սլանում, թռչո՜ւմ է, ինձ փախցնում անկայան,
Հետևից չարագույժ ագռա՜վն է կռնչում՝ սև բախտի տագնապով,—
Օ՜, թռի՜ր, Մերանի, հեռացի՜ր ու անդարձ ինձ փախցրո՜ւ հավիտյան՝
Փոթորկվող մտքերս անհայտ ու ամայի ճամփեքին ցրելով...

1945 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Էքսպրոմտ (Վ. Ի. Լենինին) 3
2. Էքսպրոմտ (Ի. Վ. Ստալինին) 5

Հայրենական

3. Ամենայն անգամ 9
4. Կշեռք 10
5. Հին աշխարհ 11
6. Մենք խաղաղ էինք 12
7. Օտար ափերի 13
8. Բանաստեղծի ձայնը 14
9. Ախ, երբ ընկնեմ 16
10. Տարեքք 17
11. Կովի դաշտի մեջ 19
12. Իմ սուրբ հայրենիք 20
13. Գիշեր է կես 21
14. Մեծ Ստալինին 22
15. Խաղաղություն 23
16. Կուզեմ ծաղկի պես 24
17. Երևանի բերդի տակով 25
18. Ես եղեգն էի 26
19. Երևանի շոգը 27
20. Քամին ասաց մանուշակին 29
21. Թող ձայնս 30
22. Ժողովրդին 31

ՄԱՅՐԻԿԻՑ

23. Հովերն հարավի 35
24. Երբ ես էլ 36
25. Հույս 37
26. ...Եվ տարիք անցան 38

27. Մայրս ծերության 39
28. Մայրն ընդդեմ մահի 40
29. Բալլադ 42
30. Մայրս ոչ մի 43
31. Ամեն անգամ 44

ՍԵՐ

32. Կարոտներս լամ 47
33. Աչքերիդ համար 48
34. Աղավնիներ 49
35. Արդեն իմն ես 50
36. Դու շրթունքներ ունես 51
37. Արտիս ալեոր 52
38. Թե մահիցս հետո 53
39. Խոշոր ու բիլ 54
40. Աղավնիները 55
41. Այս մարմարե 56
42. Ախ Շամիրամ 57
43. Դեռ այնքան չինչ են 58
44. Միթե բեզնից 59

ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

45. Տխուր տրտում 63
46. Ինքնեղգություն 64
47. Հին մանկություն 65
48. Հե՛յ կարկաչող առուներ 66
49. Ջուր ծախողը 67
50. Հորս հիշատակին 68
51. Մանուկ էինք 69
52. Նոր մանկություն 70
53. Իմ Արայիկին 71
54. Վարդերի մեջ 72
55. Դու ազնիվ 73
56. Ախ իմ բալիկ 74
57. Այն տունը տուն չէ 75
58. Ժառանգ 76

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ

59. Գանգուխտի երգը 79
60. Զյունն էլի հալվեց 80
61. Գանգուխտ հայը 81
62. Էքսպրոմտ 82
63. Դյուցազն Բաղրամյանին 83
64. Դեպի բնորրան 84
65. Որն է բաբո մեր հայրենիք 86

ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏ

66. Զյունը լալիս է 91
67. Վայրէջք 92
68. Գարնանամուտ 93
69. Գարունն արևով 94
70. Ճանապարհս դեպի ծով 95
71. Ժայռից ցրվեցը 96
72. Բանաստեղծի սերը 97
73. Իմ բարի, իմ ջերմ 98
74. Երբ միշտ սիրատարփ 99
75. Տուն վերադարձան 100
76. Թագադրում 101
77. Ջահելության երգը 102

ՏԱՂԵՐ

78. Ասում են թե 105
79. Հանգիստ չէ Գանգեսը 106
80. Հայրենիք և սեր 107
81. Ոտքը դարնան 108
82. Ես էլ աշխարհ տաղով եկա 109
83. Շաղ ու կղա՜ 110
84. Հայաստանի աղջիկները 111
85. Արձան Աբովյանին 112

ԽՈՀԱԿԱՆ

86. Լենին 115
87. Խոհ 116
88. Հայրենախոս 117
89. Քարը 118
90. Իմ երազի մեջ 119
91. Այնպես խաղաղ 120

92. Ձյունից 121
93. Երբ ես էլ մտա 123
94. Երբ օրերում իմ 124
95. Բնության ձայնը 125
96. Ամպերն ուզեցին 126
97. Արծիվ լեռների 127
98. Իմ բույնը դրի 128
99. Հայրս ինձ ոսկի 129
100. Եռհ 130
101. Արծիվը թառել 131
102. Միտք եմ անում 132
103. Թանգարանում 133
104. Երբ դեռ փոքր էի 135

ՄԱՐԴԸ

105. Արծիվն ու մարդը 139
106. Այն օրից 140
107. Իմաստության մեղեդին 142
108. Մենակ չեմ կարող 145

ՊՈԵՄՆԵՐ

109. Հրազդան 149
110. Բաղձանք 156
111. Սիամանթո և խաչեզարե 161
112. Պոեմ անխորագիր 181

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ

113. Նապոլեոնի փախուստը Ռուսաստանից 193
114. Դաշույն 196
115. Մոսկվա, Մոսկվա 197
116. Կալաշնիկովի երգը 198
117. Դևը 217
118. Դևը Թամարին 218
119. Դևի երդումը 220
120. Զինվորի կինը 224
121. Մերանի 225

Պատ. խմբագիր՝ Գ. Բորյան
Տեխ. խմբագիր՝ Ս. Լաբոյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Հ. Գոլուխանյան

ՎՖ.02304 պատ. 651. տիրաժ 5000, 14½ տպ. մամ.
հրատ. 13 մ. հանձնվ. է արտ. 25/XII-48 թ.,
Ստորագրված. է տպագրության 20/IX 49 թ.

Հայպոլիգրաֆհրատի վարչության №1 տպարան, Երևան,
Լենինի փող. № 65

ԳԻՆԸ 8 Ռ. 50 Կ